

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԶԻՕՍԱԼԻ

Տ Ե Տ Ր Ե Կ Ն Ե Ր

ԺԹ.

ՄԵՆՆԱՆ ՆԵՐՍԷՍ

Ե Ի

Հ Ե Յ Ե Ս Տ Ե Ն Ի Վ Ր Ե Յ

Ո Ւ Ն Ե Յ Ա Ծ

Ե Ջ Պ Ե Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Բ

Ա Հ Ի Ա Տ Ա Ս Ի Բ Ե Ա Յ


Հ. ՂԵՒՈՆԳ Վ. ՅՈՎՆԱՆԵԱՆ

ՄԻՒԹ. ՈՒՍԵՆ

Վ Ի Է Ն Ն Ե

ՊԵՇԱԳԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԼՆԻԲԸ

1851 ՌՅ.



ՄԵԾ՝Ն ԿԵՐՍԷՍ

U. S. DEPARTMENT OF AGRICULTURE

9(47.925) [հտնարտես Մեծ]

3-86

Գիրքը Դարձրել է Կրթական

Մեծն Կեբուս

2

Ե Ի

ՄՏՈՒԳՎԱՄ Է 1981 թ.

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Վ Ղ Բ Ա Յ

Ո Ի Ն Ե Ց Ա Շ

Լ.Օ.Գ.Ե.ՅՈՒԹ.Ի.Ի.Ն.Բ.

Ա Շ Խ Ա Տ Ա Ս Ի Բ Ե Ա Ց

Կ. Գ. Ե. Ի. Ո. Ն. Գ. Վ. Յ. Ո. Վ. Ն. Ե. Ն. Ե. Ն.


Մեծն. Ուսման



Վ. Ի. Ե. Ն. Ե.

ՊԱՇՏՊԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

1851 Ռ.Յ.



13647
A
442

U. S. DEPARTMENT OF THE INTERIOR

GENERAL LAND OFFICE

WASHINGTON, D. C.

OFFICE OF THE ASSISTANT SECRETARY

WASHINGTON, D. C.



WASHINGTON, D. C.

OFFICE OF THE ASSISTANT SECRETARY

WASHINGTON, D. C.

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ

Ե Ի

Հ Ե Յ Ե Ս Տ Ե Ն Ի Վ Ր Ե Յ

Ո Ի Ն Ե Յ Ա Մ

Ա.Օ.Գ.Ե.Յ ՈՒԹԻԻՒՆԸ

ՊԱՏՐՈՒԹԵԱՆՅ մէջ շատ անգամ առջեւնիս անձինք կ'ելլեն, որոնց անուան հետ անանկ քաղցր յիշատակներ եւ այնչափ մեծարոյ գաղափարներ անքակ միացեալ են, որ կարծես [թէ հետերնին ի բնէ կապուած է նաեւ ուրիշներուն սրտին մէջ սէր եւ մեծարանք շարժելու յատկութիւն մը, այնպէս որ մարդ անոնց անունը լսելուն պէս՝ վրանին մեծ յարգութիւն ու բերում կը զգայ: Մեր ազգային պատմութեան մէջ ալ ասանկ անձինք շատ կը գտնուին. բայց չենք սխալիր՝ [թէ որ անոնց առաջին կարգիններուն մէջ դասենք զՄեծն Ներսէս, զորն որ իրաւամբ կրնանք Արշակունեաց ցեղին երեւելի պարծանքներէն եւ Հայաստանեայց եկեղեցւոյ չքնաղ զարդերէն մէկը համարիլ, եւ որուն համար արդէն իր վարուց հին ու ժամանակակից մանաւանդ [թէ կենակից պատմիչը կը համարձակի ըսել որ «Դրեն նման երբեք ուրիշ մէկն եղած չէ Հայաստան երկրին մէջ»,¹:

¹ Բուզանդ, Գ. Դպր. Գ. ԳԼ. 79:

Աս պատճառաւ պատշաճ սեպեցինք նոյն նշա-
նաւոր ու սուրբ Հայրապետին վարքը հրատարակել,
յուսալով որ կրկին նկատմամբ հաճելի կ'ըլլայ ազ-
գայնոց: Մէյ մը՝ վասն զի ասոր մէջ կը տեսնեն աս
հոյակապ Անձին վեհ ձիրքերն, սքանչելի առաքինու-
թիւններն ու գործած երեւելի գործքերը, որոնք
գուցէ շատերուն անձանօթ ըլլան: Մէյ մ'ալ՝ որ
կը գտնեն իր ժամանակին (35—40 տարւան, այս
ինքն՝ 350—390) Հայոց պատմութեան զխաւոր
դէպքերը. որովհետեւ Մեծն Ներսէս իր աստիճա-
նաւն ու գործածներովը գրեթէ բոլոր կենացը մէջ
Հայաստանի բախտին վրայ մեծ ազդեցութիւն ըրած
ըլլալով, իր վարուց հետ մէկտեղ հարկաւ կա-
պուած պէտք է որ ըլլան մեր ազգային պատմու-
թեան նոյն ժամանակուան դէպքերը: Ասոր համար
ալ է որ գրուածներնուս անունը գրինք Մեծն Ներ-
սէս է- Հայաստանի վրայ ունեցած ազդեցութիւնը:

Ար յուսանք որ աս գրուածքիս մէջ երեւցած
անզուգական լաւութիւնները չէ թէ միայն զարմա-
ցողներ՝ հապա նաեւ հետեւողներ ալ կը գտնեն, եւ
իւրաքանչիւր ոք իր վիճակին ու աստիճանին համե-
մատ՝ կը ջանայ գոնէ հեռուանց նմանիլ ան սքանչելի
առաքինութեանց եւ զգուշութեամբ փախչիլ ան
մոլութիւններէն, որոնց երկուքին ալ հետեւու-
թիւնները յայտնի կերպով կը տեսնուին աս պատ-
մութեան մէջ:

Գ Լ Ո Ի Խ Ե

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ ՄԻՆՉԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆՏՐՈՒԻԼԸ



Ս. Յուսէպի — Իր Իրիւս — արդէ՛ք: — Երանելի Հայր-պետք ի զժի-
ւերսն: — Մեծին Ներսէսի շնորհք: — Կրթութեւն հա՛մար Կե-
սարէս ի խորսն: — Ս. Յուսէպի ի Նահապետի: — Ներսէ-
կոսոսանքն զՍուրբ Սուրբ Սուրբ Սուրբ Սուրբ: — Հայր-պետք
ի զԳառնայ: — Իր Իրիւսելի աստիճանի ներսն աստիճանի
Յերտերք:



ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՄԵԾ՝ Ս. Գրիգոր Լուսաւորչին
Թոռան Թոռն էր: — Ս. Յուսէպի Հայրապետք,
Ս. Գրիգոր Լուսաւորչին Թոռն ու Ս. Վրթանիսին
որդին, երկու երկուորեակ որդիք ունեցեր էր, որոնց
անուանքն էին Պապ եւ Աթանազիոսէս: Ասոնք՝ իրենց
ընտանեաց իրբու ընտարոյս եղող առաքինութեանց
հետեւելով՝ հօրերնուն մխիթարանք եւ տներնուն
պարծանք ըլլալու տեղ՝ ան ժամանակուան մարդ-
կան ապականեալ բարուց ետեւէն երթալով, իրենց
չար ընթացքովը մեծ ցաւ կը պատճառէին Ս. Հայ-
րապետին, որն որ զիրենք շատ անգամ խրատելէն,
յորդորելէն, յանդիմանելէն ետեւ՝ տեսնելով որ ա-
մենայն ինչ անօգուտ է, անոնք իրենց անօրէնու-
թեան ճամբէն ետ դառնալէք չունին, անհնարին
խոր տրամութեան մէջ ինկաւ, եւ միշտ աղօթքով
Աստուծոյ կը դիմէր, եւ իր վշտացը սփոխանք ու
մխիթարութիւն կը խնդրէր: Նոյն մխիթարութիւնը
չատ չուշացաւ:

Ասոր վրայ Բուզանդ եւ Մեարոպ Երեց հե-
տեւեալ կերպով կը խօսին: Երբ որ, կ'ըսեն, Ս. Յու-
սէպի իր զաւկներուն անպիտան ու անուղղայ ըլլա-
լուն վրայ կը տրամէր եւ հողալով աղօթք կ'ընէր,
զիչեր մը իրեն հրեշտակ մ'երեւցաւ եւ ըսաւ. Որ-

դւոյդ վրայ շատ մի տրամիր. անոնցմէ զաւակ մը պիտի ծնանի՝ որն որ գիտութեան լուսաւորութիւնը պիտի տարածէ եւ Հայաստան աշխարհին՝ հոգեւոր խնաստութեան աղբիւր պիտ'որ բլլայ: Ինք եւ իր որդիքը եկեղեցւոյ շինութեան ու հաստատութեան պատճառ պիտ'որ բլլան, եւ շատ մնորեալք իրենց ձեռօքն առ Աստուած պիտի դառնան: Եկեղեցւոյ սիւնք պիտ'որ բլլան, Քրիստոսի պաշտօնեայք եւ Հոգւոյն սրբոյ արբանեակք: Եկեղեցւոյ դրախտին մէջ իրենց ձեռօքը շատ պողպարեր ու օգտակար տնկեր պիտի տնկուին եւ Աստուծմէ օրհնուին¹:

Ասով մեծապէս մխիթարեցաւ ու քաջալերեցաւ Ս. Յուսիկ. եւ թէպէտ իր որդւոցն անօրէնութիւններուն օրէ օր սաստկանալը տեսնելով՝ մարդկօրէն մտածմամբ իրեն անհնար կ'երեւար որ անոնց մէկէն այնպիսի որդի մը ծնանի, ի վերայ այսր ամենայնի՝ ինչպէս որ երբեմն Աբրահամ հաստատուն ակնկալութեամբ կը սպասէր որ Աստուած խոստումը կը կատարէ՝ իր ամուլ ամուսնոյն զաւակ տալով, նոյնպէս ինքն ալ հաստատութեամբ կը յուսար որ իր շար ու անօրէն որդիներէն ան օրհնեալ շառաւիղն յառաջ գայ: Մտածելով միանգամայն թէ Աստուած՝ որ իր անքնին խորհուրդներովն Անակայ տիրասպանին որդին Հայաստանեայց Լուսաւորիչ եւ առաքեալ ըրաւ, կրնայ նաեւ իր անուղղայ զակիւններէն անոր արժանաւոր յաջօրդ տալ:

Պայպ եւ Աթանազինէս աշխարհք մտնելով, Տիրան թագաւորին Վարազդուխտ ու Բամբիշն քոյրերն առած էին: Պայպ զաւակ չունեցաւ, ուստի եւ Աթանազինէս եղաւ ան մթութեան ու խաւարին անդունդը՝ որմէ Աստուած Հայոց աշխարհքին լուսաւոր արեւ մը հասնեց, ան անարժան դործիքը՝ զորն

¹ Բուզանդ, Գ. Դպր. Ե. ԳԼ. 12: Մեսրոպ Երէց, ԳԼ. Ա. 3. 4:

որ Ամենակալը ձեռք առաւ շնորհելու համար մեզի զՄեծն Ներսէս: Տեսաւ Յուսիկ աս իր աղօթից ու արտասուաց պտուղը, եւ կարծես թէ անոր շնորհալից ու գեղեցիկ երեօաց վրայ մարգարեական հոգւով մը նկատելով որ երբեմն ինչ բարձրութեան ու կատարելութեան պիտի հասնի, մխիթարեցաւ, զուարթացաւ եւ օրհնեց զԱստուած:

Նոյն ժամանակէն սկսաւ աս խնամտո հայրն իր թուան փափուկ սրտին մէջ առաքինութեան սերմանքը անկելու ջանալ, եւ մեծապէս կը զգուշանար որ շուրջ թէ իր հօրն ու ազգականաց անարժան վարքն անոր վրայ ալ ազդեցութիւն մ'ընէ: Աս պատճառաւ երբ որ Ներսէս քիչ մը մեծցաւ, թէ ճնողացը քովէն բոլորովին հեռացընելու եւ թէ անոր հիմնովին աղէկ կրթութիւն տալու համար՝ առաւ Աեսարիա խաւրեց: Այսպէսով ինչպէս որ նոյն քաղաքն երբեմն անոր նախահաւն իր պարիսպներուն մէջ ընդունելով՝ զինքը հալածողներուն սրէն ազատեց եւ Հայաստանեայց առաջին Լուսաւորիչ պատրաստեց, այսպէս ալ հիմա մտլութեանց ճանկէն փախչող պատանւոյն ապաստանարան եղաւ եւ Պրիգորի աթոռոյն աթոռակալ յարգարեց:

Նայց ափսոս որ Յուսիկ աս իր այնչափ հոգով եւ փութով մշակած ու մշակել տուած անկոյն պտուղները չկրցաւ տեսնել: Երբ որ իր թուան իր ուսումնական յառաջագիմութեամբն եւ սքանչելի առաքինութիւններովը բոլոր վարպետներն ու աշակերտակիցները կը սխրացընէր, ինք իր պաշտօնին եւ աստիճանին համաձայն՝ թագաւորին անկարգ ընթացքը յանդիմանելուն եւ մանաւանդ եկեղեցւոյ մէջ հեթանոսական պաշտամունք խոթելն աստուածային նախանձաւորութեամբ արգելելուն համար՝ շարաշար մահուամբ սպանուեցաւ: Աւելի կրնայ իմացուիլ քան թէ խօսքով յայտնուիլ Ներսէս պատանւոյն աս ա-

ղէտալի մահուան վրայ ունեցած ցաւն ու կսկիծը .
ամէն մէկ պարագան իբրեւ մէյ մէկ սուր իր հայրա-
սէր ու հայրենասէր սիրտը խորունկ կը խոցէր : Աոր-
սընցընել ան միակ անձն՝ որն որ իր հօրմէն աւելի
իր վրայ խնամք ունեցեր էր, եւ որուն մէկ ժպիտն
իրեն աշխատութեանց մեծ վարձք կը սեպէր . կոր-
սընցընել բոլոր ազգին հետ մեկտեղ հսկող եւ ի-
մաստուն հովիւ մը՝ որուն խոհեմ առաջնորդութեան
այնչափ մեծ կարօտութիւն կար, եւ կորսընցընել
իրեն մօրեղբայրն եղող թագաւորին ձեռօքը, զորն
որ կը բաղձար յարգել ու սիրել :

Հաւանական է որ այսպիսի խորհրդոց ու զգած-
մանց մէջ էր 'Ներսէս' երբ որ իր ուսմունքն ու կրթ-
ութութիւնը Աեօսարիա լմնցուց . ուստի եւ ասանկ վի-
ճակի մէջ չկրնալով իր հայրենիքը դառնալ՝ Ասս-
տանդնուպոլիս գնաց : 'Նոյն քաղաքը քիչ մը վեր-
ջը տեղւոյն երեւելի իշխաններէն Ասպիոն անուն մե-
կուն աղջկան հետ կարգուեցաւ, որմէ ծնաւ Ս . Սա-
հակ հայրապետ : Ամուսնանալէն երեք տարի վերջը
աները մեռնելով՝ 'Ներսէս ալ չկրցաւ աւելի երկայն
ատեն հայրենիքէն հեռու կենալ, եւ ընտանեացը
հետ ելաւ Հայաստան դարձաւ : Իր մօրեղբօրորդին
Արշակ՝ որն որ հօրը Տիրանայ յաջորդած էր, իր դա-
լը լսելուն պէս՝ քովը կանչեց եւ անմիջապէս զինքն
իրեն սենեկապետ ու բոլոր թագաւորական պալատան
գործակալ ըրաւ :

'Նոյն ժամանակէն այնպիսի պայծառ առաքինու-
թեանց ու սքանչելի ձրից տէր էր 'Ներսէս եւ ամէն
բանի մէջ անանկ կատարեալ՝ որ մարդ հազիւ կրնայ
հաւատալ թէ մէկ անձի վրայ, ան ալ երիտասար-
դի ու պալատականի մը վրայ ժողովուած ըլլան այն-
չափ շնաշխարհիկ հանգամանքներ : Աստուածսիրու-
թիւնն ու եղբայրսիրութիւնը սրտին մէջ հաւասար
սաստկութեամբ վառուած ըլլալով, աս երկու-

քէն յառաջ հու գային իր ամէն գործքերը: Ան-
ձանձրոյթ էր բարեգործութեանց մէջ, Աստուծոյ
ճշմարիտ եւ իմաստուն նախանձն ունէր ու Հո-
գւով սրբով կ'եռար. խիստ երկկեղած էր եւ բո-
լոր պատուիրաններուն ճիշդ ու զգուշաւոր աւան-
դապահ: Իսկ ընկերօրութիւնն անանկ սաստիկ էր
որ իրօք ի գործ կը դնէր Անարարին խրատը՝ բոլոր
ընկերներն իբրեւ իր անձը սիրելով: Չափէ գուրս
աղքատասէր էր եւ ան աստիճանի գութ ու խնամք
ունէր կարօտելոց եւ շքաւորաց վրայ, մինչեւ իր
զգեստաներն ու կերակուրն անոնց կը բաժնէր. բոլոր
վշտացելոց ու տառապելոց օգնութիւն եւ պաշտ-
պանութիւն կ'ընէր, ամէն որբոց, այրեաց ու զրկե-
լոց ջատագօյն ու փաստաբանն էր: Եղբայրսիրու-
թեան հետ մէկտեղ միացեալ էր արդարասիրութիւնն
ալ, որով ամենեւին մէկու մը ակնառութիւն չէր
ըներ, եւ միշտ յամենայնի ուրիշներուն իրաւանց միտ
կը դնէր: Աերջապէս իր համեստութիւնն ու զգաս-
տութիւնը, հեզութիւնն ու քաղցրութիւնը, ցածնու-
թիւնն ու խոնարհութիւնը՝ իբրեւ մէյ մէկ անգին
ազամանդ վրան կը փայլէին¹:

Թէ որ մարդ մէկ կողմանէ նոյն ժամանակուան
Հայոց թագաւորներուն արքունեացը վիճակին միտ
դնելու եւ մէկալ կողմանէ բոլոր պատմագրաց Ներ-
սիսի վարուց անարատութեան ու գերազանց առա-
քինութիւններուն տուած գովեստները կարդալու ըլ-
լայ, չհիրնար զարմանալէն զազրիլ թէ ի՞նչպէս այն-
պիսի ապականութեանց մէջ անանկ անարատ ու
սուրբ մնաց: Ստուգիւ ան արքունիքն իբրեւ հալոց
մ'եղաւ, որուն մէջ իր առաքինութեանց ոսկին զտուե-
ցաւ, եւ աւելի եւս պայծառ փայլելով՝ ամենուն
աչքին սքանչելի ու սիրալի կ'երեւար: Մինչեւ ա-
նոնք ալ՝ որոնց իր առաքինութիւնն հանապազօրեայ

¹ Բուզանդ, Գ. Դար. Գ. ԳԼ. 68, 69:

յանդիմանութիւն էր, զինքը մեծապէս կը յարգէին ու կը սիրէին:

Մարծես թէ բնութիւնն ալ հոգացած՝ յառաջունէ իրեն աս բարձր ու չքնաղ առաքինութեանց համեմատ՝ վեհ ու շնորհալից կերպարանք մը տուած էր, այնպէս որ իր հոգւոյն վայելութեան ու վսեմութեան համաձայն էր նաեւ արտաքին երեւոյթն ալ: Անանկ մէկ շնորհք մը զեղեալ էր բոլոր իր անձին վրայ, որ երեսը նայողը՝ յարգական երկիւղ ու մեծարանօք խառն սէր մ'ունենալու կը ստիպուէր: Մանաւանդ երբ որ իր պաշտաման վայելուչ ու փառաւոր նշանազգեստն հագած, արքունական ոսկեպատեան սուրն ականակապ մարգարտազարդ կամարաւր բռնած՝ հանդիսութեանց օրերը թագաւորին քովը կը կենար, ամենուն աչուններն իր վրայ կը սեւեռէին եւ բոլորին սրտերն իրեն կը թռչէին:

Ահա ասանկ մէկն էր Մեծն Ներսէս իր երիտասարդութեան ու արքունեաց մէջ եղած ատեն: Աստուած՝ որ բոլոր մարդկեղէն դէպքերն իր յաւիտենական իմաստութեամբը կը կարգադրէ եւ որուն գործքերը միշտ հեռուանց անտես եղանակաւ կը պատրաստուին, աս կերպով կը պատրաստէր մեծ երկրի մը ժողովրդեան արթուն հովիւ մը, իմաստուն բժիշկ մը, առաջնորդ մը, մխիթարիչ մը:

Գ Լ Ո Ւ Խ Ի Ր .

Ս . ՆԵՐՍԷՍ ԿԱԹՈՒՂՈՒԿՈՍ Կ'ԸԼԼԱՅՑ

Կաթողիկոս : — Ս . Գանկել կաթողիկոս ի շնորհովս ու ի շնորհովս : — Փառեն : — Պապայ ու Աթոնափինեայ հոգի : — Տէրանայ Գահե՛ն էյնուն ու Արշակայ Բաթմարելլա : — Ս . Ներսէս կաթողիկոս ի շնորհովս : — Շար դէ՛մ դնելէն երբե՛ն նոյն շանր պաշտօնն յանյն կ'առնէ : — Կեաարիս երկուն ու յերանորոտելլա : — Բարբ երկրէն ու շնորհովսն վրայ սանեցա՛ծ սարախովսնը :

ՎԱՍԻ որ Ս . Գրիգոր Լուսաւորիչ քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ տարածած էր, հայրապետութեան կամ կաթողիկոսութեան աստիճանն իր ցեղին մէջ կը մնար . Արիստակէս, Արթանէս, Յուսիկ՝ ետեւէ ետեւ ան բարձր աթոռն ելլելով՝ իրենց հօրը կամ պապուն առաքելական ջանքն ու քարոզութիւնը յառաջ կը տանէին եւ աշխարհին լուսաւորութեան եւ ուղղութեան կ'աշխատէին : Աս իրենց լաւութիւնն ու առաքելաջան վաստակն ամենուն այնպէս յայտնի էր, որ թէպէտ՝ նախարարաց ու թագաւորաց անկարգութիւններուն դէմ ելլելուն համար՝ իրենց կենացը դաւաճանութիւն կ'ընէին եւ կը մեռցընէին իսկ, բայց ետքը նոյն իսկ ան դաւաճաններն ու սպանիչները ամէն կերպով կը ճգնէին որ դարձեալ անոնց ցեղէն մէկը յաջորդէ :

Արդ երբ որ Ս . Յուսիկ սպանուեցաւ, սկսան ըստ սովորութեան ետեւէ իյնալ որ անոր որդիներէն մէկը իրեն տեղն անցընեն : Բայց անոնք, ինչպէս յառաջ տեսանք, այսպիսի սրբազան աստիճանի մը բոլորովին անարժան ըլլալով եւ ցեղին մէջ իրենցմէ զատ չափահաս մարդ չգտնուելով, հարկ եղաւ որ ուրիշ մէկը կաթողիկոս դնեն : Ուստի եւ ամենուն հաւանութեամբն ընտրուեցաւ ծերունին Գա-

նիէլ, որն որ թէպէտ ազգաւ ասորի էր, բայց Ս. Գրիգորին աշակերտած ըլլալով՝ իրմէ եպիսկոպոս ձեռնադրուած եւ իբրեւ քորեպիսկոպոս կամ կաթողիկոսի տեղակալ դրուած էր: Սակայն աս Ս. Հայրապետն ալ՝ որն որ իր վարդապետին առաքինութեանցը ժառանգ էր եւ մինչեւ այսօրուան օրս Ս. Գրիգորի որդւոց ու թոռանց մէջ կը դասուի, երկայն ատեն չկրցաւ կենալ իր աստիճանին մէջ, մանաւանդ թէ եւ ոչ իսկ նոյն աստիճանն իրօք ընդունեցաւ: Ասան զի երբ որ կաթողիկոս ընտրուելէն ետեւ՝ առջի անգամ Տիրան թագաւորին առջեւն ելաւ, այրած սրտով եւ աստուածային նախանձու սկսաւ Ս. Յուսիկը մեռցընելուն համար սաստիկ յանդիմանութիւն տալ, եւ Աստուծոյ կողմանէ պատիժ սպառնալով՝ խրատել ու յորդորել որ խելքը գլուխը ժողովէ եւ ապաշխարութիւն ընէ. որուն վրայ թագաւորը բարկանալով՝ զինքն անմիջապէս մեռցընել տուաւ:

Իրեն տեղը կաթողիկոս դրուեցաւ Փառէն կամ Փառներօսէ հանունով մէկը, որն որ թէպէտ բարի մարդ էր, բայց ան բարձր պաշտօնին համար պահանջուած ձիրքերը չունէր, ուստի շատ տկարութեամբ ու անհոգութեամբ վարուելով՝ ժողովրդեան եւ մանաւանդ նախարարաց ու արքունեաց չարիքն եւ անկարգութիւններն օրէ օր կ'աւելնային ու կը սաստկանային: Նոյն միջոցին Պապ եւ Աթանազիսէս ուրոնց անպիտանութիւններն ալ վերջին ծայրը հասած էին, անգամ մը մէկտեղ խրախուսութեան մէջ գրտնուած ատեննին՝ եղած տեղերնին շանթ զարնելով՝ երկուքն ալ նոյն բոպէն մեռան: Իսկ Տիրան թագաւորը՝ որ հայրենիքն իր երկու լուսաւոր ջահերէն զրկած էր, Պարսիկները նենգութեամբ բռնեցին եւ աշուրներն այրելով կոյրցուցին: Ասով երկիրը մեծ շփոթութեան մէջ ինկաւ եւ հազիւ թէ վրան քիչ

մը ժամանակ անցնելէն ետեւ՝ իր որդին Արշակ կրցաւ
թագաւորել եւ տէրութիւնը խաղաղցրնել:

Արբ որ Փառէն՝ չորս տարի կաթողիկոսութիւն
ընելէն ետեւ՝ մեռաւ եւ իրեն յաջորդ ընտրելու
համար ժողովք կ'ըլլար, ժողովականք մեծէն մինչեւ
պզտիկը սկսան միաբան աղաղակել թէ Ս. Գրիգոր
Լուսաւորչին տնէն մէկը կաթողիկոս դրուի: Կարծես
թէ, կ'ըսէին, քանի որ անոնց իմաստուն առաջնոր-
դութենէն զրկուեցանք, Աստուծոյ օրհնէքը վրա-
ներնէս վերցաւ: Թագաւորին ալ զուցեցին թէ Ո-
րովհետեւ Աստուած քու թագաւորութիւնդ նորո-
գեց եւ Արշակունեաց ցեղն արքունական զահին
վրայ հաստատեց, պէտք է որ հայրապետութեան
ցեղն ալ նորէն հաստատուի: Ար յուսանք որ, կ'ը-
սէին, ասով աշխարհքիս բարոյական վիճակը կը նո-
րոգուի ու կը պայծառանայ:

Թէպէտ քիչ ատեն էր որ Ներսէս Հայաստան
դարձած էր, ի վերայ այսր ամենայնի իր չնաշխար-
հիկ առաքինութիւններն ամենուն ծանօթ էին:
Ուստի երբ որ որոշուեցաւ թէ Լուսաւորչին տնէն
մէկը հայրապետ ընտրուի, մէկէն բոլոր ժողովակա-
նաց միտքն անոր երթալով՝ միաձայն սկսան խնդրել
որ անիկա կաթողիկոս դրուի: Թագաւորն ալ աս
բանիս անմիջապէս յօժարութեամբ հաւանութիւն
տուաւ: Բայց մէկ ընդդիմութիւն մը կար, որուն
յաղթելը շատ դժուար եղաւ, այս ինքն է՝ Ներսիսի
խոնարհութիւնն եւ իր անձին վրայ ունեցած նու-
աստ համարումը: Երբ որ իրեն եկան ծանուցին թէ
կաթողիկոս ընտրուած է, այլայլեցաւ, շփոթեցաւ,
բացէ ի բաց հրաժարեցաւ, ըսելով որ Ես մեղօք ու
անկատարութիւններով լեցուն մարդ մըն եմ եւ բո-
լորովին անարժան այնպիսի նուիրական աստիճան
վերանալու: Սակայն բնականապէս՝ որչափ որ անիկա
ինք զինքն անարժան սեպելով՝ դէմ կը դնէր, այն-

չափ ալ ուրիշներուն՝ իր վրայ ունեցած համարումն ու յարգութիւնն աւելնալով՝ զինքն իրենց հովիւ ու առաջնորդ ունենալու փափաքնին կը սաստկանար: Ուստի որչափ ալ հակառակ զինեցաւ, որչափ ալ առջեւնին զանազան պատճառներ դնելով՝ զիրենք համոզելու ջանաց որ ուրիշ մէկն ընտրեն, անկարելի եղաւ մտքերնին փոխել: Աւերջապէս երբ որ տեսաւ որ ալ ճար չկայ, իբրեւ յետին միջոց մը՝ սկսաւ իրենց անօրէնութիւններն ու շարութիւններն առջեւնին դնել եւ զիրենք խստիւ յանդիմանելէն ետեւ՝ վրան աւելցուց. Գիտցած ըլլաք որ եթէ հիմակուան գէշ ընթացքնիդ չէք փոխեր նէ, ես չեմ կրնար լուռ կենալով՝ իմ պարտքս ոտքի տակ առնել եւ ձեր մեղացը մասնակից ըլլալ, հապա պէտք է որ յանդիմանեմ ու սաստեմ: Եւ երբ որ աս կերպով կը վարուիմ, ստուգիւ հիմակուան սէրերնուդ տեղ՝ որ չափէն աւելի է, հետս պիտի թշնամանաք, ինծի տաւելութիւն պիտ'որ ունենաք: Ազէկ մտածեցէք. զիս ընտրելնիդ՝ վրանիդ գլխահար թակ մը դնել է: Բայց այս ամենայն խօսքերն ալ օգուտ մը չընելով, ստիպուեցաւ յանձն առնուլ:

Նոյն հաւանութիւնը՝ մեծ դիւցազնական նուիրում մըն էր իր անձին: Ան բուպէն անշուշտ աչքին առջին եկան իր հաւուն ու անոր եղբօրը Ս. Գրիգորիսին, ինչպէս նաեւ անոնց հօրեղբօրը Ս. Արիստակէսին եւ Ս. Գանիէլին շարաշար մահը, որոնք ժողովրդեան ու թագաւորին անօրէնութիւններն յանդիմանելուն համար անագորոյն մահուամբ սպանուեցան. աչքին առջեւն եկաւ նաեւ Ս. Արթանիսին նոյն պատճառաւ կրածներն եւ միայն սքանչելեօք մահունէ ազատուլ: Եւ որովհետեւ ինքն ալ իրեն սրբազան պարտք կը սեպեր ու հաստատութեամբ միտքը դրած էր անոնց հետեւիլ, եւ միանգամայն ազէկ դիտէր որ իրեն հետ ալ նոյն կերպով պիտի վարուին, անոր

Համար կաթողիկոսութիւնն յանձն առնուլն՝ իբրեւ թէ իր մահուան վճռոյն ստորագրութիւն զնել կամ ինք զինքը դահճաց ձեռք մասնել էր: Բայց ասանկ մտածմունքներ չկրցան զինքը բռնել. երբ որ ամենուն միաբան հաւանութենէն՝ Աստուծոյ կամքն իմացաւ, վսեմ անձնուրացութեամբ մը գլուխ ծռեց եւ ինք զինքն իբրեւ զոհ մատոյց Աստուծոյ իր ազգին օգտին համար: Ընդունեցաւ Ամենակալն ասողջակէզը, եւ անոր փոխարէն՝ զինքն իր երկնաւոր օրհնութիւններովը լեցուց ու աստուածային կարողութեամբը զօրացուց, իր դժուարին պաշտօնն ըստ պատշաճի ի դործ զնելու համար:

Ընտրութիւնը կամ որոշումն ըլլալուն պէս՝ շուտ մը հին սովորութեան համաձայն՝ որն որ Ս. Գրիգորէն մինչեւ նոյն ատեն կը պահուէր, ուղեցին ՂՍ. Ներսէս Աեսարիա խաւրել, որ հոն ձեռնագրուի: Անմիջապէս թագաւորին հրամանաւը Հայր՝ մարդպետութեան մեծ իշխանը եւ Բագարատ՝ սպարապետութեան մեծ իշխանը, ուրիշ շատ երեւելի նախարարներու հետ, միանգամայն բազմաթիւ եպիսկոպոսք ու քահանայք, թագաւորին հրովարտական եւ ընտրութեան վաւերական թղթովը, հետերնին ընծաներ ալ առած՝ ճամբայ ելան զինքը Քամրաց երկիրը տանելու:

Այն տեղը հասնելին եւ ձեռնագրութիւնը Բուզանդ այսպէս կը պատմէ: Մեծ ցնծութեամբ եւ ուրախութեամբ տեղերնին հասան, կ'ըսէ, եւ հոն տեղը մեծանուն ու սքանչելի Եւսեբիոս կաթողիկոսը (արքեպիսկոպոսը) տեսնելով՝ Արշակ թագաւորին հրովարտակն ու բերած ընծաներնին անոր մատուցին: Եւսեբիոս զիրենք մեծ սիրով ու մեծարանօք ընդունելով՝ անմիջապէս ըստ կանոնաց շատ եպիսկոպոսներ ժողովեց, որպէս զի ՂՍ. Ներսէս ձեռնագրէ: Այն ատեն մեծ սքանչելիք մը պատահեցաւ.

Հազիւ թէ ամէնքն Հանդիսի եկեղեցի մտած էին, մէյ մ'ալ բարբ եկեղեցականաց ու ժողովրդեան առջևը՝ վերէն ձերմակ աղանձի մը թռաւ սեղանին վրայ իջաւ, եւ երբ որ Եւսեբիոս արքեպիսկոպոսն իր կղերովը յառաջ քալեց, աղանձին ալ սեղանէն թռչելով՝ եկաւ Ս. Բարսեղ երիցապետին վրայ Հանդչեցաւ եւ երկայն ժամանակ վրան մնաց: Իսկ երբ որ զՍ. Ներսէս ձեռնադրելու ատենը Հասաւ, նոյն աղանձին Ս. Բարսղին վրայէն ելաւ՝ Ս. Ներսիսին գլխոյն վրայ նստաւ: Աս մեծ սքանչելիքն որ տեսան, բարբ ժողովուրդն ու Եւսեբիոս արքեպիսկոպոսը զարմացան մնացին: Ամէնքը միաբերան սկսան աղաղակել թէ Գուն Աստուծոյ Հաճոյ եղար եւ իր Հոգին քու վրայ Հանդչեցաւ: Եւ աս բանիս Համար զինքը խիստ կը պատուէին. բայց անիկա ինք զինքն եղածներուն միշտ աւելի անարժան կը սեպէր¹:

Չեռնադրութեան Հանդէսը ըմբնալէն ետեւ՝ եպիսկոպոսապետն եւ իր քովինները զՍ. Հայրապետը ազնկցացը Հեռ մեծ փռուարութեամբ ու շքեզութեամբ յուղարկեցին: Երբ որ ճամբորդութիւններնուն վերջն Հասան ու Հայաստան մտան, շուտ մը աւետարելը լուրն ամէն կողմ՝ տարածուելով՝ շորս զիէն Հաղարաւոր ու բիւրաւոր մարդիկ կը ժողվէին, ճամբան անցած տեղերնին կը կենային, եւ օրհնութեան ու ցնծութեան աղաղակներով իրենց նորրնաիր Հայրն ու Հովիւր կը բարեւէին: Աս կերպով Հասան մինչեւ Աղաբաշտապատոյ մտակրը: Արդէն երեւելի իշխաններէն ոմանք յառաջ դացած՝ Ս. Կաթողիկոսին մերձենալուն աւետիսը թագաւորին տարած էին: Արշակ լսելուն պէս՝ մեծ Հանդիսի բարբ իր արքունեօքն ու եկեղեցականօք քաղքէն

¹ Այսպէս գրեթէ բառ առ բառ կը գրէ Բուզանդ, Գ. Գիր. Գ. ՔԼ. 72, 73: Նոյնն ուրիշ յաւելուածներով կը պատմէ նաեւ Մեսրոպ Երեց, ԳԼ. Բ. 19 — 21:

դուրս ելաւ դիմացը գնաց. եւ Ասիւծ բառած լե-
բան քով իրարու հանդիպեցան: Հոն մեկզմէկ սղ-
ջունելէն ու քիչ մը խօսակցելէն ետեւ՝ սաս-
տիկ ուրախութեամբ եւ շքեղ հանդիսիւ դէպ ի
մայրաքաղաք ճամբայ ելան: Ամէն տեղ բոլոր փո-
ղացներն ու հրապարակները խիտ առ խիտ բաղմու-
թեամբ լեցուած էին. ամէնքը մէյ մ'իրենց սիրելի
Հայրապետին ցանկալի երեսը տեսնել կ'ուզէին: Եւ
եթէ յառաջագոյն իր զինուորական աստիճանին մէջ
եղած ասեն՝ բոլորքը վրան կը զարմանային, հիմակ
իր հայրապետական զգեստներովը տեսնելով եւ
կերպարանացը վրայ երկնային մեծարելի վայելու-
թիւնն ու շնորհք մը նշմարելով, աւելի եւս կը
սքանչանային եւ ուրախութեան ձայներով շնորհա-
կալ կ'ըլլային Աստուծոյ՝ որ զիրենք այսպիսի հա-
վիւ ու առաջնորդ մ'ունենալու արժանի ըրաւ:

Այսպէս Հայաստան քիչ մը ժամանակ իր ա-
ռաքելաշնորհ հայրապետներէն զուրկ մնալէն ետեւ՝
դարձեալ սկսաւ անոնց ինամբը վայելել: Այրիացեալ
եկեղեցին իր սգոյ հանդերձները թող տալով՝ ցրն-
ծութեան պայծառ ու վայելուչ զգեստներն հա-
զաւ, տեսնելով իր երկնաւոր փեսային Առաքեալը՝
որ եկած էր իր արցունքները սրբելու, եւ իր խա-
թարեալ ու ամայացեալ առաքաասն իրբեւ թէ
նորէն կանգնելով՝ առաջին վայելութիւնն ու պոյ-
ծառութիւնը տալու:

Գ Լ Ո Ւ Խ Գ .

Ս . ՆԵՐՍԻՍԻՆ ԸՐԱԾ ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ
ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ


Հայաստանին նոյն ժամանակուան ողորմելի վիճակը : — Մեծն
Ներսէս շարեաց դարձան ասելի կ'ուղի : — Աղփային եկեղեցական
ժողովի ղ ին փոփոխութի : — Բարերարական հիմնարկութիւնն : —
Գործոցնէր : — Բարը ուղիք Ս . Կաթնաղիւնին փորձակեց եւ նպաստ
աստատարոյ կ'ըլլայ : — Ս . Ներսէսին աղքատներու վիճակն : — Ա-
մենան լրայ ունեցած հոգեբարոյնութիւնն : — Անխաբոյնութեանց
դէմ կ'ըլլէ :

ՆԵՐՍԻՍԻ ԿԷՍ Աստուծոյ եւ ընկերին սիրով լե-
ցուած հայրապետի մը առջեւ ինչ ընդարձակ դաշտ
կը բանար Հայաստանի նոյն ժամանակուան խեղճ
վիճակը : Ամէն կողմ՝ ուր որ աչքը կը դարձնէ՝ օգ-
նութիւն հասնելու, դարմանելու, կարգաւորելու
առարկաներ դիմացը կ'ելլեն : Շատ հարկաւոր բաներ
բողբոջին պակաս կը գտնէ, շատ բան ալ անկատար
եւ պակասաւոր կամ անկարգութեամբ ու զեղծ-
մամբ խառն : Աղքատներն ու կարօտեալները՝ անօ-
գնական, երեսէ ձգուած, որբերն ու այրիները՝ ան-
խնամ, առանց պաշտպանութեան ու հարստահարած .
հիւանդներն ու ցաւագարները՝ անդարման, ամէն հո-
գաբարձութենէ զրկուած, ոմանք մինչեւ մարդկային
ընկերութենէ բողբոջին մերժուած . օտարներն ու
պանդուխտները՝ ճամբաներու եւ հրապարակներու
մէջ թող տրուած . տղաք եւ պատանիք առանց
դաստիարակութեան, առանց կրօնական կրթութեան,
առանց ուսման՝ իրենք իրենց մնացած : Շատ գեղե-
րու եւ երբեմն նաեւ քաղաքներու մէջ եկեղեցի
չկայ . տեղ տեղ ալ եղածները գոցուած, երեսի
վրայ ամայի մնացած եւ կամ ուրիշ վախճաններու

գործածուած : Արօնաւորք առանց մենաստանի, առանց
 Հաստատուն բնակութեան, առդին անդին թափա-
 ռական. եկեղեցականք՝ հարօտութեան Համեմատու-
 թեամբ՝ խիստ քիչ, անոնց մէջն ալ իրենց երկնաւոր
 կոչման ու առաքելութեան Հարկաւոր եղած Հան-
 դամանքներ եւ մանաւանդ գիտութիւն ունեցող՝ շա-
 նուազները : Ժողովուրդը՝ մոլութեանց երկու գլխաւոր
 Հալածիչ դարմաններէն, այս ինքն՝ կրօնի եւ առ-
 տուած պաշտութեան ու գիտութեանց եւ ուսմանց
 նպաստներէն զրկուած՝ ամէն կերպ անպիտանութիւն-
 ներու եւ դէշութիւններու մէջ մնացած . հարուստը
 կեղեքիչ եւ խստասիրտ, աղքատն՝ անիրաւ ու արժ-
 դոհ : Նախարարք եւ իշխանք իրենց հպատակներուն
 եւ ընդհանուր հայրենեաց օգտին աշխատելու ակոյ՝
 միայն իրենց առանձնական շահուն, իրենց որսոց ու
 զրօսանաց զբաղեալ, թշնամութեամբ եւ ատելու-
 թեամբ իրարու դէմ զրգուած : Իսկ արքունիքը՝
 տակաւին հեթանոսական սովորութիւններով լե-
 ցուած, գրեթէ ամէն տեսակ անամօթութեանց ու
 անկարգութեանց բոյն եղած : . . .

73647
 547

Ահա աս էր Հայաստանին նոյն ատենուան աղէ-
 տալի վիճակը : Քիչ ժամանակ բաւական եղաւ Ներ-
 սիսի սրատես աչաց այս ամենայն չարիքն իր բոլոր
 ընդարձակութեամբն ըմբռնելու . եւ եթէ մենք հի-
 մա գրեթէ տասնուհինգ դար վերջը՝ միայն կարգա-
 լով՝ ի գութ կ'արգահատինք, աղէքնիս կը գալարի,
 եւ շենք կրնար չլալ չողբալ հայրենիքներնուս աս
 խեղճութեան վրայ, ինչ կրած պիտ'որ բլլայ Ներ-
 սիսի հայրախնամ սիրտը : Բայց ուր որ տկարասիրտ
 ու կարճամիտ մը գուցէ յուսահատած մէկդի կը քա-
 շուէր, ինք մէկէն ուզեց օգնութեան հասնիլ : Տե-
 սաւ որ սղորմելութիւնը վերջին աստիճանի է հասեր
 ու շուտով դարման կը պահանջէ, եւ անմիջապէս
 միտքը դրաւ որ ձեռք զարնէ : Չէ թէ որ դժուար



բութեան մեծութիւնը չէր ճանչնար, չէ թէ որ իր առանձին զօրութեան կամ իմաստութեան վրայ դրած էր յոյսը. հապա բոլոր գծուարութիւնն ըմբռնելով եւ այսպիսի երեւելի գործ մը գլուխ տանելու համար բոլոր մարդկային զօրութեան եւ ստեղծական իմաստութեան անբաւական ըլլալը ճանչնալով, յոյսը յԱստուած դրաւ, եւ այսպէս Անոր անուամբն ու միայն Անոր օգնականութեան ու շնորհաց փտահանալով՝ ուզեց ի գործ մխիլ: Արդարեւ գեղեցիկ խորհուրդ, դիւցազնական որոշում, որոնք միանգամայն գործքին յաջողութեան երաշխաւորութիւններն ալ հետեւեցին ունին:

Ամենայն ինչ կարգաւ գործելու եւ բարիքն ընդհանուր բոլոր երկրին տարածելու համար՝ երանելի Հայրապետն ամէն բանէն յառաջ ուզեց իր եպիսկոպոսներովը ազգային եկեղեցական ժողովք մ'ընել: Ուստի թաղաւորին ձայնակցութեամբը՝ որչափ կարելի էր շուտով՝ Հայաստանի արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները ժողովեց Աշտիշատ քաղաքը, որն որ երկրին առաջին ու մայր եկեղեցին եւ միանգամայն ի նախնեաց՝ սիւնհոգոսներու տեղն էր: Աս մեծարելի ժողովոյն առջեւ՝ իր քիչ ժամանակուան մէջ ըրած դիտողութիւններն ու գտած պակասութիւնները մէկիկ մէկիկ կենդանի գոյներով նկարելէն եւ ամէն մէկուն իր թեմին մէջ ունեցած կարօտութիւններուն վրայ տեղեկութիւն առնելէն ետեւ, սկսաւ անոնց հետ՝ նոյներուն շուտով եւ ազգոյ կերպով մը օգնութիւն հասնելու միջոցները մտածել եւ ամենէն կարելոր ու ստիպողական նիւթերուն վրայ որոշմունքներ ընել: Ժողովքին մէջ Ս. Ներսէս՝ ինչպէս որ աստիճանաւ ամենէն վեր էր, նոյնպէս ալ եռանդեամբ եւ իմաստութեամբ բոլորէն աւելի, ամենուն յորդորիչ ու քաջալերիչ, մէկ խօսքով՝ ժողովքին հոգին եղաւ: Անոր համար ալ՝ նոյն

Ժողովքին պտուղներն ու արդիւնքը, որոնք՝ ինչպէս քիչ մը վերջը պիտի տեսնենք՝ շատ մեծ եւ ամէն ակնկալութենէ վեր եղան, կրնանք ամենայն իրաւամբք իրեն ընծայել:

Ժողովքը լմրննալուն եւ ժողովականք իւրաքանչիւր տեղերնին դառնալուն պէս՝ շատ մը որոշմունքներն ի գործ դնելու ձեռք զարկին: Ամէն դաւառներուն եւ երեւելի քաղաքներուն մէջ սկսան աղքատանոցներ ու հիւանդանոցներ շինել, եւ հաստացելոց տուրքերէն՝ ետեւէ ետեւ երկիրներ ու կալուածներ առնելով՝ անոնց հաստատուն եկամուտ կապել, որպէս զի աղքատներն ու ցաւագարները՝ որոնք ապրուստնին իրենց ձեռաց աշխատութեամբը չէին կրնար ճարել, անոնց մէջ բնակին ու խաղաղութեամբ ապրին, չէ թէ որ անէ տուն ու դռնէ դուռ պարտելով մուրանան: Նոյնպէս տեղ տեղ օրկանոցներ շինեցին՝ բորոտներուն եւ ուրիշ աս տեսակ հիւանդներուն համար, որոնք՝ ինչպէս վերը տեսանք՝ քրիստոնէական սիրոյ դէմ ամէն տեղերէն կը մերժուէին. միանգամայն ասդին անդին օտարանոցներ դրին, որպէս զի չըլլայ որ պանդուխտք անկէ ետեւ գիշերները ճամբաներու վրայ բաց օդի մէջ մնան: Այսպէս նաեւ հարկաւոր եղած տեղուանք եկեղեցիներ կը կանգնէին, կամ գոցուած ու աւրուած եկեղեցիները կը բանային կը նորոգէին: Ամէն տեղ ըստ պատշաճի քահանայից թիւն աւելցնելով՝ եկեղեցական կարգաւորութիւնները ծաղկեցրնելու եւ պայծառացրնելու փոյթ կը տանէին: Շատ տեղ ալ մենաստաններ կը դնէին եւ կամ յառաջագոյն եղածները վանական օրինաց համաձայն կը կարգաւորէին:

Վիանալով որ ժողովրդեան բարուց ուղղութեան համար՝ կրօնի եւ աստուածապաշտութեան հետ մէկտեղ՝ հարկաւոր է գիտութիւն ու կրթութիւն ալ,

որոնք միայն կարգաւորեալ դպրոցներու մէջ կրնան ըստ պատշաճի աւանդուիլ, մանաւանդ թէ կրօնական նիւթերու մէջն ալ աղէկ եւ հիմնովին կրթուելու համար՝ պէտք է որ տղաք իրենց պզտիկ տարիներնուն մէջ դպրոցները յաճախեն, ժողովքին մէջ որոշածներնուն համաձայն՝ ամէն տեղ դպրոցներ կը բանային, որոնց մէջ սկսան տղաք՝ իւրաքանչիւր իր վիճակին համաձայն եղածը՝ սորվիլ ասորերէն եւ յունարէն դպրութեամբ: Նոյն ժամանակը, ինչպէս յայտնի է, դեռ հայերէն նշանագիրք գտնուած չըլլալով, մայրենի լեզուաւ դպրութիւն չէին կրնար հաստատել: Ասոր պարծանքը Մեծին Ներսիսի որդւոյն՝ Ս. Սահակայ, եւ անոր արժանաւոր աջակցին՝ Ս. Մեսրոպայ պահուած էր. բայց անոնք ալ անշուշտ աս Ս. Ներսիսի խնամքովը կանգնուած դպրոցներուն մէջ կրթուած ըլլալով, կրնայ մէկ նկատմամբ ըսուիլ որ հայերէն գրերուն գտնուելուն եւ աս գիւտէն ազգին եղած օգուտներուն ալ բուն սկզբնապատճառն ալ ինքն է:

Արդէն ըստ ինքեան յայտնի է որ այսչափ հիմնարկութիւններ ընելու համար՝ սրչափ գրամական նպաստ հարկաւոր էր, եւ քիչ ժամանակուան մէջ գլուխ ելլելէն կրնանք գիւրաւ հետեւցընել որ անխտասիրտ եւ անդուլթ մարդիկ՝ որոնք քիչ մը յառաջ քսակնին եւ առաւել եւս սրտերնին գոցած՝ չէին գիտեր ինչ ըսել է ոլորմութիւն, աղքատաց նպաստ, կարօտելոց օգնութիւն, հիմա բուրովին փոխուած ուրիշ տեսակ մարդիկ եղած էին: Եւ արդէն կը վկայէ ժամանակակից պատմագիրը որ Հաւատացեալք ամէն կողմ իրենց ինչքերն աղքատներուն հետ կը բաժնէին, եւ իրենք ուրախութեամբ ու լըջմտութեամբ իրենց դորձքին կը զբաղէին: Բայց իրօք ալ՝ որ քարէ սիրտ կրնար գիմանալ Ս.

Ներսիսի համոզիչ ու սրտաշարժ խօսքերուն, որն որ կարծես թէ՛ ամէն բանէն աւելի կը ջանար ողորմածութեան եւ եղբայրսիրութեան առաքինութիւնները իր բոլոր ժողովրդեան մէջ տնկել. մանաւանդ երբ որ կը տեսնէին որ ուրիշներուն տուած խրատն՝ ինք չէ թէ միայն ամենէն յառաջ, հապտ ամենէն աւելի եւ անհամեմատ չափով մը կը կատարէ: Ո՛վ կրնար իր ստացուածքին մէկ փոքր մասն աղքատներուն ու կարօտեալներուն զընծայ, երբ որ կը տեսնէր թէ Ս. Հայրապետը բոլոր ունեցածը չունեցածն անոնց կը բաժնէ: Ի՞նչպէս կրնար մարդ հիւանդանոցներու, որբանոցներու, օտարանոցներու շինութեան ու պահպանութեան համար հանգանակել չուզել, երբ որ կը տեսնէր որ անիկա իր տունը հիւանդանոցի, որբանոցի, օտարանոցի դարձուցած՝ ամէն օր ամէն կերպ տառապեալները, չքաւորները, հաշմերն իրեն սեղանակից կ'ընէր, հետերնին կը նստէր կ'ելէր. ամենէն աւելի ողորմելի օտարականներն ու պանդուխտներն իրեն յարկակից ու բնակակից կ'ընէր: Արեւի՛ էր որ մէկը իր օգնութիւնը չտար այնպիսիներուն, զորոնք Ս. Հայրապետն իր քովը ժողոված՝ կերակուրնին կը ջամբէր, վէրքերնին կը պատէր, եւ մինչեւ իր սրբազան ձեռուրներովն ոտուրնին կը լուար:

Ի՛սպց իր սէրն ու հոգաբարձութիւնը ամփոփ սահման մը չունէր. ամէն կարգի եւ աստիճանի մարդիկը հայրաբար կը հոգար ու կը խնամէր: Թագաւորէն ու մեծամեծներէն սկսեալ՝ ամենուն, որոնք ընկերին վըայ իշխանութիւն մ'ունէին, խրատ կուտար ու կը յորդորէր որ իրենց ծառայից, կրտսերաց, հպատակաց հետ սիրով ու դժով վարուին, իբրեւ իրենց ընտանեաց մասը զիրենք սիրեն, չափէն աւելի բան պահանջելով չնեղեն: Ասոր փոխարէն՝ հպատակներուն ու ծառաներուն ալ միշտ կը

կրկնէր որ արդար բլլան, իրենց իւրաքանչիւր գործ-
քը կամ պարտքն աղէկ կատարեն, բայց պատշաճի
հասկանալով ինչ որ հպատակութիւն ընեն: Աիր-
ար շատ կը ցուէր տեսնելով որ հեթանոսա-
թեան մնացորդ գերութիւնը գեռ շատ տեղ կը
գանուի, եւ ձեռքէն եկածին շափ կը ջանար
աս քրիստոնէական կրօնին սպառնալի հակա-
ռակ եղող միծակը բոլորովին ջնջելու: Ասանկով
շատ գերիներ ազատութեան հասցուց, տմանց տէրերն
խնայասուն ու հայրական խրատներով յորդորելով ու
համոզելով, տմանք ալ սարկով փրկանաւորելով եւ
ազատ թող տալով, մինչեւ օտար կողմերէ եկող-
ներն իւրաքանչիւր իրենց տեղերը կը գործընէր:

Բոլոր իր ժամանակն իր ժողովրդեան, իր սիրելի
հոգեւոր զաւակացը նախաձեռն էր. կամ եկեղեցեաց,
վանորէից, դպրոցաց, հիւանդանոցաց, աղքատանո-
ցաց, բանտերու այցելութիւն կ'ընէր, անոնց մէջ
գանուողները կը խնամէր, կը մխիթարէր ու կը գոր-
ծանէր. կամ մեղսեալները կը խրատէր, ճամբու բե-
րելու կը ջանար, յամառեալները՝ խստիւ Աստուծոց
գառաատաններէն վախոյրնելով, իսկ հլուներն ու
տկարները՝ քաղցր եւ հայրազուտ խօսքերով յոր-
դորելով: Եր ընդարձակ երկրին ամեն կողմը պար-
տելով՝ բոլոր անկարգութիւններն արմատաւորի խլե-
լու ետեւէ կ'իջնար. ամենեւին առանց մէկէ մը տկն-
աութիւն ընելու՝ ամենուն, մեծին ու պզտիկին,
հարստին ու աղքատին, ազնուականին ու շինական-
նին, ճշմարտութիւնը կը քարոզէր, կը սաստէր, կը
յանդիմանէր:

Վիստարարար մէկ քանի անկարգութեանց սաս-
տիկ գեմ կ'ելլէր, որոնց գեմ արդէն իր բարձր աս-
տիճանն ելլելուն պէս՝ ազգային ժողովրդին մէջ որո-
շումներ եղած էին: Ասոնց մէջէն մէկն սն էր, որ
մեծ նախարարները՝ իրենց ցեղին ինչքերն ու բիշնե-

բուն շանցրներու եւ ազնուականութիւններն շխտանելու համար՝ մերձաւոր ազգականներնուն հետ կը կարգուէին: Մէյ Մ'ալ ան էր, որ հեթանոսական սովորութեան համեմատ՝ մետեղներուն վրայ սաստիկ պղնձեղակ կսծեր կ'ընէին եւ վայելոյ՛ մ. ճիշերոյ՛ իբրեւ թէ հանդերձեալ կենաց շհատացոցի պէս՝ յուզարկաւորութիւն կը կատարէին: Այնպէս քսութիւններն ու շարախօսութիւններն ամենեւին շէր կրնար տանիլ, եւ այնպիսի խօսքերն ու գործքերը խտփանելու համար ամենայն կերպոյ՛ կտուէ կ'ընար: Թէպէտ եւ բնութեամբ հեղ ու քաղցր էր, բայց ուր որ հեղութիւնն ու քաղցրութիւնը բաւական շէր ըլլար շարեաց դարման տանելու, ըստ անպայն՝ խստութիւն ու սաստիկութիւն ալ կը գործածէր, բայց միշտ ամենուն եւ ամէն առթի մէջ բազմագութ հօր մը եւ դժամ մօր մը պէս սէր ու խնամք ցուցրնելոյ՛:

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼՅՍ ԿՆԻԹԱՅ ՈՒ ԿԱԾՍ-
 ԲԸ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԵՏ ԿԸ ՀԱՇՏԵՑԸՆԵ

Տրտման հանգրվանին վերջին Տիրանայ ժամանակը Հայաստանի
 Կառավարման վեճակը: — Տիրան Յուլիանոս Ուրուշյանի Կրտսեր
 Կնիքը: Վերջինս — Կառավարման Կոնստանտինոս: — Այս Բանին հետեւողներն
 Ներքը: — Վարչական Կրտսեր Յուլիանոս — հրեշտակները: — Կայսրը
 Հայաստանի վերջին Վերջին: — Արևի Ս. Ներսէսին ինչ Կրտ-
 սեր: — Ս. Հայրապետ Կայսրական Բանին Իր ինչ Կրտսերները: —
 Կառավարման Կրտսեր Ինչ Կրտսերները:

ՄԻՆՉԵՒ ՀԻՄՆ ՉՍ. Ներսէս՝ մինակ իր եկեղե-
 ցական բարձր պաշտամանն ձեռն անելու եւ նոյն
 նկատմամբ միայն վրան զարմանալու առիթ ունեցանք.
 Բայց Հիմակ առջեւն իս այնպիսի դէպքեր պիտ'որ ել-
 լին, որոնք զինքը մեզի տարբեր զործառնութիւն-
 ներու ձեռն ցուցնելով՝ ուրիշ զանազան նկատմամբ
 ալ իր սքանչելի հանգամանքները պիտ'որ յայտնեն
 եւ զարմանքն իս խիստ պիտ'որ աւելցնեն: Բայց
 թէ հոս թէ ասիկ ետեւ պատմելու դէպքերն իս
 զիւրըմբռնելի ընելու համար՝ պէտք է որ պատմու-
 թեան թելը քիչ մը վերէն առնենք:

Տրդատայ մահունէն ետեւ՝ իր որդին եւ յա-
 ջորդը Խոսրովին ժամանակը՝ նոյն թագաւորին տկա-
 րութեան եւ նախարարաց անմիաբանութեան ու
 երկպառակութեան պատճառաւ, եւ մանաւանդ ու-
 մանց՝ Հռոմայեցւոց (Աստանդնուպոլսոց) կայսերաց,
 ոմանց ալ Պարսից կողմը բռնելովը, թագաւորու-
 թիւնը սաստիկ տկարացած ու դրեթէ կործանման
 վտանգի մէջ ինկած էր: Նոյն վտանգէն զսնէ քիչ
 մը ժամանակ ազատեց հայրենիքը Ս. Վրթանէս կա-
 թուղիկոսը, որն որ իր ծերութեան ջնայելով՝ Խոս-

բովայ մահուքնէ ետեւ ելաւ Աստանդնուպոլիս զնայ
եւ անոր Տիրան որդին կայսեր ձեռօքը թաղաւորե-
ցուց: Ասով սկսաւ Տիրան՝ իբրեւ միայն կայսրմէ
կախում ունեցող՝ Հայաստան կառավարել: Բայց քիչ
մը ետքը նեղ մանելով՝ Պարսից ալ ստիպուեցաւ
Հարկ տալ, որուն վրայ Հռոմայեցւոց կայսերք խիստ
նեղացան եւ առթի մը կը սպասէին իրմէ վրէժն
առնելու:

Տիրան աս բանս գիտնալով, շատ պլայլեցաւ՝
երբ որ լսեց թէ Ռւրացող Յուլիանոս կայսրը Պար-
սից վրայ պատերազմի կ'երթայ, որովհետեւ իրաւամբ
կրնար վախնալ թէ անոնց յաղթելէն ետեւ՝ բանակն
իր վրայ կը դարձնէ: Ուստի սիրան առնելու համար՝
կայսերական բանակին Միջագետք հասած ատեն՝
զօրօք առջեւնին ելաւ, եւ հոն Եփրատայ անցքը
պահպանող Պարսիկներն յաղթելով ու վաճնակելով՝
Յուլիանոսին մեծ օգնութիւն բրաւ եւ զեան ան-
ցուց¹: Ասով կայսեր աչքը մտաւ, որն որ զինքը շատ
մեծարեց, բայց միանգամայն կը պահանջէր որ զօրօ-
քը իրեն հետ պատերազմի երթայ: Տիրան զանա-
զան պատճառներ բերելով՝ կրցաւ անձամբ պատե-
րազմ՝ երթալու պարտաւորութենէն ազատիլ, սա-
կայն հարկ եղաւ որ զօրք եւ միանգամայն քանի մը
հողի պատանդ տայ: Տիրանայ անդրանիկ որդին Ար-
տաշէս մեռած էր, երկրորդ որդին Արշակ ալ չու-
ղելով տալ՝ երրորդ որդին Տրդատ տուաւ, անոր բո-
լոր ընտանիքովն եւ միանգամայն Արտաշիսին Տիրիթ
որդին, զորոնք Յուլիանոս անմիջապէս Աստանդնու-
պոլիս խրկեց, որ հոն զգուշութեամբ պահուին: Իսկ
Տիրանայ՝ իր տախտակի վրայ նկարուած պատկերնե-
րը տուաւ, որ եկեղեցիներուն մէջ դնէ, ըսելով թէ
բոլոր Հռոմայեցւոց հարկատու ազգերն այսպէս կ'ը-
նեն: Տկար թաղաւորն աս բանս յանձն առաւ,

¹ Տես Խորենացի, Գիւրգ Գ. ԳԼ. ԺԳ:

որուն հետեւութիւնն, ինչպէս յառաջագոյն յիշա-
տակեցինք¹, եղաւ՝ Ս. Յուսիկին եւ անուղղակի նա-
եւ Ս. Գանիէլին մահը:

Յուլիանոս Պարսկաստան մեռնելէն վերջը՝ Շա-
պուհ ուզեց Տիրան թագաւորին Հռոմայեցւոց կողմը
բռնելուն վրէժն առնել: Աս բանս գիւրաւ եւ ա-
ռանց վտանգի դուռն հանելու համար՝ զինքը խա-
բէական խօսքերով քովը հրաւիրեց, երգում բնե-
լով որ ամենեւին ոչ իրեն եւ ոչ իր թագաւորու-
թեան վնաս մը կ'ընէ: Տիրան աս նենգապատիր
հրաւիրին հետեւելով՝ ելաւ զնաց: Իր գիւրահաւա-
նութեան վախճանն եղաւ աշուրներուն կոյրնալը եւ
քիչ մը վերջը իր տեղը՝ Պարսից ձեռօքն իր երկրորդ
որդին Արշակայ թագաւորելովը, տէրութեան՝ բոլը-
րովին Պարսից արդեցութեան տակ իննալը, որուն
պատճառաւ ալ Արշակ աւելի անոնց կողմը կը մի-
տէր քան թէ Հռոմայեցւոց, որոնց սկսաւ հարկ ալ
չվճարել:

Աոր վրայ Աղղենտիանոս կայսրը սրդողելով խիստ
բայց միանգամայն բարեկամական թուղթ մը գրեց
Արշակայ, որուն մէջ զինքը կը յանդիմանէր որ մոռ-
նալով թէ Հայաստան Հռոմայեցւոցմէ սրչափ երախ-
տիք բնդունած ու Պարսիցմէ ինչչափ չարիք կրած
է, ինք աւելի վերջիններուն կողմը կը բռնէ: Միան-
գամայն կը յորդորէր որ նորէն Հռոմայեցւոց հետ
միանալով՝ Պարսից դէմ պատերազմի եւ տուրքերը
վճարէ, որուն փոխարէն՝ ինքն ալ կը խոստանար որ
եղբայրն եւ ուրիշ բոլոր պատանդներն անմիջապէս
եա դարձրնէ:

Շիկրնար ուրացուիլ որ Արշակ խիստ վտանգաւոր
գրից մէջ էր. թէ որ յայտնապէս Հռոմայեցւոց կող-
մը դառնար, վախ կար որ Պարսիկք իրեն դէմ գրը-
գուտէին ու չարիք մը հասցրնէին. իսկ թէ որ անոր

հակառակ՝ Պարսից կողմը բռնէր, Հռոմայեցւոց վրէժ-
խնդրութենէն իրաւամբ կասկածելու էր: Բայց թա-
գաւորը՝ խոհեմութեամբ աս վտանգէն ելլելու միջոց
մը փնտռելու տեղ՝ չէ թէ միայն Ազղենտիանոսին
խօսքերուն շնասաց, հապա յանդգնութեամբ իր զօ-
րութեան վրայ վստահանալով՝ զկայսրն ան աստի-
ճանի արհամարհեց, որ եւ ոչ թղթոյն պատասխան
տալ արժանի համարեցաւ, անոր հրեշտակներն ալ
յանդգնական ու խրոխտական խօսքերով ետ դար-
ձուց: Սակայն եւ ոչ Պարսից հետ պատշաճ կեր-
պով կը վարուէր, որով զանոնք ալ իրեն թշնամի
ըրաւ: Միանգամայն նախարարաց հետ ալ աղէկ
չէր, գրեթէ ամենուն սիրտը կոտրած եւ մեծ մասն
հետը թշնամացուցած էր:

Արբ որ հրեշտակները Աստանդնուպոլիս դարձան
եւ եղածները պատմեցին, կայսրը խիստ բարկանա-
լով՝ անմիջապէս հրաման տուաւ որ պատանդներուն
մէջէն Արշակայ Տրդատ եղբայրը մեռցրնեն. որով
խեղճ իշխանը զոհ եղաւ իր եղբորը յանդգնութեան:
Ստուգիւ անիրաւ եւ թագաւորի մը անվայել վրէժ-
խնդրութիւն էր աս Ազղենտիանոսին ըրածը, կամ
թէ որ պատիժ անուանել ուզենք՝ անտեղի եւ չա-
փազանց պատիժ: Բայց կայսրն ասով ալ գոհ չըլ-
լալով, զԹէոդոս իր քաջ սպարապետը շատ զօրքով
Հայաստանի վրայ խրկեց, որպէս զի զԱրշակ խոնար-
հեցրնէ ու պատժէ:

Թագաւորն ըստ սովորութեան՝ տէրութեան հո-
գերը մոռցած՝ իր զբօսանաց հետ եղած ատեն, ան-
դիէն Հռոմայեցւոց ահեղ բանակն Հայաստան կը
մօտենար: Արշակ երբ որ աս լուրն առաւ՝ շփոթե-
ցաւ, խռովեցաւ մնաց եւ ուրիշ ճար չկրնալով գրտ-
նել՝ Ս. Ներսիսին գիմեց եւ անոր օգնութիւնն ու
խորհուրդը խնդրեց: Իմաստուն Հայրապետը միակ
պատշաճ միջոցը թագաւորին առջեւը դրաւ, որ էր՝

Նախ սպարապետին եւ ետքը կայսեր սիրան առնել, ու Ազգենտիանոսին իրաւամբ պահանջածները կատարելով՝ հետը հաշտուիլ: Հաւանեցաւ Արշակ իրեն խորհրդեան, եւ համոզուած ըլլալով որ անկէ աւելի պատշաճ մէկը չկայ նոյն երեւելի դորձքը գլուխ տանելու, իրեն առաջարկեց ու աղաչեց որ հաճի անձամբ երթալ տուած խորհուրդն ի դորձ դնել: Երանելի Աաթուղիկոսն՝ որ իր սիրելի ազգին ու ժողովրդեան համար ամենեւին աշխատութենէ, վտանգէ մը չէր փախչեր, անմիջապէս յանձն առաւ աս ծանր դորձքը:

Ստուգիւ մեծ եւ դժուարին էր աս Ս. Ներսիսի յանձնուած պաշտօնը: Թէ որ Արշակ անմեղ ըլլար, եւ յանցանքը բոլորովին վրան յարձակողին կողմը, բանը շատ կը դիւրիննար: Բայց այնպէս չէր. թագաւորն յանցաւոր էր, եւ պէտք էր որ Ս. Հայրապետը՝ առանց անոր պատիւն օտարի առջեւ նուաստացընելու, եւ միանգամայն առանց սպարապետն՝ իր կայսեր առջեւ անհնազանդ երեւնալու վտանգի մէջ ձգելու՝ զինքն առած հրամանին կատարմանէն ետ կեցընէր: Սակայն ինք այնպիսի դժուարին պարագաներու մէջ իր սովորական խոհեմութեամբն ամէն բան յաջողցուց գլուխ տարաւ՝ նաեւ Արշակայ յուսացածէն ու բաղձացածէն ալ աւելի: Շուտ մը առանց ժամանակ կորսընցընելու՝ հետն երեւելի իշխաններէն քանի մը հողի եւ զանազան բնօրէններ առած՝ ճամբայ ինկաւ: Նախ թէոդոս սպարապետին դիմացն ելլելով՝ կրցածին չափ թագաւորը ջատագովելէն եւ մինչեւ նոյն ատեն չհատուցուած հարկերը վճարելէն ետեւ՝ իր իմաստուն խօսքերովը զինքն համոզեց որ չէ թէ միայն ալ յառաջ չերթայ, հպա նաեւ բոլորովին ետ դառնայ: Կարճեւ թէ ան մեծանուն ու քաջ զօրապետը բոլոր իր բանակաւն ուրիշ բանի համար չէր եկած՝ բայց եթէ Ս. Հայ-

բապետին հրամաններն ընդունելու, այնպէս իր ամէն
խօսքերուն ու ակնարկութեանց անսաց եւ յանձն
առաւ ետ դառնալ, անոր խօսքին վստահելով թէ
թագաւորին հաւատարիմ մնալուն նկատմամբ եւ թէ
կայսեր՝ իրեն կամացը դէմ վարուելուն համար չար-
դողելուն նկատմամբ:

Բայց աս միայն բաւական չէր, նոյն խիկ կայսրն
ալ հաշտեցընելու եւ թագաւորին ու իր մէջը մտած
պաղով թիւնն անցընելու էր, եւ աս բանիս համար
հարկ էր որ Ներսէս Կոստանդնուպոլիս երթար, Ալա-
ղէնտիանոս կայսեր հետ անձամբ խօսէր: Երանելի
Հայրապետն աս հեռաւոր ճամբորդութիւնն ալ
յանձն առաւ, զնաց Կոստանդնուպոլիս, ներկայա-
ցաւ կայսեր: Եւ որովհետեւ իր չքնաղ առաքինու-
թեանց ու մեծագործութեանց համբաւն արդէն իր-
մէ յառաջ նոյն մայրաքաղաքն հասած էր, անոր
համար թէ ինքնակալէն եւ թէ բոլոր քաղքէն
այնպիսի ընդունելութիւն, սէր ու պատիւ գտաւ,
որ կարծես թէ ամենեւին այնպիսի վախճանի հա-
մար եկած չէր:

Ալաղէնտիանոս որչափ ալ մէկ կողմանէ խիստ
ու անաչառ էր եւ շուտով բարկութեան կը զրգռէր
նէ, այնչափ մէկալ կողմանէ մեծանձն, առատաձեռն
ու ազնուամիտ էր: Ինչպէս ըսինք՝ Ս. Ներսիսին
մեծ եւ արտաքոյ կարգի պատիւ ու մեծարանք ընե-
լէն ետեւ՝ բոլորովին հաշտուեցաւ Արշակայ հետ.
եւ աս հաշտութիւնն հաստատուն ընելու համար՝
որովհետեւ թագաւորին առջի կիներ մեռած էր, իր
մերձաւոր ազգականներէն Ողոմպիագա անունով օ-
րիորդն անոր կնութեան տուաւ: Ասկից ուրիշ երա-
նելի Վաթողիկոսին աղաչանացը զիջանելով՝ որչափ
որ քովը Հայոց թագաւորին տնէն պատանդ կար՝
ամէնն ալ ազատ թող տուաւ որ հայրենիքնին դառ-
նան: Աս ալ բաւական չէ, Արշակայ Տրդատ Եղբայ-

րը մեռցընելով՝ գործած անիրաւութեան գոնէ ըստ մասին հատուցում ընելու համար՝ անոր Գնել որդւոյն շատ հարստութիւն պարգեւեց եւ հիւպատոսութեան պատիւ շնորհեց :

Այս ամենայն բարիքներուն եւ յաջողութիւններուն առիթ ու պատճառ ըլլալէն ետեւ՝ Մեծն Ներսէս թագաւորական իշխաններուն եւ Ողոմպիադա դշխոյին հետ դարձաւ Հայաստան եկաւ : Մեծ ուրախութեամբ եւ կրնայ ըսուիլ յաղթանակաւ ընդունեցան զինքն ամէն տեղ, եւ իբրեւ հայրենեաց ազատիչ առջինէն աւելի սկսան զինքը մեծարել : Արշակ թագաւորն ալ իրմէ ընդունած աս մեծ ծառայութեան համար՝ իրեն շատ սէր ու մեծարանք ցուցուց : Բայց ավստ՛ս որ իր թեթեւ ու անազորոյն վարմունքովը քիչ ժամանակէ ետեւ Ս. Հայրապետին սիրտը սաստիկ խիստ վիրաւորեց, ինչպէս որ քիչ մը վերջը կը տեսնենք :

Գ Լ ՈՒ Խ Ե .

ԳՆԵԼԱՅ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ



Նախանշան զնախաբանութեանը: — Տերբիին Գնեւայ Դեմոստրատի
նախանշը: — Գնեւ շատ ին հարստանայ — ին պարսպանի: —
Տերբի ին հօրեւբօրորդան Դեմոստրատին շարտուստութեան ին-
նէ: — Արշալ զանիմ Տերանին ին Բաշեւեւ շարտանի Բաթարեւ
Բարեւել ին Կայ: — Տերբի ին շարտուստութեանն յարաւ ին
Կայ: — Ս. Յովնանեւ Սիբրիան Կայ: — Թաթարեւ զԳնեւ
նիստութեանի ին Կայ ին հարստի: — Խեղճ ին Կայ ին Կայ:
Փարսպանի Ս. Ներսէսին ին Կայ: — Երանել շարտուստութեան
զԳնեւ ապարտուստ հարստ Կայ: — Գնեւ ին Կայ:
— Ս. Ներսէս Կայ ին Կայ ին Կայ: — Կայ ին Կայ: —
Կայ: — Որպէս Կայ Կայ ին Կայ: — Կայ ին Կայ:



Թեղեցեալ նախանշն ամեն տեղ շատ տներ, ազ-
գատոհմներ, տերութիւններ կործանած, անթիւ ազ-
գեր դժբախտ բրած, անմխիթար սգոյ մէջ թաղած,
անհնարին գերութեան մէջ ձգած է, բայց պէտք
ենք ցաւով խոստովանիլ թէ քիչ ազգ կը գտնուի,
որուն մէջ այնչափ շատ շարիք դործած ըլլայ, որուն
տարեգրութեան էջերն անանկ խիտ առ խիտ լեցուն
ըլլան աս շար ախտէն պատճառած դժբախտութիւն-
ներով՝ որչափ մեր ազգը: Արնանք ըսել որ իր գրե-
թէ քառասուն դարու գոյութեան ատեն՝ չկայ ե-
րեւելի միջոց ժամանակի մը, որուն մէջ աս պատա-
ռիչ գաղանն իր զոհն ունեցած չըլլայ, որուն մէջ
աս դժոխային ճիւղէն յառաջ եկած եղեռնագոր-
ծութիւն մը չգտնուի: Երանի՛ թէ մեր հարց օրինա-
կը բաւական ըլլար մեր աչքը բանալու եւ մնասա-
կարութիւնը մեր փորձովը չիմանայիք: — Պատմու-
թիւններնուս կարգը կը պահանջէ որ հաստեղս նոյն
մուտքէն շարաշար դործքերէն մէկն ընթերցողներ-
նուս առջեւը դնենք:

Տիրիթ՝ Տիրան թագաւորին թոռն ու Արշակ թագաւորին Արտաշէս եղբօրն որդին, որն որ՝ ինչպէս յառաջագոյն տեսանք՝ Յուլիանոսին իբրեւ պատանդ Աոստանդնուպոլիս խրկած թագաւորական իշխաններուն մէջն էր, անոնց հետ մէկտեղ ալ Հայաստան դարձաւ: Աօիկա իր Գնել հօրեղբօրորդւոյն կայսրմէ բնդունած պատուոյն եւ առած հարստութեանց վրայ արդէն մեծապէս կը նախանձէր: Բայց իր աս չար նախանձը շատ աւելի սաստկացաւ՝ նոյն իշխանին Հայաստանի մէջ ալ գտած պատուէն եւ հասած հարստութենէն:

Հայոց արքունեաց սովորութիւնն ան էր, որ թագաւորէն զատ՝ միայն իր որդիքներէն մէկը իբրեւ իր պայազատը՝ իրեն հետ մէկտեղ Արարատայ գաւառը կրնար բնակել. իսկ ուրիշ արքայազուն իշխանք կամ Արշակունիք ամենեւին չէին կրնար նոյն գաւառը կենալ, հապա Հաշտենից, Աղիովաի ու Աւբերանոյ գաւառները կը բնակէին եւ հոնտեղերը թագաւորական սոճիկ ու մուտք կ'ընդունէին¹: Արդ որովհետեւ Արշակ թագաւորը դեռ նոյն ատեն զաւակ չունէր, անոր համար զՏիրիթ իբրեւ իր երեց եղբօրն որդին՝ քովը պահեց: Իսկ Գնել ելաւ իր պապը Տիրանին գնաց, որն որ Արարատ գաւառին մէջ Արագած լեռան ոտքը Աւաշ աւանը կը բնակէր: Թշուառ ծերունին իր թոռը մեծ սիրով բնդունեցաւ եւ սկսաւ իր Տրդատ որդւոյն անպարտ մահուան վրայ գառնապէս լալ, միշտ կ'ողբար, կը հառաչէր եւ չէր կրնար մխիթարուիլ, ըսելով որ Ես եղայ իր մահուան պատճառը, որ զինքն Յուլիանոսին ձեռքը պատանդ տուի: Եւ իբրեւ թէ աս իր յանցանքին տեղը կերպով մը լեցընելու համար՝ բոլոր իր ինչքերը, կալուածները, զեղերն ու դաստակերանները Գնելայ պարգեւեց. միանգամայն ուղեց

¹ Տես Խորենացի, Գիրք Բ. ԳԼ. Ը. եւ Գիրք Գ. ԳԼ. ԻԲ:

որ միշտ հոն քովը կենայ եւ իր ծերութեան օրերը մխիթարէ:

Ասանկով Գնել խիստ շատ հարստացաւ. քիչ մը վերջն ալ Սիւնեաց Անդովի նախարարին Փառանձեմ՝ աղջիկը կին առնելով՝ իր սաստիկ հարստութեան համեմատ՝ արքայավայել հարսնիք ըրաւ եւ նոյն առթով բոլոր նախարարներուն մեծամեծ պարգեւներ տուաւ: Աս իր առատաձեռնութեամբը եւ ուրիշ աղէկ հանգամանքներովը քիչ ատենուան մէջ բոլոր նախարարաց ու մեծամեծաց այնպէս սիրելի եղաւ, որ շատերը զաւկրնին անոր քովը կը խաւրէին՝ իբրեւ ազնուական թիկնապահ կամ իբրեւ մանկլուսիկ: Գնել աս մասին մէջն ալ իր մեծ հարստութեան համեմատ վարուիլ ուղելով՝ անոնց խիստ փառաւոր զգեստներ հագցուց, նոյնպէս ազնիւ ու շքեղ զէնքեր կրել կու տար, որով անոնց ծնողացը սէրն աւելի իրեն ձգեց:

Իսկ Տիրիթ՝ որուն նախանձը Գնելի փառաւորութեան հետ մէկտեղ կ'աճէր ու կը սաստկանար, այս ամենայն տեսնելով՝ ալ վերջին աստիճանի զրգռուեցաւ եւ սկսաւ հնարք փնտռել իր հօրեղբորսրդին կորսնցընելու: Իրեն օգնական եւ գործակից զբանելով իր բարեկամն ու թագաւորին զինակիրը՝ Աւարդան Մամիկոնեան, Ասսակ սպարապետին եղբայրը, անոր հետ մէկտեղ Գնելայ դէմ սկսան շարախօսութիւն մատուցանել թագաւորին: Գնել, կ'ըսէին, թագաւորութեանդ աչք տնկած է եւ կ'ուզէ զքեզ մեռցընելով տեղդ անցնիլ. աս բանիս այնպէս յայտնի եւ այնչափ աներկբայելի ցոյցեր կան, որ կը զարմանանք թէ ինչպէս չես տեսներ: Մէյ մը իր բռնած ընթացքին միտ դիր: Տես, Արարատեան գաւառը՝ թագաւորական կալուածները կը բնակի. բոլոր նախարարներն ու ազատանին իր կողմը ձգած է, որոնք իրեն մեծ սէր ունին եւ աւելի կ'ուզեն

զինքը թագաւոր ունենալ քան թէ զբեզ: Նոյն իսկ կայսեր՝ իրեն հիւպատոսութեան պատիւ շնորհելուն եւ այնչափ հարստութիւն տալուն վախճանն աս է: Ինք ան ընդունած դանձերով նախարարները կաշառեց ու խաբելով իր կողմը շահեցաւ: Ա՛րդնում յարեւ արքայի, կ'ըսէր Ասրդան, որ ես անգամ մը ականջովս լսեցի Գնեւայ բերնէն որ կը զրուցէր թէ Հօրս մահուան վրէժը պէտք է որ հօրեղբօրմէս առնեմ. անոր սպանման պատճառն ինքն է: Միշտ ալ անանկ կը ձեւացընէին որ իրենց հաւատարմութենէն եւ թագաւորին ունեցած սէրերնէն յորդորեալ՝ կը ստիպուին աս ազգարարութիւններն ընել. Գուն գիտես, կ'ըսէին, ինչպէս կ'ուզես նե՛ այնպէս ըրէ. բայց մեր տիրասիրութիւնը զմեզ կը ստիպէ քեզի ազաշելու որ զգոյշ կենաս եւ զլիուզ ճարը հոգաս:

Ասանկ խօսքերով այնչափ ըրին, այնչափ գրգռեցին, որ վերջապէս թագաւորն ալ ըսածներնուն հաւտալով՝ զԱսրդան բռնեց Գնեւայ խաւրեց եւ խըստութեամբ իրեն զրուցել տուաւ թէ Ինչո՞ւ նախնեացմէ եկած հին սովորութեան դէմ ընելով՝ Արարատայ դաւառը բնակեցար: Շուտ մը անկից ելիք գնա, եւ միանգամայն նախարարաց որդիքը քովէդ հեռացուր. ապա թէ ոչ՝ ըրածներուդ վրէժը՝ մահուամբ կը լուծես: Գնել՝ որ հանգարտութեամբ ու անկասկած կ'ապրէր, առանց ամենեւին մտքէն անցընելու որ ըրածներուն մէջ յանցանք մ'ըլլայ, թագաւորին աս հրամանն առնելով՝ շատ այլայլեցաւ ու ցաւեցաւ. բայց առանց դիմադարձութեան աճապարեց բոլոր ընտանեօքն Աղիսվաթի ու Աւբերանոյ կողմերը գնաց:

Իշխանին այսպէս շուտով հնազանդիլը կրնար թագաւորին աչքը բանալ եւ զինքն եղբորորդւոյն անմեղութեան ու անոր չարախօսներուն նենդութեան

վրայ համոզել. բայց Արշակ ասանկ խորհրդածու-
թիւններ ընելու մարդ չէր: Իր ապիրատութիւնն այն-
չափի հասաւ, մինչեւ երբ որ Տիրան նոյն բանին հա-
մար իրեն մարդ խրկեց եւ զինքը ծերութեան միակ
մխիթարութենէն զրկելուն համար յանդիմանեց, ինք
բարկանալով՝ հայրը ծածուկ մեռցրնել տուաւ: Իսկ
Տիրիթ եւ իրեն արժանի աջակիցը Աարդան՝ թեպէտ
առաջին փորձերնուն այսպէս անյաջող ելք ունենա-
լուն վրայ սաստիկ տրամեցան, բայց բոլորովին չյու-
սահատեցան, եւ միշտ իրենց քսութիւններն ու ամ-
բաստանութիւնները յառաջ կը տանէին, յուսալով
որ անշուշտ օր մը նենգաւոր խորհուրդնին գլուխ կը
հանեն: Իրօք ալ իրենց չար կամքը՝ գուցէ կարծած-
ներնէն աւելի շուտով կատարուեցաւ: Բուզանդ եւ
Մեսրոպ Էրեյ հեռուէալ կերպով կը պատմեն նոյն
եղեռնաւոր դէպքը, որն որ մշտնջենաւոր մնուցման
տակ թաղելու էր, եթէ Ս. Ներսիսի առաքինու-
թիւններուն ցոյց մ'ըլլալու չձառայէր:

Նաւասարդ ամոյն մէջ Գառնոյ դաւառը Ս. Յով-
հաննէս Մկրտչին յիշատակին համար մեծ տօն ու
եկեղեցական հանդէս կը կատարուէր: Նոյն ատեն
թագաւորական բանակն ալ հոնտեղերը Շահապիվան
գտնուեցաւ: Հայաստանի մերձաւոր դաւառներէն շատ
բազմութիւն եկած էր, նոյնպէս Ս. Ներսէս ալ ու-
րիշ շատ եպիսկոպոսներով: Թագաւորն՝ անշուշտ
Տիրիթի եւ Աարդանայ թելադրութեամբ՝ նոյն հան-
դիսութեան օրերն ընտրեց իր ազգականին վրայ ու-
նեցած չար դիտաւորութիւնը կատարելու. ուստի
զԱարդան առաւ խեղճ Գնելին խաւրեց, որ զինքն
հաւանեցրնէ բոլոր ընտանեօքը թագաւորական բա-
նակը գալու: Աարդան շուտ մը գնաց իրեն յան-
ձնուած գործքը կատարեց. խաբխրելով կ'ըսէր թէ
Թագաւորը տեսնելով որ չարախօսացդ քեզի դէմ
ըսածները սուտ խօսքեր ու զրպարտութիւնք են

եւ դուն ամենեւին յանցանք չունիս, վրադ արտաքոյ կարգի սէր մը կապեց, անոր համար ալ կ'ուզէ Նաւասարդաց ուրախութեան օրերը քեզի հետ անցընել: Ինք ալ իր կողմանէ խրատ կու տար որ չըլլայ թէ հրաւիրին դէմ դնէ, որպէս զի սրտին մէջ թագաւորին դէմ ոխ պահած չերեւայ:

Պահել բարեմտութեամբ աս խօսքերուն հաւատալով՝ շուտ մը բոլոր ընտանեօքը ճամբայ ինկաւ եւ գիշերն ալ յառաջ երթալով՝ կիրակի առտուանց կանուխ, որ Յովհաննու Արապետին տօնը կը կատարէին, հասաւ արքունական բանակը: Բայց ո՛հ, գտած ընդունելութիւնն սրչափ տարբեր եղաւ Արդանայ նկարածէն եւ իր յուսացածէն: Ինք կ'աճապարէր որ րոպէ մը յառաջ հասնի իր թագաւորին երեսը տեսնէ. իսկ Արշակ անգիէն հրաման կը խաւրէր որ ներս մտնելու թող չտան, հապա բռնեն, բանակէն դուրս հանեն եւ շուտ մը մեռցընեն: Աս անօրէն հրամանը կատարողները՝ բանակատեղին մէջերն հասած ատեն՝ մէկէն վրան կը յարձակին, ձիէն վար կ'իջեցընեն, ձեռուրներն ետելը կը կապեն, կ'առնեն կը տանին՝ որ սպաննեն:

Իսկ Փառանձեմ՝ որ ամուսնոյն հետ մէկտեղ կու գար, երբ որ անոր այսպէս յանկարծակի բռնուիլ կապուիլը տեսաւ, խելքը գլխէն գնաց, շփոթեցաւ մնաց, ինչ ընելիքն ու ինչ ըսելիքը չէր գիտեր: Բայց նոյն միջոցին իմանալով որ Ս. Ներսէս հոն է, անմիջապէս յուսահատութեան մէջ ինկած ոգին քաջալերեցաւ, փութաց վազեց, լալով ողբով եկեղեցախորանը գնաց, ուր որ երանելի Հայրապետն առաւօտեան պաշտօնը կը կատարէր, եւ ժողովրդեան ու պաշտօնէից դասերը ձեղքելով՝ եկաւ Արբոյն ոտուրներն ինկաւ, սկսաւ աղաղակել. Ողորմէ ինձի, տէր իմ, զՊահել իմ ամուսինս, առանց յանցանքի՝ պարապ տեղ պիտի մեռցընեն: Աճապարէ, օգնութիւն

Հասիր. վայ՛ հնձ, գուցէ հիմակ արդէն զինքը մեռ-
ցուցած ալ են:

Ս. Ներսէս խեղճ տիկնոջ տեսիլքէն ու խօս-
քերէն սաստիկ այլայլեցաւ. իսկզբան ո՛չ աչքին
կրնար հաւտալ, ո՛չ ականջին: Բայց տեսածն՝ իր
էր, լսածին վրայ չէր կրնար երկբայիլ: Ջինքը քիչ
մը մխիթարելէն ու քաջալերելէն ետեւ՝ շուտ մը
աստուածային պաշտամունքը թող տալով՝ ճեպով
դուրս կ'ելէ, կը փութայ դէպ ի թագաւորին խո-
րանը կը դիմէ: Բոլոր բանակը կը դղրդի Ս. Հայ-
րապետին ասանկ աճապարելով անցնիլը տեսնելով.
ամէն մարդ վրաններէն դուրս կը թափի եւ երանելի
Պատրիարքին մեծարոյ կերպարանաց վրայ՝ որն որ
միշտ հեզութեամբ ու հանդարտութեամբ կը փայ-
լէր, սաստիկ այլայլութեան ու բարկութեան նշան-
ներ տեսնելով՝ ամէնքն ահա դողի մէջ կ'իյնան,
գուշակելով որ անշուշտ մեծ չարիք մը պատահած
է: Իսկ Արշակ Սրբոյն գալը տեսնելով եւ պատճա-
ռը մակաբերելով, զլուխը զգեստին տակ ծածկած՝
խորունկ քնանալ կը ձեւացընէր, որպէս զի ժա-
մանակ անցնի եւ իր անօրէն հրամանն արդէն կա-
տարուած գտնուի:

Բայց անիրաւութեան վրէժխնդիր ու անմեղու-
թեան պաշտպան Աստուծոյն փոխանորդը ներս կը
մանէ, եւ թագաւորին շինծու քունը մտիկ չընե-
լով՝ կը սկսի շանթարձակ խօսքերով բրած անօ-
րէնութեան մեծութիւնն առջեւը դնելով՝ ստիպել
ու յորդորել որ տուած հրամանն ետ առնէ: Սա-
կայն տեսնելով որ Արշակ չսելու կը զարնէ եւ ա-
մենեւին ո՛չ տեղէն կը շարժի ո՛չ ալ պատասխան
կու տայ, կ'ուզէ ուրիշ կերպով մը շարիքն արդե-
լել, անձամբ երթալ սպանութիւնը խափանել: Փայ-
լակի պէս խորանէն դուրս կ'արձակի, ձի մը կ'առ-
նէ, վրան կը նետուի, ճամբայ կ'ելէ, հովի շուտու-

Թեամբ կը սկսի սրանալ: Բայց ամէն ճիգ պարապ է, օգուտ մը չունի, արդէն խեղճ իշխանն իր արեան մէջ կը լսղայ, զո՛հ եղած իր ազգականաց նախանձուն ու նենգութեան: Հաղիւ թէ Ս. Ներսէս արքունական խորանէն բաժնուած էր, անդիէն լուր եկաւ որ Գնեւ սպանուած է¹:

Աս գոյժը շուտ մը ամէն կողմ տարածուելով՝ Ս. կաթողիկոսին ականջն ալ կը հասնի, որն որ ընթացքն ետ դարձնելով խոր արտմութեան մէջ ընկողմած՝ նորէն թագաւորին կու գայ. այրած սրտիւ, առանց ակնառութեան ու խնայելու՝ բրած գործքին չարութիւնն երեսը կը զարնէ. եւ մարգարեական հոգւով՝ այսպիսի անիրաւ ու չարագործ ցեղի մը

¹ Գնեւայ սպանութեան դէպքն, ինչպէս վերը զրուցեցինք, այսպէս կը պատմեն Բուզանդ (Գ. Գլ. ԺԵ. ԳԼ. 116—123) եւ Մետրոպ Երէց (ԳԼ. Ե. 32—42.), վրան բանի մը տարբեր պարագաներ ալ աւելցնելով, զորոնք գուրս ձգեցինք: Իսկ խորենացին բոլորովին տարբեր կը պատմէ: Օր մը, կ'ըսէ, Արշակ թագաւորը իր սիրելի կողայովիս գաւառը որսի ելած ըլլալով եւ սաստիկ երէ բռնելով՝ սկսաւ խիստ պարծիլ: Տիրիթ եւ Աարգան ասիկակ աղէկ առիթ սեպելով՝ ըսին որ Գնեւ իր մայրենի հաւը՝ Գնեւ Գնունիէն այնպիսի երկիր մը ժառանգութիւն առած է, ուր ասկից շատ աւելի երէ կը զբոնուի: Թագաւորն աս լսելով՝ անմիջապէս Գնեւին թուղթ մը գրեց որ Շուտ մը իրեն համար որսի պատրաստութիւն տեսնէ, որպէս զի դայ հոն թագաւորի արժանի որսոյ զբօսանք ընէ: Աս գրեց եւ շուտ մ'ելաւ գնաց, որ ղինքն անպատրաստ գտնելով՝ իբրեւ անհնազանդ եւ արբային զուարճութիւնը չուզող՝ կարող ըլլայ պատժել: Բայց երբ որ հասաւ ու արտաքոյ կարգի պատրաստութիւն եւ իրօք ալ խիստ շատ երէոց բազմութիւն տեսաւ, սաստիկ նախանձելով՝ Աարգանայ ձեռքով որսի մէջ զինքն սպաննել տուաւ, անանկ կարծեցընելով որ ըստ պատահման եղած բան մըն է, եւ անոր համար փառաւոր յուղարկաւորութիւն ալ ընել տուաւ: Խոր. Գիրք. Գ. ԳԼ. ԻԳ:

երկայն ատեն թագաւորական դահին վրայ չմնալիքն ու Արշակայ իր բրաճներուն պատիժն ընդունելիքը գուշակելէն ետեւ՝ զինքն իր ամօթոյն ու պատկառանայր մէջ կը ձգէ արդար բարկութեամբ դուրս կ'ելլէ: Ասկէ ետքը մէյ մ'ալ թագաւորին երեսը չէր ուզեր տեսնել. բայց նոյն ժամանակն ալ իր որդեսէր ու հայրենասէր սիրտը չէր կրնար ժուժալ որ զինքը բոլորովին մոռնայ, հապա եղածներուն վրայ կ'ողբար եւ միշտ Արշակայ համար արցունք թափելով Աստուծոյ աղօթք կը մատուցանէր որ աչքը բանայ եւ ուղղութեան գայ:

Իսկ Արշակ խելքը գլուխը բերելու եւ երանելի Հայրապետին սիրտն առնելով՝ հետը հաշտուելու տեղ, օրէ օր նորանոր անպիտանութիւններով իրեն աւելի ցաւոց ու տրտմութեան պատճառ կ'ըլլար: Մինչեւ նոյն ատեն բրաճներուն վրայ աս ալ աւելցուց որ բուն կնոջը կենդանութեան ատեն՝ ելաւ զՓառանձեմ իրեն կնութեան առաւ, որն որ Ողոմպիադա թագուհւոյն վրայ նախանձելով՝ սաստիկ անարժան կերպով մը զանիկա մեռցընել տուաւ, որպէս զի ինք թագուհի ըլլայ, եւ Հայաստանեայց պարգեւ ըրաւ Պապ թագաւորը:

Ս. Ներսէս եւ Արշակ: — Թագաւորը թաղուած չէ շինելու յետոյ
 ինչ շարժել: — Աս Բանին շարաւար հետեւեալ շինելու: — Նա-
 իտարար Հաղհոյ ինչ զիտին, որն որ Հայաստան զորս ինչ իտարել: —
 Արշակաւորանայ իտարանու: — Մեծն Ներսէս օգնութեան ինչ հաս-
 նել: — Որքէ: — Բազաւորան պարտաւոր: — Հարաւորան Հայաս-
 տան շարակարգել: — Թագաւորը Ս. Կաթողիկոսին ինչ զիտել:
 — Ներսէս ներսէս իտարաւորութեան ինչ հաստատել:

ԹԱՍԳԱՆՈՐ՝ որ ոչ ունի զիմաստութիւն աթու-
 ռակից իւր, ոչ կարէ ի վիճակին իւրում վայելուչ
 գուլ, ըսաւ երեւելի հին մատենագիրներնէս մէկը¹:
 Աս խելացի խօսքին ցոյցքն ունինք Արշակայ վրայ.
 Ինք ի բնէ իմաստութենէ զուրկ ըլլալով, երբ որ
 զՄեծն Ներսէս քովը կ'ունենար եւ անոր խորհրդովը
 վարուելով՝ իբրեւ թէ անոր իմաստութեան մասնա-
 կից կ'ըլլար, ան ատեն իր ժողովուրդն ըստ պատ-
 շածի կը կառավարէր, ամէն բան աղէկ կ'երթար եւ
 Հայաստան կը ծաղկէր կը պայծառանար. ասոր հա-
 կառակ երբ որ անիկա թագաւորին քովէն կը հե-
 ռանար եւ կամ Արշակ երանելի Հայրապետին խօս-
 քերուն շէր հետեւեր, ան ատեն իր վիճակին ու աս-
 տիճանին անարժան գործքերու մէջ կ'իյնար: Բայց
 մանաւանդ երբ որ Գնելայ սպանութենէն ետեւ՝ Ս.
 Ներսէս արքունիքէն բոլորովին հեռացաւ եւ ամե-
 նեւին թագաւորին խորհրդեան մէջ չէր մտներ, ալ
 ան ժամանակ Արշակ մեծամեծ սխալմունքներ ընե-
 լով եւ անվայել գործքեր գործելով, չէ թէ միայն
 հայրենեաց գլուխը անհնարին շարիքներ բերաւ, հա-
 պա նաեւ ինքն ալ կործանման վտանգի մէջ ինկաւ,

¹ Եղիշէ, Պատմ. Վարդանանց, Բ. Յեղ. 26:

որմէ հազիւ նոյն Ս. Կաթողիկոսին իմաստութեամբը կրցաւ ազատիլ :

Աս Արշակայ գործած հայրենեաց խիստ վնասա- կար գործքերուն մէկն էր Արշակաւան վատանուն քաղքին շինութիւնը : Թագաւորն՝ անշուշտ իր անունն անմահացընելու համար՝ ուղեց իրեն սիրելի Կոզայո- վիտ դաւառին մէջ Մասեաց լեռանց կոնքիի կողմը ձեռակերտ մը շինել . եւ որպէս զի աս իր քաղաքը շուտով մեծնայ, շէննայ, բազմամարդ ըլլայ, հրո- վարտակ մը հանելով՝ հրաման տուաւ որ նոյն քաղ- քին մէջ բնակելու համար եկողներուն՝ յառաջագոյն գործածին վրայ ո՛չ քննութիւն ո՛չ դատաստան ըլ- լայ, եւ ամենեւին մէկն այսպիսի բանի մը համար չպատժուի : Երբ որ աս հրովարտակը Հայաստանի ամէն կողմը հրատարակուեցաւ, չորս դիէն սկսան գունդ գունդ շարագործներ հոն թափիլ : Աւելի գէշն ան էր, որ չէ թէ միայն յառաջագոյն շարիք գոր- ծած գտնուողներն՝ անպատիժ մնալու համար՝ հոն կը վազէին, հապա շատ մարդիկ՝ պատիժ չընդունելուն վրայ ապահով ըլլալով՝ գողութիւններ, աւազակու- թիւններ, յափշտակութիւններ, սպանութիւններ կ'ընէին, եւ ժողոված հարստութիւններովն կ'աճա- պարէին մէյ մը նոյն տեղն իյնալ . ուր որ անկէ ետեւ ան ապօրինաւոր ու անիրաւ կերպով ձեռք բերած ինչ- քերնին հանդարտութեամբ եւ անկասկած կրնային վայելել :

Այսպէսով քիչ ժամանակուան մէջ մեծ ու բազ- մամարդ քաղաք մ'երեւան ելաւ, որուն մէջ հաստա- տեց Արշակ իր արքունիքը եւ շամբչցաւ նոյնն իր ա- նուամբն Արշակաւան անուանել : Եւ թէպէտ աս պատճառաւ շատ մարդիկ մոխրի վրայ նստան, շատ տներ բոլորովին կործանեցան եւ աւելի շատեր սգոյ մէջ ընկղմեցան, շատ ընտանիք իրենց ծնողքը կոր- սընցուցին, աւելի շատ մարդոց կինը հափափեցաւ .

բայց այս ամենայն թագաւորին հողը չէր ըլլար, հապա իր խելքը միտքն իր քաղաքը մեծցընելու շէնցընելու վրայ էր: Շատոնք արդարու թիւն եւ իրաւունք խնդրելով ու մերժուելով՝ ձայներնին կը բարձրացընէին եւ հրապարակաւ թագաւորին ու անոր կողմնակից եղող քանի մը իշխաններուն դէմ կը տրտընջէին. սակայն ամենեւին իրենց միտ դնող կամ իրաւունք ընող չէր ըլլար: Անոր համար առակ եղած էր կ'ըսէին. Երաւունքը մեռաւ, ուստի եւ տեղ մը չի գտնուիր. թէ որ միայն կորսուած ըլլար, ետեւէն կ'իյնայինք, կը փնտռէինք, կը դանէինք. բայց մեռած է չի գտնուիր: Աս կերպով բոլոր աշխարհքն ողբով ու հառաչանքով լեցուեցաւ եւ ամէն մարդ իրեն եղած վնասներուն վրայ կու լար:

Այն իսկ նախարարները՝ որոնցմէ ոմանք աս առ թով մեծամեծ վնասներ ու կորուստներ ունեցած էին, շատ անգամ աս բանիս համար թագաւորին բողբ կ'ընէին. բայց Արշակ անոնց խօսքն ալ բանի տեղ չէր դներ: Աս տեսնելով նախարարներէն ոմանք Պարսից Շապուհ թագաւորին դիմեցին եւ Արշակայ վրայ տրտունջ ընելով՝ անոր դէմ իրմէ օգնութիւն խնդրեցին: Շապուհ՝ որ միշտ առ թի կը սպասէր Հայաստան աւար առնելու եւ իր իշխանութիւնն հոն հաստատելու, շատ ուրախացաւ աս բանիս վրայ, եւ շուտ մը մեծ զօրավարի մը հրամանատարութեան տակ՝ քիչ մը զօրք խաւրեց, որոնք եկան նախարարաց պատրաստած Հայ դնդին հետ միացան, եւ կ'ողէին թագաւորը բռնել: Եւ թէպէտ Արշակ կովկասու կողմերը փախչելով՝ վտանգէն ազատեցաւ, բայց Պարսիկներն Անի ամրոցը մտան, արքունի դանձը կողպատեցին ու մինչեւ թագաւորաց ոսկրները գերեզմաններէն հանեցին, առին տարին. թէպէտ աս վերջինները նախարարք ձեռքերնէն առնելով ետ դարձուցին:

Նոյն նախարարք թագաւորին հեռաւորութիւնն իրենց օգնական գտնելով՝ զօրօք Արշակաւանին վրայ ինկան, եւ սրտերնին վերջին աստիճանի այրած ըլլալով՝ ամենեւին բանի մը չինայեցին, կտարեցին, այրեցին, աւարեցին, մեռցուցին. ծերն ու երիտասարդը, կինն ու տղան՝ ամէնքն առհասարակ թրէ անցուցին. միայն շատ պզտիկ եւ ըստ մեծի մասին ստնդեայ տղաք ապրեցընելով՝ առին մէկտեղ դերու-թեան տարին:

Ս. Ներսէս իր առանձնութեան մէջ նախարարաց՝ Արշակաւանին վրայ ունեցած դիտաւորութիւնը լսելով՝ կը սարսի կը դողայ ըլլալու շարիքներուն, թափուելու արեան վրայ. կ'ուզէ անձամբ գալ առջեւն առնել, կ'աճապարէ գիշեր ցորեկ յառաջ երթալով կը հասնի: Բայց ո՛հ, բոլոր աշխատութիւնը պարապ է, ամէն բան լմընցեր է. տներն ու պարիսպները կործանած, ասդին անդին դեռ բոլորովին չմարած կրակներու եւ մոխրի ու փլատակներու մնացորդներ կը տեսնուին, չկործանած պատերն արեամբ ներկուած, փողոցներն ու հրապարակները դիակնելով լեցուած են: Թէպէտ նոյն անօրէն քաղքին բնակիչներն ամենեւին արգահատութեան արժանի չէին, բայց Ս. Հայրապետն՝ աս ազետալի տեսիլքն առջեւը բացուելուն պէս՝ իրենց ինչ տեսակ մարդ ըլլալը կը մտնայ, եւ միայն աս դառն կատարածնին մտածելով՝ ի դուժ կ'արգահատի, վրանին յորդարցունք կը թափէ, ինք իրեն մեղադիր կ'ըլլայ որ բաւական շուտով չաճապարեց: Աս տխուր մտածմանց մէջ եղած ատեն՝ յանկարծ միտքը կու գայ որ դուցէ դեռ անոնց մէկ մասին կրնայ օգնութեան հասնիլ, կը մտածէ որ դուցէ քաղքին հեռաւոր կողմերը տեղ տեղ դեռ արեան ճապաղիք կ'ըլլան, որն որ կրնայ արգելել: Աս յուսով անմիջապէս կը սկսի շորս դին պտըտիլ. բայց ամէն տեղ նոյն ապա-

կանութիւնն, ամէն կողմ նոյն սիրտ խշխշացընող տեսարանն առջեւը կը բացուի :

Սակայն կը տեսնէ որ անդիէն բազմութիւն մը կամաց կամաց կը հեռանար. շուտ մը մտածելով թէ նախարարք կրնան ըլլալ՝ որ իրենց զօրօքը հեռանան, եւ իբրեւ թէ ներքին ազդեցութիւն մ'ուներնալով որ ետեւներնէն երթայ, ո՛չ յոգնութիւն կը նայի, ո՛չ ուրիշ բան, հոն կը փութայ՝ ուր որ կը կարծէ թէ իր ներկայութիւնն հարկաւոր կրնայ ըլլալ : Բայց թէ որ հասած ատեն առջեւը բացուած խեղճ տեսիլքը սիրտը կտոր կտոր ըրաւ նէ, գոնէ ան մխիթարութիւնն ալ ունեցաւ, որ դեռ ժամանակ կար մեծ շարիք մը խափանելու : Ստուգիւ մարդ քարասիրտ պէտք էր ըլլալ՝ որ նոյն տեսարանէն ազդէր շխորովէին : Առջեւը կ'ելէ բազմութիւն մատաղ ու անմեղ մանկանց՝ որոնք հօրերնուն բազուկներնէն, մօրերնուն ծոցերէն յափշտակուած՝ իրենց ազգային զինուորաց ձեռօք իբրեւ տարաշխարհիկ գերի կը վարին, անոնց ազիտորմ լացն ու վայնասունը լսել, եւ ի գութ չչարժիլ՝ անկարելի բան էր : Շատ երջանիկ կը սեպէր ինք զինքը 'Ներսէս Մեծ' բաւական ժամանակին հասնելուն համար, որ կարող ըլլայ գոնէ նոյն վրէժխնդրութեան անպարտ զոհերն իրենց հալածչաց ձեռքէն ազատել :

'Նախարարք Ս. Աթոռիկոսին դալուստը լսելով՝ թէպէտ եւ կը խռովին իրար կ'անցնին՝ ըրածներնուն վրայ իրմէ յանդիմանուելիքնին գիտնալով, բայց սակայն այնչափ է իր վրայ ունեցած սէրերնին ու յարգութիւննին, որ ամէն կողմանէ կ'աճապարեն կու գան՝ զինքը պատշաճ մեծարանօք ընդունելու : 'Ներսէս գործած շարիքներնուն համար զիրենք խստիւ կը յանդիմանէ, նախ՝ իրենց տիրոջն ու թագաւորին դէմ Շապհոյ գիմէնին եւ հիմակ ալ այսպիսի անդութ կերպով վրէժխնդրութիւն առնելնին սաստիկ

երեսնին կը զարնէ : Աւերջապէս հայրական սիրով կը յորդորէ եւ իր աստուածային իշխանութեամբը կը պահանջէ որ ան գերի տարած տղաքնին թողուն : Կ'առնէ զանոնք ձեռուրներէն եւ որթերով (կողովներով) մօտաւոր գոմ մը կրել տալով, կը սկսի ամէն կերպով իրենց խնամ տանիլ ու դարմանել՝ մասնաւոր մարդիկ դնելով եւ վրանին հսկելով որ աղէկ նային : Նոյն տեղն երթալով մեծցաւ ու շէնցաւ, խոշոր աւան մ'եղաւ, որուն անունը՝ տղոց որթովք հոն կրուելնուն յիշատակին համար՝ Արթը անուանեցաւ : Այսպէս նոյն աւանն եղաւ Մեծին Ներսիսի մարդասիրութեան ու հայրական հսկողութեան Հայաստանի մէջ կանգնուած անմահ յիշատակարաններէն մէկը :

Արշակաւանայ պատճառաւ պատահած չարիքներն ու Ս. Ներսիսին նոյն առթով հայրենեաց ընելու բարիքներն այսչափով լմբնցած չէին : Արշակ երբ որ իր սիրելի ձեռակերտին գլուխն եկածները լսեց, իր անխոհեմ գործքին հետեւութիւնները տեսնելով՝ խելքը գլուխը բերելու եւ ազգին տուած վէրքերուն դարման տանելու տեղ, կարծես թէ ուզեց չարիքներն աւելի մեծցընել եւ վէրքերն աւելի խորունկցընել : Նախարարաց ըրածին դէմ բարկանալով՝ միտքը դրաւ որ անոնցմէ սաստիկ վրէժ առնէ. ուստի Աբրայամ օգնական զօրք վարձած եւ իր կողմն ըլլողներէն խել մը մարդիկ գլուխը ժողոված՝ սկսաւ վրանին քալել : Իսկ նախարարք փոխանակ յանցանքնին ճանչնալով՝ պատշաճ եղանակաւ մը թագաւորին սիրան առնելու, աւելի եւս յանդգնեցան, եւ յայտնապէս ապստամբութեան դրօշը բանալով՝ աճապարեցին իրարու հետ միաբանութեան դաշինք դրին, ամէն միջոց բանեցընելով՝ իրենց բոլոր երկիրները Արշակայ դէմ ոտք հանեցին, առդիէն անդիէն շատ զօրք ժողվեցին, եւ մեծ բանակ մը կազմելով՝ Ներ-

սե՛հ Կամսարականին զօրավարութեամբը թագաւորին դիմացն ելան :

Երկու բանակները քանի մը անգամ իրարու հետ զարնուեցան . Հայաստանի դաշտերը ներկուեցան իր որդիքներուն ձեռքովն եւ իր որդւոցն արեամբ : Երկու կողմանէ ալ շատ մարդիկ մեռան . բայց որովհետեւ թագաւորին կողմիններն՝ ըստ մասին վրէժխնդրութեան հոգւով վառուած եւ ըստ մասին իրենց խոստացուած մեծամեծ վարձքէն զրգուած էին , իսկ նախարարաց կողմիններն անշուշտ դիտէին որ եթէ յաղթուելու ըլլան՝ գլուխնին մեծամեծ չարիք պիտի գայ , անոր համար երկու կողմն ալ վերջին աստիճանի քաջութեամբ կը պատերազմէին եւ յաղթութիւնն երկայն ժամանակ անորոշ մնաց : Աս ներքին պատերազմը , աս տէրութեան մը գլուխը գալու չարիքներուն ամենէն մեծը դադրեցընելու , երկու կողմն ալ իր պատշաճ չափոյն մէջ խօթելու համար՝ հարկ էր որ վրանին արտաքուստ վտանգ մը սպանայ : Չենք գիտեր՝ դժբախտութեամբ թէ բարեբախտութեամբ ըսենք՝ նոյն վտանգն երկայն ատեն չուշացաւ , եւ այնպէս մեծ ու սաստիկ էր՝ որ մէկէն բաւական եղաւ բոլոր թշնամութիւններուն վերջ տալու : Հայագունդ զօրքերը վերջին աստիճանի սաստկութեամբ իրարու հետ զարնուած ժամանակ՝ անդիէն յանկարծակի լուր հասաւ թէ Աղէս կայսրը՝ որն որ եղբօրը Աղենտիանոսին յաջորդած էր , թէոդոս զօրավարին հրամանատարութեամբը վրանին մեծ բանակ մը կը խրկէ :

Աս գոյժն ամենուն սրտին մէջ մեծ վախ ձգեց , բոլորքը հայրենեաց գլուխը գալու վնասներէն սաստիկ զարհուրեցան : Եւ որովհետեւ ազնուական սրտից մէջ հայրենասիրութեան զգածմունքը՝ հայրենեաց վտանգի մէջ գտնուած ատեն՝ աւելի կը զարթնու , անոր համար Արշակայ դէմ պատերազմող նախարարք

աս մեծ վտանգը տեսնելով եւ միանգամայն իրենց բրած սխալմունքն ալ ճանչնալով՝ սկսան մեծապէս ցաւիլ ու հնարք մը մտածել որ [Թագաւորին հետ հաշտուելով՝ բոլոր զօրութիւննին օտար [Թշնամւոյն դէմ միաբանեն: Բայց տարակուսելով որ արդեօք Արշակ իրենց դարձն ինչպէս պիտ'որ ընդունի, չէին համարձակեր մտքերնին յայտնելու: Իրենք աս խորհուրդներուն մէջ եղած ատեն՝ [Թագաւորն ալ վերահաս վտանգն իմանալով՝ զարհուրեցաւ, շփոթեցաւ, խելքը գլխէն գնաց: Միայն իր նախարարաց հետ չէր կրնար գլուխ ելլել. հիմա մէկ կողմանէ անոնք, մէկալ կողմանէ Հռոմայեցիներն իրեն դէմ ելած կը տեսնէր. արդէն ալ գիտէր որ նաեւ Պարսից [Թագաւորն իրեն [Թշնամի է եւ վրան յարձակելու համար՝ նշանի մը կը սպասէ: Ուստի ինքն ալ սկսաւ բաղձալ նախարարներուն հետ խաղաղութիւն ընելու. սակայն անոնց միտքը չճանչնալով՝ ինչ ընելէքը, որ կողմը դառնալէքը, որուն ապաւինելէքը չէր գիտեր:

Բայց Ներսէս Մեծ՝ Հայաստանի պաշտպան ուզին հոն չէ՞ մի. բաւական չէ՞ մի հիմակ ալ առջի անգամուան պէս իր իմաստութեամբն ամէն բան կարգի դնելու: Թագաւորն ասոր վրայ ամենեւին չէր տարակուսեր, մանաւանդ [Թէ աղէկ գիտէր որ բոլոր իր տէրութեան մէջ մինակ անիկա է որ զինքն աս դժուարին վիճակէն կրնայ հանել. բայց... կ'ուզէ արդեօք, յանձն կ'առնե՞...: Աս մտածման մէջ կը տանջուէր Արշակ: Երանելի Հայրապետին հայրական խրատներն արհամարհելը, անոր յորդորանքներն ու սպառնալիքներն ոտքի տակ առնելով՝ իր անկարգութիւններէն ետ չկենալը, շատ անգամ զանիկա դառնացրնէն ու սիրտը վիրաւորելը նոյն ժամանակ մէկէն միտքը գալով, Գնելայ անպարտ արիւնն, Արշակաւանայ պատճառաւ պատահած շարիքներն ու

Թափուած սաստիկ արիւնն աչքին անջուր նկարուելով՝ գրեթէ յուսահատութեան մէջ կ'իյնար. անկարելի կը սեպէր որ Ս. Աթուղիկոսն իրեն օգնութեան հասնիլ ուզէ: Չէր գիտեր որ ճշմարիտ հայրենասէրը՝ հայրենեաց օգուտը՝ չէ թէ միայն իր անձնական վրէժխնդրութենէն, հապա նաեւ բուն իսկ իր կեանքէն ալ շատ վեր կը բռնէ. չէր կրնար հասկընալ որ Քրիստոսի հաւատարիմ աշակերտներուն վրէժխնդրութիւնը՝ չարեաց փոխարէն բարիք հատուցանելն է:

Սակայն ժամանակ չկար, վտանգը կը ստիպէր, Թէոդոսին գնդերը Հայաստանի սահմանագլուխները կը մօտենային: Աս վերջին կարօտութեան մէջ ալ Արշակայ ճարը հասնելով՝ վախով ու դողութեամբ Սրբոյն կը դիմէ. ետեւէ ետեւ մարդ խաւրելով՝ կ'աղաչէ որ բրածները մոռնայ, աս մեծ նեղութեան ատեն օգնութիւնը չզլանայ. կը խոստանայ որ ալ ասկէ ետեւ կը փոխուի, բոլորովին տարբեր ընթացք մը կը բռնէ եւ մինչեւ նոյն ատեն բրած չարիքներուն վրայ ալ կ'ապաշխարէ: Միայն, կ'ըսէր, ինք գայ զիս աս վտանգէս աղատէ եւ խաղաղութիւն բռնէ, ետքը ինչ կ'ուզէ նե՛՛ հրամայէ, ամէնն ալ կատարելու պատրաստ եմ: Մէկալ կողմանէ նախարարներն ալ, որոնք՝ ինչպէս բսինք՝ բրածներնուն վրայ կը ցաւէին եւ հայրենեաց գլուխն եկած ու գալու վնասները տեսնելով՝ ամէն կերպով կը ջանային որ խաղաղութիւն բլլայ, շատ անգամ թէ անձամբ եւ թէ ուրիշ աղաչաւորներու ձեռքով կը խնդրէին որ գայ մէջերնին միջնորդ բլլայ, զիրենք թագաւորին հետ հաշտեցընէ: Նոյնպէս եպիսկոպոսք եւ ուրիշ գլխաւոր եկեղեցականք ալ մէկտեղ ժողովելով՝ կ'աղաչէին կը պաղատէին որ իր վիճակին կորստեան վրայ զթայ, դարման տանի, թող շտայ որ բոլորովին կործանի:

Ս. 'Ներսէս' որ արդէն Հայրենեաց գլուխն եկած շարիքներուն վրայ սրտանց եւ ամենէն աւելի կը ցաւէր, եւ իսկզբան միայն անոր համար քիչ մը կ'ուշացրնէր Արշակայ խնդիրքը կատարելու՝ վասն զի իրաւամբ կը կասկածէր որ անիկա վտանգէն ազատելուն պէս՝ դարձեալ առջինէն աւելի շարեաց մէջ պիտ'որ իյնայ, ուստի թէ՛ թագաւորին թէ՛ աշխարհին համար օգտակար կը կարծէր քիչ մ'երկայն առան նեղութեան մէջ մնալնին, երբ որ այս ամենայն տեսաւ, ալ չկրցաւ դէմ դնել, խնդիրքներնուն զիջաւ: Եկաւ թագաւորին ու նախարարաց մէջ մտաւ, երկու կողման ալ պակասութիւններն առջեւնին դնելով՝ հաւանեցուց որ սխալմունքնին շտկելով՝ իրենց պատշաճ շափուն մէջ մտնեն: Ո՛վ կրնար, մանաւանդ այսպիսի պարագայից մէջ, անանկ խնստուն եւ հայրական խրատներուն դէմ դնել: Երկու կողմն ալ իրենց յանցանքը ճանչնալով՝ թագաւորը նախարարներուն խօսք տուաւ որ անկէ ետեւ ալ ուղղութեամբ եւ արդարութեամբ վարուի եւ ամենեւին մէկու մը իրաւանց կամ աշխարհին օրինաց դէմ բան չընէ. նախարարք ալ իրենց կողմանէ խոստացան որ միամտութեամբ եւ հաւատարմութեամբ իրեն հպատակին ու հնազանդին:

Հաս միտթարուեցաւ Ս. 'Ներսիսին սիրտը' երբ որ թագաւորն ու նախարարքը այսպէս իրարու հետ հաշտուած, մէկմէկու օգնելու, արտաքին թշնամին վանելու եւ հասարակաց բարիքն յառաջ տանելու փափաքով վառուած տեսաւ. մանաւանդ որ աս իրենց միաբանութեան հոգին շուտ մը բոլոր զօրքին ալ հաղորդուեցաւ: Ի՛նչ գեղեցիկ եւ սրտաշարժ բան էր տեսնելը՝ որ ան քիչ մը յառաջ իբրեւ թշնամի իրարու դէմ սաստիկ կատաղութեամբ կուռող եւ մէկմէկու արեան ծարաւի եղող մարդիկ՝ հիմա զէնքերնին մէկգի ձգելով՝ իրարու գիրկ կը նետուէին,

Եւ բոլոր թշնամութիւնն ու հակառակութիւնը մու-
նալով՝ իբրեւ բազմաժամանակեայ բարեկամ սիրով
կը խօսակցէին: Իւրաքանչիւր կողման զինուորք պա-
տերազովի մէջ գիմացիներնուն ցուցուցած մեծ քա-
ջութիւնը գովելով՝ իրարու յորդոր կ'ըլլային որ
նոյնչափ եւ առաւել եւս քաջութեամբ հասարակաց
թշնամւոյն դէմ եւ հայրենեաց պաշտպանութեան
համար կռուին:

Բայց աւանդ որ աս ընդհանուր ուրախութիւնն
ու մխիթարութիւնը բոլորովին առանց տխրութեան
ու ցաւոց չէր: Այնչափ նախարարաց մէջէն գտնուե-
ցան երկու հոգի, որոնք ո՛չ հայրենեաց վտանգէն,
ո՛չ իրենց ընկերաց օրինակէն, ո՛չ ալ Ս. Աթոռի-
կոսին խրատներէն յորդորուեցան իրենց չար ճամբէն
դառնալու եւ թագաւորին հնազանդութեան տակ
մանեկու: Եւ երբ որ տեսան թէ իրենք առանձին
մնացին, դադտ ելան Պարսից թագաւորին քովը
փախան: Աս երկու մշտնջենաւոր նախատանաց ար-
ժանի նախարարք էին Արծրունեաց Մերուժան նա-
հապետն եւ անոր քեռայրը Վահան Մամիկոնեան,
որոնք՝ եւ մանաւանդ Մերուժան՝ ետքէն մեծամեծ
չարիք հասցուցին իրենց ազգին, ինչպէս որ իր տե-
ղը պիտի տեսնենք:

Գ Լ Ո Ի Խ Է .

Ս . ՆԵՐՍԷՍ ԱՔՍՈՐ ԿԸ ԽՐԿՈՒԻ



Երանելի հայրապետը որոշեալ հաշարար Բանդէ ըլլալ : — Ձխար
երէն տեղախալ ին դեմ : — Վաղէն : — Թեոդոս զբարապետ ին
հաշարեցնել : — Վայրօք գործ ընդհանելախիւնը : — Ս . Ներսէս
տարբ ին երկուստ : — Աւելիքս ին զարտահի Խ անբնակ իզնի
՛ն ինչայ : — Նոյն տեղէն ազարելը :



ՍՏՈՅԳ է Մեծին Ներսիսի միջնորդութեամբ՝
Հայաստանի ներքին խաղաղութիւնը հաստատուած
էր, բայց ամենայն ինչ լմրնցած չէր, արտաքին թշնա-
միներն ալ հեռացընելու եւ ամօքելու էր: Սակայն
աս բանս դիւրին չէր: Թէ որ առջի անգամ Ս . Կա-
թողիկոսին աս հաշտութեան պաշտօնը կատարելը
մեծ դժուարութիւններով կապուած էր, անկից կրնայ
խմացուիլ որ աս երկրորդ անգամ որչափ աւելի
դժուարութիւններ կային առջեւը: Նախ՝ հաշտեցը-
նելու զօրապետը՝ մի եւ նոյն անձն էր, զորն որ
քանի մը տարի յառաջ՝ թագաւորին եւ բոլոր աշ-
խարհին կողմանէ հաստատուն հաւատարմութեան
եւ անքակ բարեկամութեան խոստմունքներ ընելով՝
ամօքած ու հաւանեցուցած էր որ ետ քաշուի, եւ
որն որ նորէն եկած էր նոյն հաւատարմութեան ու
բարեկամութեան դէմ գործելնուն համար: Բայց թէ
որ Թէոդոսին քաղցրութիւնն ու ազնուասրտութիւնը՝
Ս . Ներսիսին խօսքին եւ աղաչանայ լսելի ըլլալուն
վրայ երաշխաւորութիւն մը տալով՝ գործքը քիչ
մը կը դիւրինցընէր նէ, անդին կայսեր հանգամանքն
ու բնութիւնը՝ չէ թէ միայն գործքին յաջողութիւ-
նը անհամեմատ դժուարութեանց տակ կը ձգէր,
հապա նաեւ նոյն իսկ իր ազատութեան եւ կենացն
ալ վտանգի մէջ իյնալուն վախ կու տար: Վաղէս՝

հոգևով եւ մարմնով Արիանոսաց կողմն ըլլալով՝ ուղղափառ հայրապետները սաստիկ կը հալածէր եւ իր խոտոր աղանդին չղարձողներն աթոռներնէն վար առնելով՝ հեռու տեղեր արքայի կը խաւրէր:

Այս ամենայն երանելի Աթողիկոսին աչուրնե-
րուն առջեւն էր, ամենեւին պատճառ մը չունէր
յուսալու որ նոյն ինքնակալն իրեն հետ աւելի ակն-
ածու թեամբ պիտի վարուի՝ քան թէ այնչափ ե-
րեւելի հայրապետներուն հետ. բայց աս խորհրդա-
ծու թիւնները չկրցան իր քաջասրտութեան յաղթել
ու իր արիւթիւնը լքուցանել: Հայրենիքն ու իր
հօտը վտանգի մէջ կը տեսնէր եւ իրեն օգնութեան
կարօտ. ան բաւական էր զինքն յորդորամիտ ընելու
որ իրենց օգտին համար ձեռքէն եկած միջոցներն ի
գործ դնէ, թէպէտ եւ յայտնի ալ տեսնէր որ ան-
կից իրեն անձին մեծ մնաս պիտի հետեւի: Ուստի
եւ սիրով յանձն առաւ երթալ ուր որ կը կարծէր
թէ անոնց կրնայ օգնել: Եւ որովհետեւ թէպէտ
ներկայ ըլլար թէպէտ հեռու, իբրեւ հովիւ հսկող,
իբրեւ գթած հայր՝ իր խնամոցը յանձնուած հօտին,
իւր հոգեւոր զաւակացը բարիքը միշտ կը հոգար, հի-
մակ ալ չգիտնալով թէ սրչափ ժամանակ արդեօք
անոնցմէ հեռու պիտի մնայ, դուցէ ալ զլուխը դա-
լիքն յայտնապէս տեսնելով, ուղեց իր բացակայու-
թեան ատեն այնպիսի տեղակալ մը թողուլ, որուն
վրայ կարենայ վստահ ըլլալ որ զիրենք աղէկ կը
խնամէ: Աս ընտրած տեղակալն էր իր Խաղ սար-
կաւազը, զորն որ արդէն իսկզբան բոլոր իր շինել
տուած հիւանդանոցներուն ու աղքատանոցներուն
վրայ վերակացու դրած էր: Ճամբայ չեւած՝ զինքը
Քաղերեւանդայ եւ Արշարունեաց եպիսկոպոս ձեռ-
նադրեց, ու մինչեւ իր դարձին ժամանակն անոր
յանձնեց բոլոր Հայաստանի հոգեւոր վերակացու-
թեան հոգը:

Աս կողմանէ անհոգ ըլլալով՝ ճամբայ ելաւ Ներսէս դէպ ի Հռոմայեցւոց բանակը: Թէոդոս զօրապետը դարձեալ զինքն առջի անդամուան պէս իր աստիճանին ու արժանեացը համեմատ պատուով ու սիրով ընդունեցաւ: Ս. Հայրապետն իրեն աղաչեց որ Հայաստանի միաս մը չհասցընէ, եւ եթէ թագաւորն ու նախարարը յանցաւոր ալ են նէ, նոյն յանցանքին պատիժը խեղճ ժողովրդոց քաշել չտայ, այլ հարկերն առնէ ետ դառնայ: Եւ որովհետեւ յայանի կը տեսնէր որ աս հեղ առջի անդամուան պէս դիւրաւ չէր զիջաներ զօրապետը՝ թէ որ եղած խոստումներուն աւելի հաստատուն ըլլալէքին վրայ ապահովութիւն ու երաշխաւորութիւն մը չունենար, անոր համար առաջարկեց որ Արշակայ Պապ որդին օւ երեւելի նախարարաց զաւկըները հետը պատանդ առնէ: Ասով Թէոդոսին տարակոյսներն ու կասկածները փարատելով՝ ալ Ս. Հայրապետին աղաչանացը զիջաւ եւ առաջարկութիւնն յանձն առաւ: Ուստի եւ ամէնքը մէկտեղ բանակին հետ Կոստանդնուպոլիս դացին: Ս. Ներսիսին ձեռքովը Արշակ Վաղէսին նամակ մը կը խաւրէր, իր եւ նախարարաց բերնէն գրուած, որուն մէջ Պարսից օգնելնուն համար իրենք զիրենք կը ջատագովէին եւ կը խնդրէին որ առջի բարեկամութիւնը դարձեալ մէջերնին հաստատուի:

Իսայց սրչափ տարբեր եղաւ աս անդամ գտած ընդունելութիւնն առջի հեղուան գտածէն: Կայսրն առանց թագաւորին թուղթը կարդալու, առանց Ս. Աթողիկոսին երեսը տեսնելու, անշուշտ աւելի անոր ուղղափառութեան պաշտպան ըլլալուն համար՝ քան թէ քաղաքական նկատմամբ, հրամայեց որ չէ թէ միայն զինքը՝ հապա բոլոր հետն ըլլողները սպաննեն, առ երեսս պատճառ բերելով որ խոստման դէմ ընող եւ դրած ուխտը դրժող է: Երբ որ կայսերական դրան մեծերն ու խորհրդականներն աս անիրաւ

ու բոլոր ազգաց իրաւանց դէմ հրամանը լսեցին, սաստիկ այլայլելով եւ ունենալու հետեւութիւններէն վախնալով, սկսան ամէն կերպով ջանալ որ ետ առնուի: Այսեր առջեւը կը դնէին որ ինչպէս մեծ ազգի եւ հզօր թագաւորի մը կողմանէ խրկուած գետպան է Ներսէս, որն որ թագաւորին ալ մերձաւոր ազգականն է ու բոլոր ազգին վերջին աստիճանի սիրելի: Եթէ բոլոր իրաւանց դէմ՝ իրեն եւ հետն ըլլողներուն վնաս մ'ընես, կ'ըսէին, անշուշտ մեծ պատերազմ կը բացուի մեր եւ Հայոց մէջ:

Այնչափ խօսեցան, այնչափ ետեւէ ինկան, որ Վաղէս վերջապէս մեռցընելու հրամանն ետ առաւ. սակայն ինչ որ ըսին, ինչ որ ըրին՝ չկրցան զինքը հաւանեցընել որ բոլորովին ազատ թողու. հապա հրամայեց որ հեռու տեղ մ'աքսորուին: Ան ատեն նոյն իշխաններէն ոմանք՝ ուզելով ուրիշ կերպով զիրենք ազատել, եկան Ս. Աթուղիկոսին առաջարկեցին որ Արիանոսաց մոլորութիւնն յանձն առնու: Եթէ աս բանիս կը հաւանիս, կ'ըսէին, Մակեդոն մեր հայրապետը զքեզ եւ բոլոր հետդ ըլլողները աքսորանքէն կը զերծուցանէ: Բայց Սուրբը, ինչպէս արդէն կ'ընայ մակաբերուիլ, եւ ոչ ուզեց անոնց խօսքը մտիկ ընել, արհամարհելով ու դարձելով մերժեց աս անարժան առաջարկութիւնը, որն որ յայտնապէս կը ցուցընէր թէ ինչ է Վաղէսին՝ իրեն եւ հետն ըլլողներուն դէմ բանեցուցած խտուրթեան բուն պատճառը: Ուստի եւ կայսեր հրամանը շուտ մ'ի դործ դնելով՝ զինքը քովի եկեղեցականներովը մէկտեղ սաստիկ խտաշունչ ձմերուան ատեն՝ նաւ մը գրին, հեռու տեղ մ'աքսոր խրկեցին: Իսկ Պապ եւ իր հետն ըլլող ուրիշ պատանդներն Արիոսեան աղանդն յանձն առնելով՝ աքսորէն ազատեցան եւ մայրաքաղաքը մնացին:

Բայց զՆերսէս եւ իր ընկերները տանող նաւը ճամբան խիստ մրրկի հանդիպելով, երկայն ատեն ալեաց բռնութեան դէմ կռուելէն ետեւ՝ օդին սաստկութեամբն անբնակ ու վայրենի կղզի մը մղուեցաւ, ուր որ ժայռերու զարնուելով բացուեցաւ, եւ մէջինները հաղիւ կրցան կեանքերնին ազատել: Եւ որովհետեւ նաւը նորոգելն անկարելի էր եւ չէին համարձակեր պղտիկ մակուկաւ ընդարձակ ծովին մէջ ճամբորդութիւննին յառաջ տանիլ, անոր համար ահամայ ստիպուեցան նոյն ամայի կղզւոյն վրայ մնալ: Մարդ կրնայ ինք իրմէ իմանալ թէ ինչպիսի նեղութիւն ու վիշտ կրեցին ասանկ բոլոր մարդկային ընկերութենէ եւ օգնութենէ զրկուած տեղ մը, ուր ո՛չ ուտելու բան մը կրնային գտնել, ո՛չ գիշերներն անցընելու տեղ մը, ո՛չ օդին եւ եղանակներուն անհարթութեանց դէմ իրենք զիրենք պաշտպանելու ապաւէն մը: Բոլոր նոյն կղզին մնացած ժամանակնին՝ կերակուրնին էր ասդին անդին աճող վայրենի արմատներ եւ ծովին երբեմն եզերքը ձգած ձկերք:

Այսպէս Աստուծոյ մասնաւոր խնամքովն արժանի եղաւ Ս. Ներսէս նաեւ հաւատոյ ճշմարտութեան համար հալածուելու եւ իր մեծ արդեանց վրայ աս առաւելութիւնն ալ աւելցընելու: Իր աստուածային սիրոյն սաստկութեամբն ու Աստուծոյ կամացը համաձայնելով, պինպիսի դժնդակ առանձնութեան մէջ ուրախութեամբ ու զուարթութեամբ կ'անցընէր իր օրերը, եւ բոլոր հեան ըլլողներուն մխիթարութիւն ու քաջալերութիւն կու տար խօսքով եւ մանաւանդ օրինակով: Այնպէս գոհ էր ինք ան ամայի անապառը, ինչպէս թագաւորական պալատի մէջ, եւ պատրաստ էր բոլոր կեանքն հոն անցընելու՝ թէ որ Աստուած անանկ ուզէր:

Սակայն Աստուած ողորմեցաւ Հայաստանեայց շուղեց որ իր հաւատարիմ ծառան՝ զորն որ աս նե-

զութեան հնոցին մէջ փորձած եւ ընտիր գտած էր, աւելի երկայն ատեն հեռու մնայ իր եկեղեցւոյն առաջնորդութենէն. չուզեց որ աս լուսաւոր ճրագն աւելի երկայն ժամանակ հոն ան առանձնութեան մէջ՝ իբրեւ գրուանի տակ ծածկուած մնայ. իր ամենագէտ իմաստութեամբը պատշաճ սեպած ատենը՝ հոնկից հանեց եւ բերաւ իր սիրելի որդւոց ծոցը:

Այլ ամիս էր որ Ս. Ներսէս եւ իր ընկերները նոյն անբնակ ամայի կղզւոյն վրայ կը գտնուէին, մէյ մ'ալ Վաղեփն մեռնելովն ու Թէոդոս Մեծին կայսերական գահն ելլելովն՝ ամենայն ինչ կերպարանափոխ եղաւ: Հերետիկոսք ստիպեցան ձայներնին քաշել, ուղղափառութիւնն սկսաւ նորէն պայծառանալ, հաւատոյ համար աքսորուած եպիսկոպոսք ետեւէ ետեւ ետ կը դառնային եւ իւրաքանչիւր իր աթոռը կ'առնէր: Ասոնց հետ մէկտեղ Ս. Ներսէս ալ որուն գլուխն եկածն եւ ուր գտնուիլը նոյն միջոցին իմացուած էր, իր վտարանդութեան տեղէն ելլելով՝ Կոստանդնուպոլիս եկաւ: Մեծն Թէոդոս՝ որ զանազան անգամ առիթ ունեցեր էր զինքը տեսնելու եւ իր ընտիր առաքինութեանց վրայ զարմանալու, առաւ զինքը մեծ պատուով քովը պահեց, մինչեւ որ Կոստանդնուպոլսոյ Ա. ընդհանուր ժողովքն եղաւ:

Բայց մենք զինքն ան մայրաքաղաքին մէջ թող տալով՝ անցնինք տեսնենք իր բացակայութեան ատեն հայաստան եղածները:

Գ Լ ՈՒ Խ Ը .

ԱՐՇԱԿԱՅ ԳԵՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՄԱՀԸ

Արշակ նորին իր արժի ընթացքը ին թռնել: — Սահմանափակու
յեղը ին ընդդէմ: — Նոյն նախարարութեան հոգարարներուն գե
ղեցիկ գործքը է ընդհանաթ ինարինը: — Խոր է իր ուղեփակ
ները: — Նախարար Զարգոյ ին դիմել: — Պարտից զորսն
նախարարաց լարհանքը: — Ս. Ներսէսին իրարները որտէ որտէ
կ'անել: — Թագաւորն անչնարար կ'ըլլայ ու գերել ին որ
բուր: — Փառանջեմ ու նախարար: — Մերո՞ւնին է Սահան
Մարտիանին գործք լարիքները: — Թագո՞ւնն անչնարար կ'ըլ
լայ ու ին ուղեփակ: — Հայաստանի գլխին ինք լարիքները: —
Արշակ ինք զինքը ին ուղեփակ:

ԿԱՐԾԵՍ Թէ Մեծն Ներսէս Հայաստանի բախտն
ու երջանկութիւնը հետը մէկտեղ կը կրէր. երբ որ
ինք մօտ կ'ըլլար, չարիք ու թշուառութիւնք կամ
բողոքովին ի բաց կը հալածուէին եւ կամ ան ատեն
միայն կը պատահէին՝ երբ որ իր խրատներուն ու
խորհուրդներուն դէմ կը գործուէր. իսկ երբ որ ինք
կը հեռանար, ամէն տեսակ դժբախտութիւնք ու
տառապանք երկրին վրայ կը զեղուին, ամէն կողմ
սգով ու տրամութեամբ կը պատէր: — Երբ որ Ս.
Կաթուղիկոսին աքսորուելուն լուրը Հայաստան հա
սաւ, Արշակ թագաւորը՝ փոխանակ տրամելու եւ
զանիկա ազատելու միջոց փնտռելու, կարծես թէ
աւելի ուրախացաւ, ու ալ ամենեւին կասկած կամ
վախ չունենալով՝ բրած խոստմունքները մոռցաւ,
ոտքի տակ առաւ նախարարաց հետ դրած դաշինքը,
սկսաւ իր անիրաւութեան ու բռնութեան գործքերն
անսանձ եւ անխիղճ յառաջ տանիլ: Նախ միտքը
դրաւ Արշակաւանայ կործանման վրէժը նախարար
ներէն առնել. եւ որովհետեւ Ներսէս Համարականն
ամենուն առաջնորդ ըլլալով՝ իրեն դէմ պատերազ

մի ելած էր եւ միանգամայն Կամսարականաց նախարարութիւնը շատ մեծ հարստութիւն ունէր, ուղեց Արշակ ամենէն յառաջ նոյն ցեղը ջնջել, որպէս զի թէ քէնն առնէ եւ թէ անոր հարստութիւններն ու կալուածները յափշտակէ :

Աս իր չար բաղձանքն ապահովութեամբ ու հաստատութեամբ դուրս տանելու համար՝ բոլոր Կամսարականաց ցեղն Արմաւիրի հին արքունիքը հրաւիրեց, որպէս թէ զանոնք՝ իբրեւ իր ազգականները՝ կ'ուզէ մեծարել : Անոնք թագաւորին ըրած խոստմունքներուն եւ դրած դաշինքներուն վրայ վստահանալով՝ առանց կասկածի հրաւերին հետեւեցան, ամենայն բազմութեամբ՝ արք եւ կանայք ու տղաք ելան եկան : Իսկ Արշակ զամէնքը մէկտեղ անխնայ կոտորել տուաւ, որով նոյն երեւելի ու անուանի ցեղը դրեթէ անճետ եղաւ . միայն Սպանդարատ անունով մէկը՝ որն որ դիպուածով չէր եկած, կոտորածէն ազատեցաւ, եւ երբ որ եղածն իմացաւ՝ ընտանիքն առաւ շուտ մը Յունաց երկիրը փախաւ : Թագաւորին ղին ու ատելութիւնն աս անօրէն սպանութեամբ ալ չյազելով, հրամայեց որ մեռածներուն մարմինները քաշեն դուրսը բաց դաշտերուն վրայ ձգեն, որպէս զի գիշատիչ թռչնոց ու շանց կերակուր ըլլան : Նոյն նախարարութեան հպատակներէն ոմանք, որոնք իրենց տերանցմէ մեծամեծ բարիքներ տեսած էին եւ զիրենք խիստ կը սիրէին ու կը յարգէին, ըստ պատահման ոսկրներնին գտնելով եւ որոնց ըլլան խմանալով՝ առին թաղեցին : Բայց Արշակայ առջեւ աս երախտագիտութեան ու հաւատարմութեան ցոյցն ալ մահուամբ պատժուելու ոճիր մըն էր . ուստի եւ ան խեղճ մարդիկն իր հրամանաւը չարաչար սպանուեցան ու իրենց աիրասիրութեան զոհ եղան :

Երբ որ երանելին Խաղ՝ Ս . Ներսիսին տեղա-

կալն՝ աս ամէն շարիքները լսեց, իր վարդապետին օրինակին հետեւելով՝ սկսաւ թագաւորը սաստիկ յանդիմանել եւ խրատել որ խելքը գլուխը բերէ: Իսկ Արշակ՝ որն որ ան ատեն ալ ամենեւին մէկէ մը ակնածութիւն չէր ըներ, չկրնալով աս յանդիմանութեանց դիմանալ, հրամայեց որ զինքը քարկոծելով մեռցնեն: Բայց Սրբոյն ազգականները վրայ հասնելով՝ զինքն յափշտակեցին առին եւ իրենց (Ապահոնեաց) զաւառը տարին. եւ որովհետեւ շատ զօրաւոր էին, թագաւորը չյանդգնեցաւ իրենց դէմ բան մ'ընել, մանաւանդ որ կը վախնար թէ բոլոր նախարարք նոյն առթով ոտք կ'ելլեն: Աս բանէս իրաւամբ ալ կրնար կասկածել, ինչու որ անոնցմէ շատերուն մեծապէս տրանջելու պատճառներ տուած էր, երբեմն մէկ ցեղէն երբեմն մէկալ ցեղէն մարդիկ աս կամ ան պատճառանօք մեռցուցած եւ ինչքերնին յարքունիս առած ըլլալով: Եւ արդէն ոմանք Պարսից թագաւորին դիմած եւ իրեն դէմ տրտունջ բրած էին:

Եւ ասպուհ՝ անտարակոյս ասոնց խօսքերէն գրգռուելով, կամ գոնէ նախարարաց Արշակայ հետ աղէկ չըլլալն յարմար առիթ սեպելով, մանաւանդ որ ուրիշ տեղեր ունեցած պատերազմները նոյն ժամանակ լմրնցած էին, Հայաստանի վրայ զօրաւոր բանակ մը խաւրեց, Ալանաոզան պահլաւիկ զօրապետին հրամանատարութեան տակ, որն որ Արշակայ աղղակից էր: Թագաւորն աս բանս լսելով՝ շատ վախցաւ. եւ որովհետեւ իր նախարարներէն ամենեւին օգնութիւն մը չէր կրնար յուսալ, հարկադրեցաւ թշնամոյն տեղի տալ եւ իր անձին ազատութիւնը հոգալ: Իսկ նախարարներէն շատերն՝ իրենց անձինքն ու ստացուածները Պարսից զօրաց գազանութենէն ու յափշտակութենէն ազատելու համար՝ անձամբ Ալանաոզանին դիմացը կ'ելլէին, զինքը սիրոյ նշաններով

կընդունէին, եւ Արշակէն բոլորովին տաղտկացած
ըլլալով՝ իրենք զիրենք աւելի եւս ապահովցրնելու
համար՝ մինչեւ Շապուհին կ'երթային ու կը խոստա-
նային որ անկէ ետեւ իրեն հպատակին եւ հաւա-
տարմութեամբ ծառայեն:

Այսպէս անձնասիրութեամբ՝ միայն իրենց սեպ-
հական ազատութեան եւ ընչից հոգ տանելով, չէին
մտածեր որ աս ըրած գործքերնին որչափ հակառակ
է հայրենասիրութեան եւ քրիստոնէութեան ոգւոյն.
չէին իմանար թէ որչափ մնասակար հետեւութիւն-
ներ կրնայ ունենալ՝ չէ թէ միայն բոլոր ազգին եւ
հայրենեաց՝ որուն բարիքն այնպէս ոտքի տակ կ'առ-
նէին եւ բանի տեղ չէին դներ, հապա նաեւ նոյն
խակ իրենց անձանց եւ ստացուածոց՝ որոնք չկորսն-
ցրնելու համար ասանկ մեծ չարիք կ'ընէին: Անձնա-
սիրութիւնն ու ընչասիրութիւնը մտքերնին պղտորելով
ու աշուրնին կոյրցրնելով՝ վրանին ազդեցութիւն չէին
ըներ Ս. Ներսիսի ան սքանչելի խօսքերը՝ որոնցմով
յառաջագոյն ջանացած էր զիրենք աս տեսակ մնա-
սակար գործքերէն հեռացրնել, բտելով որ թէ՛ Աս-
տուծոյ պատուիրանին հնազանդելու համար եւ թէ՛
միանգամայն երախտագիտութեան պարտքէն ստի-
պուած են հաւատարիմ մնալ իրենց սեպհական
թագաւորին: Զձեզ ամէնքդ ալ, կ'ըսէր, Արշակու-
նիք ոչընչէ առած, ազնուականութեան հանած են.
ամեննուդ ալ մեծնալը, յառաջ երթալը, զանազան
երկիրներու եւ ստացուածներու տէր ըլլալն՝ Արշա-
կունեաց ցեղին կ'անրկէն է. անոնք են՝ որ ձեզի մե-
ծամեծ պատիւներ, պաշտօններ, իշխանութիւններ
տուած են: Եւ թէպէտ, կ'ըսէր, Արշակ թագաւո-
րը չարագործ ալ ըլլայ, ի վերայ այսր ամենայնի ձեր
սեպհական թագաւորն է, եւ բիւր անգամ լաւ է
որ իրեն հպատակ մնաք, քան թէ իրմէ ապստամբե-
լով՝ օտար եւ անաստուած ու անկրօն թագաւորի

իշխանութեան տակ մանէք: Եւ որովհետեւ նախա-
բարք կը զրուցէին թէ Այսչափ տարի է որ միշտ
Արշակայ համար պատերազմ կ'ընենք, եւ երբեք
հանգիստ առած, երբեք խաղաղութեան երես տե-
սած չունինք, քրտինքնիս՝ սրով եւ սլաքով եւ նե-
տով կը սրբենք, անկից ալ առիթ առնելով՝ կ'ը-
սէր իրենց Ս. Հայրապետը թէ Նոյն իսկ ձեր բրած-
ները յիշեցէք. այսչափ ժամանակ ասանկ հաւատար-
մութեամբ ծառայելէն, ձեր անձանց, ընտանեաց,
հայրենեաց, կրօնից վրայ այսչափ արիւն թափելէն
ետեւ՝ մեզք չէ՞ մի որ բոլոր արդիւնքնիդ ոտքի տակ
առնէք, ձեր տիրասիրութեան, հաւատարմութեան,
հայրենասիրութեան բիծ դնէք: Մտքերնիդ բերէք
որ աս գործողութեամբ՝ նաեւ սուրբ կրօննիդ ալ
կորսընցընելու վտանգի մէջ կ'իյնաք: Ասացէք որ
չըլլայ թէ աս ձեր անհաւատարմութեան համար Աս-
տուած բարկանալով՝ զձեզ չարաչար ծառայութեան
եւ ստրկութեան տակ ձգէ, որմէ չկարենաք երբեք
ազատիլ: Հիմա դեռ ազատ էք, տակաւին ամենայն
ինչ ձեռքերնիդ է. բայց երբ որ մէյ մ'անձամբ ան-
ձին ան չարաչար գերութեան մէջ կ'իյնաք, անաս-
տուած եւ խոտասիրտ մարդիկներու ծառայ կ'ըլլաք,
ան ատեն պիտի բողբէք առ Աստուած, եւ ինք
ձեզի պիտի չանսայ¹:

Աս իմաստուն խօսքերը, որոնք շատ հեղ լսած
էին եւ որոնք անշուշտ նոյն ատեն ալ շատերուն
միտքը կու գային, բաւական էին զիրենք խորխորա-
տին եզերքը բռնելու. բայց ինչպէս ըօինք՝ իրենց
կրիցը սաստկութեան մէջ՝ վրանին աղղեցութիւն
չէին ըներ, ուստի եւ իրենց բնիկ տէրն իր նեղու-
թեան ժամանակը թող տուին հեռացան, մանա-
ւանդ թէ անոր եւ իրենց թշնամեոյն ձեռքը տուին:
— Ասանկով Արշակ վերջին աստիճանի նեղ մտաւ,

¹ Բուզանդ, Դ. Դպր. ԾԱ. ԳԼ. 161—163:

որմէ ազատելու՝ ուրիշ միջոց չէր կրնար գտնել՝
բայց եթէ Հռոմայեցւոց իշխանութեան տակ եղող
երկիրներն անցնիլ, կամ յուսալով որ անոնցմէ օգ-
նութիւն մը կրնայ գտնել եւ կամ գտնէ կեանքն
ազատել: Բայց աս ալ կարելի չէր եւ գէթ խիստ
գժուար էր, որովհետեւ Պարսից բանակը զինքն ա-
մէն կողմանէ պաշարած էր: Ի՛նչ ընելիքը չգիտնա-
լով՝ ելաւ անոնց հրամանատարին պատգամ խաւրեց
թէ Ինչո՞ւ դուն՝ որ իմ հարազատս ու արեւակիցս
ես, զիս այսպէս շարաշար կը հալածես: Անտարա-
կոյս Շապհոյ հրամանէն բռնաբարեալ՝ ակամայ կ'ը-
նես աս բանս: Բայց հիմակ ինձի աչք գոցէ որ Յու-
նաստան անցնիմ, անկից ետեւ ուղածիդ պէս եր-
կրիս տիրէ: Թէ որ ասիկա կ'ընես նէ, ինձմէ ստու-
գիւ մեծամեծ բարիք կը գտնես: Իսկ Ալանաողան
իրեն խնդիրը մերժեց եւ խստութեամբ պատասխան
տուաւ որ եթէ դուն մեր Ամասարական ազգական-
ներուն չխնայեցիր, որոնք քեզի աւելի մերձաւոր էին
քան թէ ես, եւ միանգամայն կրօնիւ ու հայրենեօք
ալ նոյն, ինձմէ ինչպէս կրնաս պահանջել որ քեզի
խնայեմ, որովհետեւ թէ կրօնիւ եւ թէ հայրենեօք
ինձմէ հեռու ես:

Անշուշտ Արշակ աս պատասխանն առած ատեն՝
իր ազգականներուն դէմ ըրած անիրաւութեան մե-
ծութիւնը ճանչցած պիտ'որ ըլլայ. անշուշտ իմա-
ցած պիտ'որ ըլլայ որ իր անագորունութեանց պա-
տժոյն համար է որ հիմակ այսպէս ամենէն թող
տրուած՝ նոյն իսկ իր ազգականէն կը հալածուի:
Բայց ի՛նչ օգուտ. շարիքը չընելը մարդու ձեռքն
է, իսկ գործուած շարիքը՝ չգործուած ընելն ան-
կարելի է: Ա՛լ ճարը հատնելով՝ վերջապէս ստի-
պուեցաւ անձնատուր ըլլալ. եւ Ալանաողան զինքն
առաւ, զօրաց մեծ մասովն ելաւ իր տեղը դարձաւ,
Հայաստանի մէջ քիչ մը մարդ թող տալով: Հա-

պուհ Արշակայ իր ձեռքն իյնալուն վրայ սաստիկ ուրախացաւ, եւ իսկզբան չէ թէ միայն հանգիստ այլ նաեւ պատուով կը պահէր. բայց քիչ մը վերջը բոլորովին տարբեր ընթացք մը սկսաւ բռնել: Բռնագատեց զբել տուաւ որ Փառանձեմ իրեն գայ. ինք Շապուհ ալ հրաման տուաւ որ բոլոր նախարարք՝ թէ Արշակայ հաւատարիմ մնացողներն եւ թէ իր կողմն անցնողները՝ իրենց ընտանեօքն ելլեն Պարսկաստան գան:

Արբ որ աս հրամանը Հայաստան հասաւ՝ արդէն սոցոյ եւ ցաւոց մէջ եղող ոգիներն աւելի եւս խոր տրամուլթեան մէջ ինկան, վասն զի Պարսից թագաւորին նպատակը յայանապէս կը տեսնէին: Բայց ոչ Փառանձեմ եւ ոչ նախարարք յանձն առին երթալ: Եւ Շապուհոյ դիմող ու անոր կողմն անցնող նախարարներն ըրած անխոհեմ ու վնասակար զործողութիւններուն՝ նոյն իսկ իրենց վրայ ալ ունեցած հետեւութիւնը տեսնելով՝ սկսան շարաշար ղղջալ եւ Ս. Ներսիսի խօսքերուն ստուգութիւնն իմանալ: Սակայն բանը բանէն անցած էր. ուրիշ ճար չէր մնար, բայց եթէ կերպով մը փախչել պրծանիլ: Ուստի ելան մէկտեղ միաբանեցան, Ալանաղանին թող տուած զօրքը հալածեցին, եւ իրենք ընտանիքնին ու շարժական ինչքերնին հետերնին առած՝ Յունաստան ինկան: Իսկ Փառանձեմ իր բոլոր գանձերն ու խել մը զօրք առաւ, զնաց Արտագերից բերդը մտաւ ապաւինեցաւ, որն որ սաստիկ ամուր եւ անառիկ էր, յուսալով որ Պապ սրգին՝ իր գտնուած վիճակն իմանալով՝ անշուշտ կու գայ զինքը կ'ազատէ:

Շապուհ երբ որ աս բաները լսեց, խիստ բարկանալով՝ հրամայեց որ Արշակ թագաւորը շղթայի զարնեն եւ տանին Խուժաստանի Անյուշ բերդը բանտարկեն: Աս ընելէն ետեւ՝ զՄերութան Ար-

ծրունի եւ զԱհա՛ն Մամիկոնեան, որոնք քրիստոնէութիւնն ուրացած ու բոլորովին Պարսից կողմն անցած էին, եւ ամէն կերպով կը ջանային որ իրենց հայրենեաց վնասովը մեծնան ու բարձր իշխանութեան հասնին, շատ զօրքով Հայաստանի վրայ խաւրեց: Ասոնք եկան Արտազերից բերդը պաշարեցին, եւ թէպէտ նոյն բերդին անհնարին անմատչելի ամրութեան համար բան մը չէին կրնար ընել, բայց հոնկից չորս կողմը սփռելով՝ շատ վնաս կուտային, կ'այրէին, կը կործանէին, կ'ասպատակէին, եւ մեծ հարստութիւն ու անթիւ գերի ժողոված՝ իրենց բանակը կը դառնային: Նոյն միջոցին Յունաց երկիրները փախչող նախարարք Պապայ հետ խօսելով՝ Հայաստան ստէպ ստէպ մարդ կը խաւրէին, որոնք զաղանի դռնէ մը բերդ մտնելով՝ թագուհին ու քովինները կը քաջալերէին որ հաստատուն կենան, համբերեն, շատ չ'անցնիր՝ արքայորդին կայսերական զօրք օգնութեան կը հասնի ղերենք կ'ազատէ: Աս խօսքերուն վտահելով՝ բերդին մէջիններն երկայն ժամանակ հաստատութեամբ դիմացան կեցան. բայց տեսնելով որ ան խոստացուած օգնութիւնը միշտ կ'ուշանայ, ալ չուզեցին սպասել, անձնատուր եղան:

Պարսիկները ներս մտան, բոլոր բերդին մէջ գրտնուած դանձերն ու հարստութիւնները յափշտակեցին, եւ մարդիկները գերի բռնելով՝ Փառանձեմայ հետ Ասորեստան տարին, ուր որ թագուհին նախատանօք մեռցուցին:

Բայց ո՞վ կրնայ պատմել Հայաստանէն չեւած՝ դործած չարիքնին եւ հասցուցած վնասնին: Քանի՛ քանի՛ քաղաքներ կործանեցին, սրչափ պարիսպներ քանդեցին, ինչչափ տներ, պալատներ, վանքեր, եկեղեցիներ այրեցին, սրչափ արիւն թափեցին, սրքան մարդ գերի վարեցին: Արտաշատ, Վաղարշապատ,

Երուանդաշատ, Զարեհաւան, Զարիշատ, Վան, Նախ-
ճաւան՝ մեծ եւ երեւելի ու մարդաշատ քաղաքնե-
րը, թող ուրիշ զանազան մանր քաղաքները, ան-
թիւ անհամար աւաններն ու գեղերը, բոլոր մար-
դաթափ ըրին բնակիչներէն եւ գրեթէ գետնի հա-
ւասար թողուցին : Ան քանի մը շաբաթ յառաջ
ծաղկեալ եւ շինանիստ գաւառները՝ ամայի անա-
պատ էին դարձեր : Ստուգիւ առանց այլաբանու-
թեան կամ չափազանցութեան՝ կրնայ ըսուիլ որ
Հայաստանի մէկ մեծ մասն արեան մէջ թաթխուե-
ցաւ : Մարդուն իրօք ալ արեան արցունք թափե-
լիքը կու գայ, երբ որ կը մտածէ թէ հայրենեաց
գլուխն աս անհնարին շարիքը բերողները՝ չէ թէ
միայն իբրեւ հեռաւոր պատճառ կամ առիթ՝ հա-
պա նաեւ իբրեւ մերձաւոր գործող՝ իր օտարախորթ
որդիքն են . . . :

Ազաճներուն վրայ նոյն իսկ Արշակ այնչափ այլ-
այլեցաւ ու խռովեցաւ, որ չկրնալով դիմանալ եւ
խղճէն տանջուելով թէ ինքն է բոլորին սկզբնա-
պատճառը, յուսահատութեան մէջ ինկաւ եւ ինք
զինքը մեռցուց :

Պ Ա Պ Ա Յ Թ Ա Գ Ա Ի Ռ Ե Լ Ը

Մերո՞ւմն Հայաստանն է՞ — Գրե՞ստե՞նքն — Բնի՞նքն
 հա՞մար ըրա՞նէրը : — Ս . Ներե՞տ ըՊա՞ղ ի՞նչ Բա՞նաստե՞ցնէ : —
 Նոր Բա՞նաստե՞նքն ու նախաբարաց հե՞ր Հայաստանն ի՞նչ դա՞ռնայ : —
 Երկրին ողորձելի լինե՞լը : — Մերո՞ւմն՝ Պարսիցի՞նքն է՞ Հայ
 կայսրի՞նքն օրնա՞նքն ի՞նչ գո՞րծն : — Պարսիցի՞նքն ողորդաստե՞ն
 քնն : — Ս . Ներե՞տ Բնի՞նքն ի՞նչ Բա՞նաստե՞ցն է՞ : —
 Զերա՞նքն ողորդաստե՞ցն : — Մերո՞ւմնքն լինե՞նքն :

ԱՐՇԱԿԱՅ չարաչար մահուամբն՝ իր պատճառ եւ
 զած չարիքները չէ թէ միայն չգազրեցան , հապա
 մանաւանդ թէ անոր հակառակ աւելի եւս սաստ
 կացան : Շապուհ՝ որ կարծես թէ անոր կենդանու
 թեան ատեն չէր համարձակեր Հայաստան բոլորո
 վին նուաճելու ետեւէ յինալ , եւ զանիկա մեռցնելու
 ալ չէր կրնար ինք զինքն որոշել՝ գուցէ վախնալով
 որ չըլլայ թէ անոր սպանուելուն լուրը Հայոց սրտին
 մէջ քիչ մը ատեն անգործ կեցող տիրատիրութիւնը
 զարթոցանելով՝ իրեն դեմօտը ելլելու եւ իր բռն
 նաւորական լուծը խզելու գրգռէ , անիկա մեռնելէն
 ետեւ՝ սկսաւ ամենայն եղանակաւ ջանալ որ անտէր
 ու անօգնական մնացած Հայաստանի մէջ իր իշխա
 նութիւնն աւելի հաստատէ : Աս վախճանաւ՝ ամէն
 բանէն յառաջ Մերութանայ ձեռքով զօրաւոր բա
 նակ մը խաւրեց հոն , որ բոլոր երկրին բնակիչները
 եւ մանաւանդ նախարարները կրակապաշտութեան
 դարձնէ : Եւ որպէս զի զանօրէնն աս գործքն աւելի
 փութով ու եռանդեամբ գլուխ հանելու գրգռէ , չէ
 թէ միայն իր քոյրն անոր կնութեան տուաւ եւ
 Պարսկաստանի մէջ մեծամեծ կալուածներ պարգե
 ւեց , հապա նաեւ մինչեւ Հայոց թագաւորութիւնն

ալ խոստացաւ իրեն տալ, միայն թէ ըսածները կատարէ :

Մերուժան ասանկ գրգիռներով իր հայրենիքը գալով՝ սկսաւ անլուր շարիքներ գործել : Նախարարներէն շատերը թող տուած գացած ըլլալով, ոմանց հոն մնացած ընտանիքը կ'առնէր բերդերու մէջ կը բանտարկէր եւ մեծ սպառնալիքներ կ'ընէր, որպէս զի փախստականներն ետ դառնալու ստիպէ . եւ անոնց աշուքներն իրական ցոյցերով աւելի եւս վախցընելու համար՝ մէկ կողմանէ ալ կը սկսէր կամաց կամաց աս սպառնալիքներն ի գործ դնել : Քրիստոնէութիւնը ջնջելու մտօք՝ բոլոր եկեղեցիները գոցել կամ կործանել կու տար եւ ամէն կողմ անոնց տեղատրուշաններ կը կանգնէր . եպիսկոպոսներն ու շատ քահանաներ զանազան պատճառանօք կը հալածէր Պարսկաստան կը խաւրէր, եւ գունդագունդ մտեր կը բերէր Հայաստան կը լեցընէր : Եւ որովհետեւ նոյն ժամանակները գեռ հայերէն գիր ու գպրութիւն չըլլալով՝ եկեղեցւոյ կարգերուն մէջ յունարէնով կը վարուէին, Մերուժան սաստիկ պատիժներով յունարէն սորվիլը, թարգմանելն ու նոյն իսկ խօսիլն արգելեց . կ'ուզէր ու կը հրամայէր որ ամէն մարդ պարսկերէն սորվի . բոլոր գտած յունարէն գրքերը կը ժողվէր, կ'այրէր, կը ջնջէր :

Ինչպէս յառաջագոյն զրուցածներնէս կը տեսնուի, Ս. Ներսէս Աստանդնուպոլիս կը գտնուէր երբ որ աս շարիքները Հայաստանի գլուխը կու գային : Հայրենեաց եւ իր հօտին աս թշուառութեանցը վրայ զիշեր ցորեկ դառն արտասուք թափելով եւ կրօնին գտնուած վտանգին վրայ սիրտն անհնարին ցաւոց մէջ իյնալով՝ ամէն կերպով կը ջանար կը ճգնէր որ անոնց դարման մը տանի, երկիրը խաղաղցընէ ու Պարսից բռնութենէն ազատէ : Աս իր նեղութեան ու անձկութեան մէջ՝ Աստուծմէ ետեւ միակ ակն-

կալութիւնը թէոզոս կայսրն էր: Ս. Վաթողիկոսն իրեն զիմեց, եւ Հայաստանի խեղճ վիճակն ու կրօնի վտանգը կենդանի գոյներով առջեւը դնելով՝ խնդրեց որ օգնութեան հասնի, Արշակայ Պապ որդին Հայաստանի վրայ թագաւորեցընէ եւ զինքը Պարսից դէմ պաշտպանէ: Ասանկ արգար խնդիրն այնպիսի մեծանուն փաստարանի բերան՝ անկարելի բան էր որ առանց արդեանց մնար: Զիջաւ մեծանձն ինքնակալն իր ազաչանացը. անմիջապէս հրաման տուաւ որ Տերէնտ ստրատելատին զօրավարութեամբը բազմաթիւ բանակ մը Հայոց օգնութեան երթայ, Պարսիկները հոնկից մերժէ եւ զՊապ իր հարցը թագաւորական դահը նստեցընէ: Աս լուրը շուտ մը չորս կողմը տարածուելով՝ փախչող նախարարներն ամէն դիացեկան թագաւորին ու երանելի Հայրապետին քովը ժողվեցան, եւ քիչ մը տտեն վերջը ամէնքը մէկտեղ կայսերական զօրքին հետ դէպ ի Հայաստան ճամբայ ելան:

Եայց, բարէ, ինչ ազիողորմ տեսարան կը սպասէր իրենց հոն. սրչափ տարբեր էր Հայաստանի հիմակուան կերպարանքը՝ իրենց հոնկից ելած ժամանակ ունեցածէն: Փոխանակ ծաղկեալ մարդաշատ քաղաքներու՝ աւերակներ եւ ամայի անապատներ. փոխանակ կանաչազարդ դաշտերու եւ գեղեցիկ մարգերու՝ կորդ ու խոպան երկիրներ, որոնց վրայ գրեթէ շնչաւոր մը չիտեսնուիր: Գեղերու եւ աւաններու մէջ շինականաց դաշտային ուրախութեան եւ հովիւներու գեղջկական սրնդին ձայնին տեղ՝ միայն լալու եւ հեծութեան ձայներ կը լսուին: Մէկ կողմը երկրագործին բոլոր ակնկալութիւնն ու բովանդակ տարւոյն մէջ թափած քրտինքներուն արդիւնքը ձիոց սմբակներուն տակ կոխուած ապականած, անդին հովիւներուն խզերն այրած կործանած կը տեսնուի: Ժիր երխասարգներու եւ կայտառ տղոց բազմու-

Թեան տեղ՝ ճամբաները ծերերէ, ցաւադարներէ, վիրաւորներէ, հիւանդներէ ուրիշ մարդ չ'երեւար: Ան Ս. Ներսիսի անդուլ ջանիցն ու վաստակոյ պատուները, ան բաղմաթիւ հիւանդանոցներն, աղքատանոցներն, որբանոցները՝ կամ կործանած պարած են, կամ մէջիններն սպրուստ ու խնամք չգրանելով՝ դուրս ելած ամայի ձգած են: Ամէն տեղ նորահաստատ դպրոցները դոցուած, վանքերն ու եկեղեցիները կործանած . . .

Սերջապէս կու գան կը մօտենան Հայաստանի սահմանները . . . Բայց ինչո՞ւ ան նախարարը՝ որոնք ամենէն աւելի կ'աճապարէին իրենց մօտաւոր բերդերը բույէ մը յառաջ հասնելու, հիմա շանթէ զարնուածի պէս՝ կը կենան, չեն կրնար յառաջանալ: Ի՞նչ է իրենց բերդերը տեսած ատեննին՝ գրեթէ արութիւննին մոռնալով՝ թափած արցունքներնուն ու հանած հառաչանքներնուն պատճառը: . . . Կարծես թէ ներքին ազդեցութիւն մը իրենց կ'իմացնէ ան բերդերուն մէջ իրենց սպասող սգալի բնդունելութիւնը. կը զգան որ իրենց սիրելի ամուսիններն ու զաւիրները ալ աս աշխարհքիս մէջ տեսնելէք չունին: . . . Թէ որ անոնցմէ պիտի բաժնուէին, թէ որ պըրի ու անզաւակ պիտի մնային, թէ որ հայրենեաց վերանորոգութիւնն աս դժուար զոհը կը պահանջէր իրենցմէ, զոնէ անգամ մ'ալ տեսնէին . . . զոնէ անոնց վերջին շնչերնին տալու ատեն՝ ներկայ գանուէին . . . զոնէ կարող ըլլային անոնց աչաքները դոցել . . . Բայց չէ. զիրենք աս տխուր մխիթարութենէն ալ զրկած էր Սերուժան՝ հայրենեաց մատնիչն ու կործանիչը: Իրենց գալստեան լուրն առնելուն պէս, իբրեւ կատաղի վազը մը՝ որն որ հաստատուն բռնել կարծած որք թող տալու կը ստիպուի, վերջին աստիճանի բարկանալով՝ նախարարաց բնտանիքը բերդերնուն վրայէն կախել արւ-

ած էր, ուր որ շատոնց մեռած էին, եւ մարմիննին
Թուշուններու կեր եղած էր:

Անկարելի է խօսքով բացատրել Թէ այս ամենայն ինչ ազգեցութիւն բնաւ եկողներուն վրայ, որոնք Թէպէտ շատ բան լսած էին, բայց հիմակ աչքով տեսածնին հազարապատիկ աւելի մեծ էր: Սակայն անօգուտ ողբերով եւ անգործ ցաւերով կորսնցընելու ժամանակ չկար. երկրին կարօտութիւնները շուտով դարման կ'ուզէին, եւ Թշնամիներուն տեսած ահեղ պատրաստութիւնները՝ պաշտպանութեան մեծամեծ միջոցներ կը պահանջէին: Պապայ՝ կայսերական օգնականութեամբ եւ իր նախարարներուն հետ գալովը՝ Մերուժան իր մեծամեծ ու հպարտական ակնկալութիւններէն զրկուելով՝ կատաղութեամբ իր զօրքերուն հետ ետ քաշուեցաւ ու եղածները Պարսից Թագաւորին իմացուց: Շապուհ աս լսելով եւ ամէն միջոցներով Հայաստանի տէրութիւնը պահել ուզելով՝ շուտ մը հրաման տուաւ որ խիստ շատ զօրք պատրաստուի եւ Մերուժանայ զնդին հետ միանալով՝ նորէն յարձակին, կայսերականները մերժեն ու Հայաստան նուաճեն:

Պարսից աս պատրաստութիւններն անմիջապէս Թէոդոսի իմացուցին: Մեծանձն ինքնակալը հրամայեց որ Ազդէ կոմսին զօրավարութեամբը մեծ բանակ մը Հայաստանեայց օգնութեան երթայ: Բայց իրենք ալ իրենց կողմանէ անհոգ ու անգործ չէին կենար: Արդէն իրենց անձկալի հայրենիքը մտնելուն պէս՝ մեծ քաջութեամբ բոլոր բերդերէն Պարսիկները մերժած եւ անոնց օտրած էին: Թագաւորին՝ Ս. Ներսիսին եւ նախարարաց հետ Հայաստան մտնելուն եւ աս առաջին յաջողութիւններուն լուրն անմիջապէս չորս կողմը համբաւուելով՝ շուտ մը ամէնքը նոր եռանդ մը ստացան, քաջալերուեցան, փախչողներն ու Թաքչոյնները ետեւէ ետեւ եկան ժողովե-

ցան, եւ այսպէս բուն կայսերական զօրքէն զատ՝
Հայոց մեծ՝ գունդ մ'ալ կազմուեցաւ: Աս գունդը
Սմբատ Բագրատունեոյն եւ Մուշեղ Մամիկոնեանին
տակ քիչ ատենի մէջ անանկ կարգաւորեցաւ, որ
Թագաւորն ու Ս. Հայրապետը եւ նոյն իսկ Յունաց
Տերէնտ ստրատելաոր տեսնելով՝ շատ ուրախացան
եւ զօրավարներուն մեծ գովութիւն տուին ու շնոր-
հակալութիւն մատուցին. առանձին Ս. Ներսէս իրենց
վրայ Աստուծոյ օգնութիւննու զօրութիւնը մաղթե-
լով՝ օրհնութիւն տուաւ:

Այսեր նորէն խրկած օգնութիւնն ալ շատ չու-
շացաւ, հասաւ առջի բանակին հետ միացաւ, եւ
բոլոր հայ ու յոյն զնդերը Նապատ լերան ստորտը
Ձիրաւ դաշտին վրայ եկան բանակեցան: Արդէն Մե-
րուժան ալ իր սպասած զօրքերն ընդունած ըլլա-
լով՝ ինքն ալ եկաւ բանակը Հայոց բանակին դիմա-
ցը դրաւ, եւ այսպէս ժամէ ժամ զարնուելու կը
սպասէին: Նոյն միջոցին Հայոց բանակին մէջ գլու-
նուող նախարարաց քաջ որդիքն՝ որոնք ինքնակամ
եկած զինուորած էին, եւ ամէնքն ալ հայրենեաց
ազատութեան ու անոր եղած չարիքներուն վրէժը
խնդրելու եռանդեամբ բորբոքած՝ չէին կրնար պա-
տերազմի նշանին տրուելուն սպասել, կարգերնէն
դուրս նետուելով՝ երկու բանակին մէջտեղը կ'ելլէին՝
իբրեւ թէ Պարսիկներն ասպարէզ կարգալով: Թշնա-
մեաց բանակին մէջ գանուող երիտասարդ իշխան-
ներն ասոր չկրնալով դիմանալ, անոնք ալ դիմաց-
նին կ'ելլէին, եւ այսպէս իբրեւ թէ բուն պատե-
րազմէն յառաջ՝ ազնուական պատանիներու պատե-
րազմ մը բացուելով, կը սկսէին սազին անդին ի-
րարու հետ զարնուիլ: Նոյն կռիւններուն մէջ Հայ
պատանիները մեծ քաջութեամբ Պարսից երիտա-
սարդներուն ետեւէն իյնալով՝ անոնցմէ խիստ շա-
տերը մեռցուցին:

Աս թեթեւ ճակատներն ու յաղթութիւններն՝ օրինակ մ'եղան մեծ պատերազմին՝ որն որ գրեթէ օր մը ամբողջ տեւեց եւ փառաւոր յաղթութեամբ պսակուեցաւ: Թագաւորն ու Ս. Ներսէս կ'ուզէին նոյն ճակատին ժամանակը բուն բանակին մէջ մնալ, մանաւանդ թէ Պապ անձամբ նաեւ պատերազմին գործակից բլլալ կը բաղձար. բայց կայսերական սպարապետն յանձն չառաւ. Մենք, ըսաւ թագաւորին, քեզի համար եկած ենք. թէ որ ճակատ մտնես եւ բան մը պատահելու բլլայ, ինչ երեսով կրնանք կայսեր առջեւն ելլել: Ուստի դուն մեծ եպիսկոպոսապետին հետ հոս լերան վրայ ել. թող ինք մեզի համար աղօթք բնէ եւ Աստուծմէ մեր զինուոցը յաղթութիւն խնդրէ, իսկ դուն վերէն դիտելով եւ ամենքնիս տեսնելով՝ մեզի յորդոր ու քաջալերութիւն կ'բլլաս քաջութեամբ պատերազմելու: Երկուքն ալ ակամայ հաւանեցան, եւան լերան վրայ, եւ Ս. Ներսէս՝ իբրեւ երկրորդ Մովսէս մը՝ իր հանապազատարած բազուկներն երկինք վերցուցած՝ սկսաւ ջերմաջերմ աղօթիւք Աստուծմէ խնդրել որ խնայէ իր ժողովրդեան եւ անաստուած հեթանոսներու ձեռք չմտնէ: Թագաւորն ալ միշտ քովը կենալով՝ անհանդարտութեամբ զօրաց պլլեւայլ շարժմունքներն ու պատերազմին ընթացքը կը զննէր, եւ միշտ Ս. Հայրապետին կ'աղաչէր որ աղօթքը յառաջ մատուցանէ:

Իսպառ երանելի Սաթուղիկոսն Աստուծոյ եւ իր ժողովրդեան մէջ միջնորդ բլլալէն եւ իր աղօթիւքն անոնց համար յաղթութիւն մաղթելէն զատ՝ նոյն օրը ուրիշ միջնորդութիւն մ'ալ բրաւ, այնպիսի դէպքի մը մէջ՝ որն որ առանց իրեն՝ անշուշտ շատ գէշ հետեւութիւններ կ'ունենար, եւ դուցէ բոլոր բանակին մէջ շփոթութիւն ու երկպառակութիւն պատճառելով՝ յաղթութիւնն ալ երկբայական կ'ը-

ներ: Այս ամենայն չարիքը Մեծն Ներսէս իր սո-
վորական խնամտութեամբն ու թագաւորին վրայ
դեռ նոյն ժամանակն ունեցած ազդեցութեամբը
խափանեց: — Քանի մը շարամիտ մարդիկ՝ Մուշեղ
Մամիկոնեանին վրայ նախանձելով՝ իրեն հաւատար-
մութիւնը Պապայ առջեւը տարակուսելի ըրած էին,
մինչեւ նաեւ միտքը դրած էին որ զինքը կ'ուզէ մեռ-
ցնել: Տկարամիտն Պապ աս շարախօսութեան ա-
կանջ կատելով, երբ որ նոյն զօրավարը պատերազմին
օրն առտուանց կանուխ՝ դեռ կռիւը չսկսած՝ եկաւ
իր զէնքերն ու նշանները Ս. Հայրապետին առջեւը
դրաւ, որ օրհնէ, թագաւորը նոյն վասնգաւոր մի-
ջոցին՝ կ'ուզէր զինքը հօն արգելուէ եւ շթողուէ որ
պատերազմի մէջ մտնէ: Իսկ քաջ զօրապետն՝ որ
հայրենեաց եւ թագաւորին վրայ իր կեանքը դնելու
եռանդով կը տոչորէր, տեսնելով որ իր հաւատար-
մութիւնն այսպէս տարակուսի տակ կը ձգուի, սաս-
տիկ տրտմելով եւ ուրիշ հնարք չգտնելով իր ան-
մեղութիւնը ցուցրնելու, Ս. Ներսիսին դիմեց՝ որ
իրեն համար միջնորդ ըլլայ: Պապ իսկզբան շուզեց
անոր միջնորդութեան լսել. բայց երբ որ երանելի
Աթոռիկոսը շատ աղաչեց եւ հաստատեց որ ինք
անոր համար երաշխաւոր կ'ըլլայ, թագաւորը՝ որն որ
նոյն ժամանակն իրեն ամենեւին մէկ խօսքէն չէր անց-
ներ, յանձն առաւ, միայն պահանջեց որ Մուշեղ
հաւատարմութեան երդում ընէ: Քաջ զօրավարն աս
բանս սիրով կատարեց, եւ թագաւորին ըսաւ որ
Կենօք եւ մահու՝ քեզի համար կեցած եմ, ինչպէս
որ իմ նախնիքս ալ՝ քու նախնեացդ համար: Միայն
թէ շարախօսները մտիկ մ'ըներ: Աս ըսաւ ու Ս.
Ներսիսին օրհնութիւնն առնելով՝ ուրախութեամբ
եւ նոր եռանդեամբ լեռնէն վար աճապարեց:

Առտուանց արեւն ելլելուն պէս՝ պատերազմը
սկսաւ եւ մինչեւ իրիկուն տեսեց: Պարսիկները չկը-

ցան Հայոց եւ Յունաց քաջութեան դէմ դնել, մանաւանդ քաջ նախարարաց, որոնց միայն ահեղ տեսութիւնը բաւական կ'ըլլար թշնամիները զարհուրեցընելու: Ամենէն աւելի քաջութիւն ընողներուն մէկն եղաւ Մուշեղ: Ասիկա խառնուրդին մէջ Ուսնայր Աղուանից թագաւորին պատահելով՝ որն որ հպարտութեամբ եւ յանձնապատանութեամբ Շապուհին խոստացած էր որ ինք միայն իր սեպհական գնդովը՝ Հայոց հետ գլուխ կ'ելէ, զարկաւ զինքը վիրաւորեց. բայց՝ արտաքոյ կարգի չափաւորութեամբ մը՝ չուզեց մեռցընել, ըսելով թէ Չեմ ուզեր որ իմ ձեռքովս՝ պսակեալ գլուխ մ'իյնայ: Նոյնպէս մեծ քաջութեան ցոյց տուաւ Սպանդարատ Աամսարականը, որն որ անով աւելի գովութեան արժանի է որ Արշակայ՝ իր բոլոր ցեղը ջնջելը բոլորովին մոռնալով՝ անոխակալութեամբ եկաւ անոր որդւոյն աթոռը հաստատելու համար իր կեանքը վտանգի մէջ դրաւ, եւ խառնուրդին ամենէն սաստիկ եղած տեղերը վազելով՝ թշնամիները կը ցրուէր կը փախցընէր:

Ընդհանրապէս բոլոր Հայոց գունդը ան օրն այնպիսի քաջութիւն ցուցուց, մինչեւ նոյն իսկ Պարսից թագաւորը իր զօրավարներուն բերնէն լսելով՝ չէր կրնար զարմանալէն ու գովելէն դադրիլ: Եւ մանաւանդ անոնց հաւատարմութեան ու տիրասիրութեան վրայ կը սխրանար. որովհետեւ ամէն անգամ թշնամի մը մեռցընելուն՝ Արշակայ համար ըլլայ, կ'ըսէին, իբրեւ թէ անոր գերութեան ու մահուան վրէժն առնելու համար: Աս պատճառաւս ալ երանի կու տար Հայոց թագաւորին՝ որ ասանկ հաւատարիմ, տիրասէր ու քաջ զօրք ունի: Հայոց եւ Յունաց զօրքն այսպէս միաբան եւ միասիրտ գործելով ու վերին օգնականութեամբ զօրանալով՝ Պարսից բազմաթիւ բանակը շարաշար յաղթուեցաւ:

դաշտերն անոնց դիակամբքը լեցուեցան, եւ մնացողները սաստիկ աւար թող տալով՝ փախչելու ածապարեցին:

Իսկ ամպարիշտ Մերուժանին ժամը հասած, եւ աշխարհքն աս հրեշէն ազատելու փառքը Սմբատ սպարապետին պահուած է եղեր: Մերուժան պատերազմէն ետեւ փախչելու ատեն՝ ձին վիրաւորելով, չէր կրնար շուտով յառաջ երթալ: Նոյն միջոցին Սմբատ՝ որ փախստականները կը հալածէր, ետեւէն հասնելով՝ քովինները կը մեռցընէ եւ զինքն ողջ կը բռնէ: Բայց մտածելով որ եթէ հետը բանակ տանելու ըլլայ, գուցէ Ս. Ներսէս կ'ազատէ, ուզեց անմիջապէս մեռցընել: Եւ զինքն իր շարութեան եւ ընդունայնական հպարտութեան համաձայն պատժով մը պատժելու համար՝ նոյն տեղն ըստ պատահման շամփուր մը գտնելով, առաւ սաստիկ տաքցուց, ու պսակ մը ձեւացընելով՝ անօրինին գլուխը դրաւ եւ ըսաւ. Որովհետեւ Հայոց թագաւորութեան ետեւէ կ'իյնայիր, ահաւասիկ ես զքեզ կը պսակեմ, ինչու որ Բագրատունի ասպետ ըլլալովս՝ ինձի կ'իյնայ Հայոց թագաւորները պսակել: Ասով անօրէնն անմիջապէս հողին փչեց: — Թէպէտ խիստ եւ անպատշաճ, բայց արդար պատիժ այսպիսի ազգատեաց ու տիրանենդ մարդու:

Պ Լ ՈՒ Խ Ե Ժ :

Ս . Ն Ե Ր Ս Ի Ս Ի Ն Մ Ա Հ Ը

Էջրակելէ Հայրապետին Հայաստան խորհասորելու համար սանկցած
Ինքնը : — Թափասորին շարաշար շարքը : — Ս . Ներսէս շար սն-
թա՛ շինքը իրապէս իրա՛ ինքնը ինքնը ինքնը ինքնը ինքնը ինքնը :
— Պապ Վառճակ շինքը շարքը : — Թափ ինքնը : — Ս .
Ներսէսին լերէն իրապէս — հաճը : — Բարձր Հայաստան իր հա-
հասան լրայ սափ Վառճակ :

ՉԻՐԱԿ Երկրորդ ժամանակ Հայաստանի արտաքին
Թշնամիները հետապնդած էին , ներքին խաղաղութիւնը
հաստատուած , Պապ թաղաւորը հանդարտութեամբ
իր հայրենի աթոռը նստած : Բայց սրբազան երկայն
ատեն պէտք էր վերջին ժամանակները պատահած
անթիւ անհամար շարեայ դարձան ասանկը , ե-
ղած խորունկ վերքերը բժշկելու եւ ամենուն աշքին
արցունքը սրբելու համար : Ս . Ներսէս դարձեալ իր
պրահան սրտովն ու հայրական զթոփը մեջ մանե-
լով՝ սկսաւ բարձր դարձեալ ամեն բան նորոգելու
շիտկելու , կարգաւորելու ետեւէ իջնալ : Այս ինչպէս
խկզբանէ կաթողիկոսութեան բարձր աստիճանը հա-
սած ատեն՝ նոյնպէս հիմակ ալ զխաւորարար աղ-
քասներուն , հիւանդներուն , ծերերուն , ցաւաւար-
ներուն , վերասորներուն վրայ մեծ հոգ կը ասներ :
Միանգամայն առանձին կերպով մը կը ջանար ա-
րուած եկեղեցիները նորէն շինելու , գոցուած գոյրոց-
ները նորէն բանալու եւ ամեն տեղ հոգեւոր մշակ-
ներ հասցընելու : մանաւանդ որ վերջին խաւովութեանց
ատենները ժողովրդեան բարձր մեծապէս ապականած
բլրով՝ ամեն ժամանակեւ տեղի կրճական նպաս-
տից կարտաւորին կար : Արանեղի Կաթողիկոսին
ջանքովն ու խրատներովն՝ Պապ թաղաւորն իր հորը

նախարարներէն յափշտակած ինչքերն ու կալուածները եւս գարձընելով եւ ամէն մէկուն տուած ֆեսաները կարելի եղածին շափ փոխարինելով՝ ըստ մասին անոնց սիրար շահեցաւ : Ասանկով իր եւ նախարարաց մջ սէր ու միարամութիւն հաստատուելով՝ ժողովարդն ալ հանդիսացաւ եւ ամէնքն ետեւէ կ'ըլլային անցեալ շարիքները կամաց կամաց անհետ ընելու :

Այս ամենայն տեսնելով՝ Ս. Հոյրապետին սիրար մեծ միտքարութիւն կը զգար եւ շնորհակալ կ'ըլլար Աստուծոյ : Բոցց միայն մէկ բան մը կար, որ աս իր միտքարութեան սաստիկ արամութիւն կը խառնէր եւ մեծ ցաւ կը պատճառէր իրեն, սոս ինքն՝ Պապ թագաւորին անարժան վարքը, որն որ բոլոր ժողովրդեան եւ մանաւանդ նախարարաց ալ շար օրինակ ու գայթակղութեան առիթ կ'ըլլար : Յեծն Ներսէս շատ անգամ հոյրարար խրատ կու տար իրեն որ խելքը զլուխը բերէ. իր հօրն ու պապուն օրինակներն առջեւը բերելով եւ անոնց շարաշար կատարածը յիշեցընելով՝ կը յորդորէր որ քրիստոնեայ իշխանի արժանի վարք ունենայ : Աս կերպով խել մը տան յառաջ երթալէն ետեւ՝ տեսնելով որ ամենեւին օգուտ մը չ'ըներ, սկսաւ նաեւ խափս յանդիմանել ու սաստել, մինչեւ սպառնացաւ որ եթէ կարգի չիգար, իր պարտքին համաձայն՝ զինքը եկեղեցւոյ հաղորդութենէն կը կարէ : Վերջապէս տեսնելով որ աս ալ ազդեցութիւն մը չ'ըներ, սպառնալիքը կատարեց, եւ թագաւորին հրապարակական շարեաց համար՝ եկեղեցի մանելու շէր թողար :

Պապ աս իր ամէն կերպով արժանի եղած պատուոյն վրայ սաստիկ բարկանալով եւ ուզելով վրէժ առնել, մտքը դրաւ որ Ս. Պաթմաղեկոսը մեռցընէ, որպէս զի միանգամայն ամէն սանձէ ազատելով՝ իր ամենթալի կիւրքերը կարենայ հաճեցընել : Ան սաստիճանի հասած էր իր շարադործութիւնը, որ աւելի

ուզեց դժոխային ապերախտութեամբ մը իր բարե-
բարը, իր թագաւորական դահլը կործանմանէ կան-
գնողը, զինքն արքունական պատուոյ հասցընողը կեան-
քէն զրկել, քան թէ իր մոլութենէն ետ կենալ:
Բայց աս անօրէնութեան գործքը յայտնապէս կատա-
րելու չէր յանդգներ: Թէոգոս կայսեր՝ Ս. Ներսիսին
վրայ ունեցած սէրն ու յարգութիւնը ճանչնալով՝
գիտէր թէ անոր եղած փոքր նախատինքն ալ իրեն
ծանր կը նստի, թող թէ մահը: Միանգամայն իր
ժողովրդէն ու մեծամեծներէն ալ կը վախնար, որով-
հետեւ մեծին ու պզտիկին, ազնուականներուն ու
շինականներուն, ամենուն միօրինակ սիրելի էր երա-
նելի կաթուղիկոսը: Իր մեծամեծ ու չքնաղ առա-
քինութեանց, իր սքանչելի իմաստուն առաջնորդու-
թեան եւ հայրենեաց ըրած մեծամեծ ծառայութիւն-
ներուն համար՝ ամէնքը զինքը հօր պէս կը սիրէին
ու կը մեծարէին. մէկ խօսքով՝ բոլոր Հայաստան իր-
մէ կախում ունէր: Արդ չկրնալով անոր յայտնի ձեռք
դպցընել, միտքը դրաւ որ թոյն տայ, յուսալով թէ
աս կերպով իր չարագործութիւնն երեւան չ'ելլեր:

Արպէս զի աս իր անօրէն խորհուրդն ապահովու-
թեամբ գլուխ հանէ, սկսաւ անանկ ձեւացընել որ
երանելի Հայրապետին խօսքերը վրան ազդեցութիւն
ըրին, ուստի եւ ինք զինքը շտկել, մինչեւ նոյն ա-
տեն ըրածներուն վրայ ապաշխարել կ'ուզէ: Քիչ մը
ժամանակ ասանկ կեղծաւորելէն ետեւ՝ անգամ մը
զՍ. Ներսէս Եկեղեցաց գաւառը Խախ աւանն իր ա-
պարանքը հրաւիրեց, եւ հոն սեղանի վրայ ինք ան-
ձամբ գինի մատոյց, որուն մէջ թոյն խառնած էր:

Վաղիւ թէ վրան ժամ մ'անցած էր, մէյ մ'ալ
սկսաւ թոյնն իր ազդեցութիւնն ընել, որմէ Ս. կա-
թողիկոսն եղածն իմանալով, առանց այլայլելու՝ սկսաւ
Աստուծոյ շնորհակալ ըլլալ որ զինքն արժանի ըրաւ
այսպէս իր պաշտաման պարտքը հաւատարմութեամբ

կատարելուն, նախանձաւորութեամբ աստուածային փառաց պաշտպան ու վրէժխնդիր ըլլալուն համար՝ մահ կրելու: Միանգամայն զթագաւորն ալ ծանրութեամբ մը յանդիմանելով եւ ըրած չարիքին մեծութիւնն առջեւը դնելով՝ ըսաւ. Եթէ իմ կեանքս ծանր էր քեզի եւ զիս սպաննել կ'ուզէիր, թող յայտնապէս հրապարակաւ մեռցնել տայիր. զքեզ ո՞վ կ'արգելէր կամ կամացդ ո՞վ դէմ կը դնէր: Աերջապէս Քրիստոսի օրինակին համեմատ՝ խնդրելով Աստուծմէ որ զինքը սպաննողին թողութիւն տայ եւ իր մահն իբրեւ անոր գործած չարիքներուն փոխարէն ընդունելով՝ զանիկա ըստ արժանւոյն չպատժէ, սեղանէն ելաւ իր տեղը դնաց:

Չիկրնար պատմուիլ թէ ինչ աստիճանի սաստիկ այլայլութիւն ու շփոթութիւն պատճառեց աս դէպքը բոլոր բազմականաց վրայ: Ամենէն մեծ ու պատուաւոր նախարարներն անմիջապէս թագաւորական սեղանը թող տալով՝ Ս. Հայրապետին քովն ածապարեցին եւ կը ջանային որ եթէ կարելի է նէ՝ հնարք մը գտնեն զինքը մահուան ձեռքէն յափշտակելու: Շատերը կ'առաջարկէին որ դեղթափ առնէ. բայց Ս. Ներսէս զգալով որ բանը բանէն անցած է, ամենայն ինչ պարապ է, չուզեց առնուլ: Եւ դարձեալ՝ այսպիսի կերպով մեռնելուն վրայ Աստուծոյ շնորհակալութիւն կը մատուցանէր: Տեսնելով որ քովիններն անհնարին ցաւոց ու տրտմութեան մէջ ինկած են, զիրենք կը մխիթարէր ու կը սփոփէր եւ դրեթէ աս վերջին վայրկենին մէջն ալ ինք զինքը բոլորովին մոռնալով եւ միայն ներկայ եղողներուն ու բոլոր երկրին բարիքը հոգալով՝ վերջին կտակն ընելու պէս՝ զիրենք կը խրատէր ու կը յորդորէր որ չարիքներէ ետ կենան, պատուիրանապահ ըլլան, իրենց հպատակներուն աղէկ նային, մէջերնին՝ միաբան եւ թագաւորին հաւատարիմ կենան:

Ըստնք մեծ եռանդեամբ խոսելու ասեմն՝ բոլոր ներկայ եզրգնեցան սիրան ելլելով՝ կու լային ու կը հեծէին: Մէյ, մ'ալ սկսաւ երանելի Ասթուղիկասին բերնէն սաստիկ արին գալ, սնն սր երկու ժամու շափ տեսեց: Գազրելէն ետեւ՝ սկսաւ Սուրբը վերջի ժամանակները Հայաստանի մէջ պատահելիքներուն վրայ մտադարեական հոգւով խոսիլ, գարձեալ թագու թիւն ինգրեց Աստուծոյ իրեն մահ՛ պատճառարեցան համար, բոլոր իր ժողովուրդն ու հայրենիքը Աստուծոյ խնամոցը յանձնեց, սրհնեց ներկայ եզրգնեքը եւ աշուրներն երկինք վերջնելով՝ Յէր Յիսուս, ընկալ զոգի իմ, բտա ու սուրբ հոգին արձակեց: Բայց պնայիսի հանդարտութեամբ եզու հոգւոյն մարմնէն բաժնուիլն ու մեռնելէն ետեւ երեսներն պնայէս զուարթ էին, մինչեւ քովիները կը կարձէին թէ ասկաին կենդանի է եւ ծածակ ազնիք կ'ընէ: Ախր՛պէս քիչ մը ետքը սխալմունքնին տեսնելով եւ բրած մեծ ու աննորսգելի կորստանին իմնուալով՝ սկսան բարձրացնին լալ ու սզալ Լալ պնայիսի կերպով մը իրենց քաջ հովին, իմաստան խրատիչն, սգնականն ու պաշտպանը եւ հայրենեաց հոգը կորսնցընեցան համար:

Իսկ թագասորը՝ սրպէս զի բրած անարեան թիւնը գէթ ամենան ասջեւք շէրասարակուի, գրասնց մեծ ցաւ կը կեզճասորեր: Անոր համար ալ հրամայեց սր արտաքց կարգի փաստասր շքով յազարկասորութիւն ըլլայ: Բայց արգէն ասանկ հրամանի կարտաթիւն չկար: ամէն մտրգան՝ Արբոյն վրայ ունեցած սերն ու յարգութիւնը բաւական էր իրեն արժանի թագում ընելու: Աւասի եւ ասին զինքը մեծափայելուշ պաշտամանը Թիլ ասնը տարին եւ հան թագեցին, նոյն իսկ թագասոյն ալ անձամբ յազարկասորութեան ներկայ էր: Իսկ մարմնոյն ետեւէն զազոյ ժողովուրդեան ու նախարարաց եւ մեծ ամեծաց բազմութեան


Թիւն ա համարը չկար, շորս կազմանէ՝ ուր որ կը լսէին, կը վազէին կա գային՝ որ իրենց սիրելի Հորը քանէ անջնչացեալ մարմինը մէյ մ'ալ տեսնեն:

Ասոց առաւ քովանդակ Հայաստան իր վրայ, առ մենքը իւր արանութեան մէջ ինկան, բարբաբն իրենէ մէկ բերնէ կ'ըսէին թէ Հայոց փառքը վերջնացաւ, վասն զի Արգաթն առ երկրես վերջուեցաւ: Աշխարհք ա նախարարք՝ սրանք իր բրանձ մեծամեծ բարիքնէրը, զերենք իրարաւ հետ մարանելլա, թաղաւորին հետ հաշտեցընելլա, նոյն իսկ թաղաւորական ակումբ կարձանաննէն կանգնելլա կը յիշէին, եւ առանձինն մեղքերնին կը բերէին կարսընցաւցած ինչքերնին առաւելումընին իր միջնորդութեամբը նարէն մեք բերնին, մարմնքերով կը զբաղէին: Ալ մեր երկրին բանք բաւաւ, սրովհետեւ չէ թէ միայն անպարաւ առ բին թախեցաւ, հապա նաեւ իր պարտքը կառարելլան, Աստուծոյ փառաց վեհաթիւնդեր բլլալան համար մեաւա Արգաթը: Իսկ Հայոց սպարապետք՝ սն որ մեծաւանդ վերջին մեծ յազմութիւնը Արգոյն ազգթից ա սրհնութեան պարազ կը սեպեր, կը զբաղեր որ Ասիէ ետեւ մենք գլուխնին պիտի չկրնանք վեր վերջընել, ալ թշնամեաց վրայ յազմութիւն ընելը շունինք: Վերջնայէն Հայաստանի մէկ ճայրէն մէկալ ճայրք՝ ամեն մարդ կը սգար ա կ'սգար:

Աս լային կ'սգային զիտաւորարար ազքաւար եւ հրանդք, ճերք եւ սրք, վասն զի զՆերսէս կարսընցընելով՝ ամեն բան կարսընցաւցին, սրովհետեւ ինք մեծանելին ետեւ՝ իրենց համար բրաննէրն ալ կամոյց կամոյց սկանն ջնջաւիլ: Ուր որ Ա. կաթողիկոսին կենդանութեան ասեն՝ բարք Հայաստանի մէջ ազքաւա մը չէր տեսնուեր, հիմակ ապին անպին ճամբաները առաւելաւորով լեցան էին, սրանք մարտով կեանքերնին ճարելլա ետեւէ կ'իջնային: Այնպէս հրանդնէրն ա ճերքն անպարման եւ առանց

Հոգաբարձուի մնալով, կը ստիպուէին ելլել ան ապաստանարաններէն՝ զորոնք Ներսիսի Հայրախնամ գութն իրենց համար կանգնած էր: Օտարներն ու պանդուխտներն ալ անկէ ետեւ չէին գտներ ան հիւրամեծար տները՝ զորոնք Ս. Հայրապետին Հոգացողութիւնն ու խնամակալութիւնը աշխարհին չորս կողմը հիմնած էր: Աւերջապէս իր մեռնելէն վերջը ետեւէ ետեւ սկսան վերնալ իր բրած կարգաւորութիւններն ալ. եկեղեցական կարգերը նուաստացան. ժողովրդեան բարքն ապականեցաւ, իշխանք սկսան կամաց կամաց իրենց առջի ընթացքը բռնել:

Այս ամենայն տեսնելով՝ աւելի եւս կը ցաւէր ամէն մարդ ան սքանչելի Հայրապետին վրայ, որն որ այնչափ տարի իր իմաստուն կառավարութեամբն ու հայրական խնամքովը Հայաստան երջանկացրնելէն ետեւ՝ մեռաւ ամօթալի մոլութեան եւ զարհուրելի ապերախտութեան զոհ եղած: Մեռաւ եւ բաժնուեցաւ աշխարհէս, բայց յաւիտենական վարձուց անթառամ պսակն ընդունելու համար ան առատատուր Արձատրիչէն, որն որ իր անուամբն աղքատի մը տրուածն իրեն կը սեպէ: Մեռաւ եւ բաժնուեցաւ մեզմէ, բայց իբրեւ ժառանգութիւն թող տալով իր բարի օրինակները, եւ իր յիշատակն անջինջ մնաց իր որդւոցը մէջ: Մինչեւ հիմա գրեթէ հնգետասան դար վերջը դեռ կենդանի է անոնց սրտին մէջ՝ որոնք ճշմարիտ աղգասիրութեամբ վառուած ըլլալով, կ'իմանան Աղգերնուս բրած բարիքներուն մեծութիւնը, եւ մինչեւ աշխարհքիս վերջը կենդանի պիտի մնայ եւ օրհնութեամբ յիշատակուի իր անունը:



Յ Ե Ն Կ

ԳԼ. Ե. Մեծն 'Ներսէս' մինչեւ կաթողիկոս ընտրուիլը	3
ԳԼ. Բ. Ս. 'Ներսէս կաթողիկոս կ'ըլլայ	9
ԳԼ. Գ. Ս. 'Ներսիսին ըրած կարգաւորութիւններն ու բարերարութիւնները	16
ԳԼ. Դ. Մեծն 'Ներսէս Կոստանդնուպոլիս կ'երթայ ու կայսրը թագաւորին հետ կը հաշտեցընէ	24
ԳԼ. Ե. Գնեւլայ սպանութիւնը	31
ԳԼ. Զ. Արշակաւան քաղաքն ու իր հետեւութիւնները	40
ԳԼ. Է. Ս. 'Ներսէս արսոր կը խրկուի	51
ԳԼ. Ը. Արշակայ գերութիւնն ու մահը	57
ԳԼ. Թ. Պապայ թագաւորելը	66
ԳԼ. Ժ. Ս. 'Ներսիսին մահը	76

ԱՍ ՏԵՏԲԱԿՆԵՐՈՒՆ

ՄԻՆՁԵՒ ՀԻՄԱ ԵՂԱԾ ՀԱՏՈՐՆԵՐՈՒՆ

ՅՈՒՅԵԿԸ

- Ա. Ճառ վասն Հայրենասիրութեան :
- Բ. Քր. Կոլոմբոս, կամ Ամերիկայի գտնուիլը . Ա :
- Գ. Պիոս Թ.ին մէկ ասենախօսութիւնը եւ Աւստրիայի
Եպիսկոպոսաց հովուականը :
- Դ. Քր. Կոլոմբոս . Բ :
- Ե. Համառօտ օրերեւութարանութիւն :
- Զ. Քր. Կոլոմբոս . Գ :
- Է. Բարոյական վէպեր, կամ աղօց սիրալը կրթելու
յարմար պատմութիւններ . Ա :
- Ը. Յովհաննա ա'Արգ, կամ Օրլէանի օրիորդին պատ-
մութիւնը :
- Թ. Առողջութեան կանոններ :
- Ժ. Բարոյական թատրոններ . Ա :
- ԺԱ. Տրդատայ առանձնանալը, վերջին օրերն ու մեռ-
նիլը :
- ԺԲ. Արեւելեան Յիշատակագիրներ . Ա :
- ԺԳ. Բարոյական վէպեր . Բ :
- ԺԴ. Փեռն . Գորգէզ, կամ Մէքսիկայի առնուիլը . Ա :
- ԺԵ. Գաստիարակ մանկանց, կամ բարոյական խորհր-
դածութիւնը աղօց համար :
- ԺԶ. Փեռն . Գորգէզ . Բ :
- ԺԷ. Բարոյական վէպեր . Գ :
- ԺԸ. Փեռն . Գորգէզ . Գ :
- ԺԹ. Ներսէս Մեծ եւ Հայաստանի վրայ ունեցած ազ-
դեցութիւնը :

Ուզողն՝ իւրաքանչիւր՝ հատորը զատ ալ՝ կրնայ ստնել :

